

5987

58(075)

U-25

2010

2002

58075
0-25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑ-ԽՈՐՀՄԱՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարեն բոլոր յերկրների, միացե՛ք.

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք
ԱՇԽԱՐՀԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՄԱՍՆ Գ.

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սուազի և աստիճանի դպրոցների նամար

հազմեց
ՆԻԿ. ՍԱՐԳՍՅԱՆ

530
99-ԱԱ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՍՈՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ Նո 70.

Յերեվան - 1925.

58(075)

U-25

530
99 - 00

Պրոլետարեներ բոյոր յերկրների, միացե՛ք.

ԴԱՍԱԳԻՐՔ

ԱՃԻԱՐՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՄԱՍՆ 9.

ԲՈՒՀԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջին տօսինանի դպրոցների նամար

Կ Ա Գ Մ Ե Գ

ՆԻԿ. ՍԱՐԳՍՅԱՆ.

58

ВЪСТОРЪ СЪЩОДЪВЪРЪНЪ



3143

4043

二〇

ՊԵՏՈՎԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՑԵՐԵՎԱՆ-1923

29/96-Ա.2

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Բնագիտական առարկաները, մանավանդ կենդանաբանությունն ու բուսաբանությունը, այսինքն կենսաբանական դիսցիպլիններն անցնում եյին մինչև վերջին ժամանակներս թե առըստկան և թե միջնակարգ դպրոցներում նկարագրական յեղանակով։ Դասի նյութ ծառայող կենդանու կամ բույսի մասին տրվում և պահանջվում եյին արտաքինը, հաղվագյուտ դեպքում նաև ներքինը շոշափող միքանի նկարագրական տեղեկություններ, շատ անգամ անկապ, չոր ու ցամաք և զուրկ միանգամայն պատճառական հիմքերից։ Այդ վոգով եյին կազմված նաև այդ առարկաներին վերաբերող դասագրքերը։ Խոսք չկա, վոր այդորինակ դասավանդությունն անկարող եր զարգացնել աշակերտի միտքն ու հոգին։ Նա ծանրաբնում եր միայն հիշողությունը, և դրա հետևանքը լինում եր այն, վոր աշակերտը կորցնում եր իր սերն ու հետաքրքրությունը դեպի առարկան և այնքան աշխույժ ու զբաղեցնելով գիտությունները դառնում եյին ձանձրալի ու քննեցնող։

Այժմ, սակայն, շնորհիվ մի շարք գիտնական մանկավարժների՝ ընապիտական առարկաների դասավանդումը դրված և նոր ուղիի վրա, նկարագրությունն այժմ յերկրորդական տեղ և բընում և պատճառականությունը, վոր առաջ այնքան հեշտությամբ անտես եր առնվում, կազմում և արդեն դասավանդության առանցքը։ Դա կենսաբանական տեսակետն ե. կենդանին կամ բույսն այդ տեսակետով ավելի շուտ բացատրվում են, քան նկարագրվում։ Մեր ներկա դասագիրքը կազմված և հնաց այդ ուղղությամբ։ Այստեղ նկարագրությանն այնքան տեղ և հատկացրած, վորչափ անհրաժեշտ և յեղել բույսի առանձնահատկությունները բացատրելու համար։

Դասագիրքը պարունակում և իր մեջ բույսերի մորֆոլոգիան, բնախոսությունը և սիստեմատիկը, անշուշտ չափագանց տարրական ձևով։ Սկզբում զետեղված և մորֆոլոգիան և բնախոսությունը և աղա սիստեմատիկը։ Սիստեմատիկը բնավ լրիվ չե։ Հիշատակված են միայն նշանավոր ընտանիքներից ամենահայտնի բույսերը, այն ևս նրանք, վորոնք բննում են նաև մեզ մոտ և կարող են աշակերտության անմիջական դիտության նյութ։ Գառնալ, Բնախոսական յերկույթները բացատրող փորձերից եւ



1980-58

բնարմած են այնպիսիները, վորոնք հեշտությամբ կատարելի չեն
մեր պայմաններում և միանգամայն մատչելի չեն: Փորձերի և
դիտողության ժամանակ աշակերտությունը պետք է յերեան հա-
նի գործոն մասնակցություն: Այդ ճանապարհով միայն նա կարող
է բնության մասին ճշմարիտ զաղափար կազմել: Նա ինքը պետք
է ցանի սերմեր և հետեւ նրանց ծլման և զարգացման ամբողջ
ընթացքին, դա կղարգացնի նրա մեջ վոչ միայն դիտողականու-
թյուն, այլ և առաջ կրերի նրա մեջ վառ հետաքրքրություն ու
սեր դեպի առարկան:

Դասարանական աշխատանքների հետ միասին պետք է անդի-
ունենան նաև դրուանքներ, վորտեղ աշակերտը կարող է բույսը
դիտել իր հարազատ միջավայրի մեջ: Զբոսանքների ժամանակ
աշակերտը կծանոթանա բույսերի բազմազան հարմարացումներին,
նույնպիս և կսովորի նրանց ճանաչել: Պետք է սովորեցնել նաև
հերքարյումներ կազմել: Դա յերեխաների համար կլինի մի վերին
աստիճանի սիրելի զբաղմունք:

Ավելորդ չենք համարում հայտնել վոր ներկա դասագիրքը
կազմելիս խոշոր չափով ոգտվել ենք Տրոյանովսկու, Շմայլի-
Վագների և այլոց դասագրքերից:

Միկ. Սարգսյան

ՑԱՆԿ

Կազմողի կողմից
Ցանկ

III

V

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կենգանի և անկենդան աշխարհներ
Բույսերն ևս կյանք ունեցող մարմիններ են

I

2

ԲՈՒՅՍԻ ԿՅԱՆՔԸ

Սերմի կազմությունը յեվ ծլումը.

- | | |
|---------------------------------------|----|
| 1. Սերմի կազմությունը | 6 |
| 2. Սերմի ծլումը | 7 |
| 3. Շաքիլների նշանակությունը | 8 |
| 4. Սիսեռի սերմի կազմությունը և ծլումը | 9 |
| 5. Ճորենի սերմի կազմությունը և ծլումը | 10 |
| 6. Ամփոփում | 12 |

Ծլման անհրաժեշտ պայմանները.

- | | |
|---------------------------------------|----|
| 1. Ծլման ունակությունը | 13 |
| 2. Զուրն իբրև անհրաժեշտ պայման | 13 |
| 3. Ողն իբրև անհրաժեշտ պայման | 16 |
| 4. Զերմությունն իբրև անհրաժեշտ պայման | 18 |

Բույսի ներքին կազմությունը.

- | | |
|-----------------------------------|----|
| 1. Բջիջ | 19 |
| 2. Բջիջների մեծությունը | 20 |
| 3. Բջիջի մաշկը և պարունակությունը | 20 |
| 4. Բջիջների բազմացումը | 22 |
| 5. Բջիջների ձևերը և հյուսվածքները | 23 |

Արմատ.

- | | |
|---------------------------------------|----|
| 1. Արմատի աճումը | 25 |
| 2. Արմատի ծայրապատյանը և մազարմատները | 26 |
| 3. Արմատների տեսակները | 27 |

4. Արմատի գերը	28
5. Արմատային ճնշումը	29
Ի՞նչ է ստանում քոյսը հողից.	
1. Բույսի բաղադրությունը	31
2. Զըլյին կուլտուրա	32

Տերեվ, տերեվի կազմությունը.

1. Տերեների արտաքին ձևը	34
2. Տերեկի ներքին կազմությունը	38

Տերեվն իբրեւ մննդառության գործարան.

1. Ածխածնի յուրացումը տերեների միջոցավ	40
2. Ոսլայի առաջացումը	42
4. Լույսի նշանակությունը բույսի կյանքում	45

Տերեվն իբրեւ շնչառության յեվ ջրի գոլորշիացման գործարան.

1. Բույսերի շնչառությունը	46
2. Զըլի գոլորշիացումը տերեներից	48
3. Գոլորշիացման արագացման և դանդաղացման համար տերեների ունեցած հարմարությունները	50

Ցողուն, ցողունի աճումը յեվ ձեվերը.

1. Ցողունի աճումը	51
2. Ցողունի ճյուղավորումը	52
3. Ցողունի տեսակները	53

Ցողունի կազմությունը յեվ ջրի ու մննդարար նյութերի շարժումը նրա միջով.

1. Ցողունի կազմությունը	55
2. Զըլի և սննդարար նյութերի շարժումը ցողունի միջով	58
3. Ի՞նչու յե ջուրը բարձրանում ցողունի միջով	60

Ցողունն իբրեւ բազմացման գործարան.

1. Ստորեկը ցողուններ	60
2. Բազմացումն շողերով և մատներով	63
3. Պատվաստ	64

Ժաղիկ, ժաղիկների կազմությունը.

1. Բալմնու ժաղկի կազմությունը	66—67
---	-------

Ժաղիկների փոշոտումը.

1. Ծաղիկների փոշոտումը և պտղի ու սերմերի առաջացումը	70
2. Խաչաձև փոշոտում	71
3. Ծաղիկների փոշոտումը միջատների միջոցով	72
4. Ծաղիկների փոշոտումը քամու միջոցով	74

Պտուղ յեվ սերմ.

1. Պտուղների զանազան տեսակները	75
2. Պտուղների և սերմի տարածումը	76

ԾԱՂԿԱԲԵՐ ԲՈՒՅՍԵՐ

Տանձենի	80
Վայրի վարդենի կամ մասրենի	83
Գազար	85
Բողկ	88
Խաղողի վորթ	90
Լոբի	93
Ցիլի	96
Խտուտիկ	100
Կարտոֆիլ	103
Սոխ	106
Ցոլեն	107
Շամի	111

ՍՊՈՐԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

Պտեր	114
Մամուռ	118
Ջրիմուններ	121
Շամպինոն	123
Քարաքոս	126
Բակտերիաներ	129

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆԴԱՆԻ ՅԵՎ ԱՆԿԵՆԴԱՆ ԱՇԽԱՐՀՆԵՐ.—Ամբողջ ընությունը բաժանվում է յերկու աշխարհների՝ կենդանի և անկենդան։ Անկենդան աշխարհի մարմիններն են՝ ողը, ջուրն ու յերկիրը, իսկ կենդանի աշխարհի մարմինները՝ բույսերն ու կենդանիները։ Մենք պետք են զբաղվենք կենդանի աշխարհի ուսումնասիրությամբ և պետք են սկսենք բույսերից։

Բայց նախ քան այդ պարզենք, թե ինչով են զանազանվում կենդանի աշխարհն անկենդանից։ Ինչ վերաբերում է կենդանիներին, այդ գանազանությունը մենք խոկոյն կարող ենք ասել։ Ամենից առաջ կենդանիները կերպարվում, սնվում են և յերբ մնում են առանց կերպի, սովոր մեռնում են. այդպես չեն անկենդանները. Նրանք սննդի կարիք չունեն։ Անսղի նման կենդանիների համար անհրաժեշտ ենակ ողը. կենդանիները շնչում են ող և առանց դրան խեղդվում են, իսկ անկենդանները չեն շնչում։ Բացի դրանից, կենդանիները բազմանում են և աճում. Նրանց մի մասը կենդանի ձագեր և հանում, մյուսները ձգեր են ածում, վորոնցից հետո զարձյալ ձագեր են դուրս գալիս և այդ ձագերը սնունդ ստանալով՝ աճում մեծանում են և նմանվում իրենց ծնողներին։ Սյդպես չեն անկենդանները. Նրանք վոչ բազմանում են և վոչ ել աճում։ Սակայն ամենամեծ տարբերությունը, վոր տեսնում ենք կենդանիների և անկենդանների մեջ, այդ այն ե, վոր կենդանիները զգում են և իրենց կամքով կարող են շարժումներ կատարել։ Նրանք, որինակ, զգում են, վոր քաղցած են և շարժվում են այս ու այն կողմը կերպակուր գտնելու համար, զգում են ցուրտ, տաքություն և աշխատում են ապաստան զանել հարմա-

ըավոր տեղերում, զգում են նաև ցավ և փախում են, յերբ ծեծում են կամ յերբ թշնամիները հալածում են նրանց: Անկենդանները, սակայն, վոչ զգում են և վոչ ել իրենց կամքով կարող են վորեն շարժում կատարել: Վերջապես, բոլոր կենդանիներն ապրելով վորոշ ժամանակ՝ վերջը մեռնում են, մինչդեռ անկենդանները մեռնել չունեն և այդ շատ հասկանալի յե. նա վոր չի ապրում, չի յել կարող մեռնել: Ուրեմն, կենդանիները մնվում են, շնչում են, բազմանում են, աճում են, զգում են, շարժում են և վերջապես մեռնում են, իսկ անկենդանները զուրկ են բոլորովին այդ հատկություններից: Ահա այն զանազանությունը, վոր տեսնում ենք կենդանիների և անկենդանների մեջ:

ԲՈՒՅՍԵՐՆ ՅԵՎՍ ԿՅԱՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՆ.— Տեսնենք այժմ բույսերն ել կյանք ունեցող մարմիններ են, այսինքն նրանք ել ունեն այն բոլոր հատկությունները, ինչ վոր կենդանիները, թե վոչ:

Վոր բույսերը կերակրվում, սնվում են, այդ հայտնի յե ամենքին, բոլորս ել դիտենք, վոր պարարտ հողում բույսերն ափելի լավ են աճում, մեծանում, քան կավային և ավազային հողում: Պատճառը հասկանալի յե. մի տեղ բույսերը գտնում են առատ սնունդ, մյուս տեղում վոչ: Գիտենք նաև, վոր բույսերը բազմանում են և աճում: Նրանք ծաղկում են և սերմեր տալիս, այդ սերմերն ընկնելով հողի մեջ՝ ծլում են և առաջ բերում նոր բույսեր: Վերջապես գիտենք, վոր բոլոր բույսերն ել վորոշ ժամանակ ապրելուց հետո՝ չորանում են, մեռնում. Մեզ մնում ե ցույց տալ այժմ, վոր բույսերն ևս կենդանիների նման շնչում են, զգում են և կարող են շարժումներ կատարել: Վոր բույսերը շնչում են, ցույց ե տալիս հետեւյալ փորձը. վերցնում են մի լայնաբերան անոթ, մեջը դնում տերեներ ունեցող միքանի ճյուղ և անոթի բերանը փակելով՝ դնում են մի մութ տեղ: Միքանի ժամ անցած՝ անոթի բերանը բացում են և մեջը մտցընում մի այրվող փայտիկ. փայտիկն անմիջապես հանդչում ե: Այդ նշան ե, վոր անոթի մեջ թթվածին չկա:

Պարզ ե, վոր թթվածինը կլանել են այնտեղ գտնվող ճյուղերը: Այսուհետեւ յերբ անոթի մեջ ածում են կրածուր և անոթի բերանը փակելով՝ սկսում են անոթը թափառ այս ու այն կողմը, թափանցիկ կրածուրը պղտորվում ե և կաթի գույն ստանում: Այդ ել նշան ե, վոր անոթի մեջ կա մեծ չափով ածխաթթու գագ: Կնշանակե, ճյուղերը վերցնում են անոթի մեջ յեղած ողից թթվածինն և արձակում իրենցից ածխաթթու գագ: Շնչառության ժամանակ կենդանիները նույնն են անում, այսինքն ողից վերցնում են թթվածին և արձակում ածխաթթու գագ: Ուրեմն, բույսերն ևս շնչում են:

Մնում ե զգալը և շարժումներ կատարելը. յեթե բույսերն այդ յերկու ընդունակություններն ել ունենան, այն ժամանակ նրանք ոժտված կլինեն արդեն կենդանի ելակի բոլոր հատկություններով: Առաջին հայացքից մեղ բնում ե, թե բույսերը զուրկ են այդ յերկու ընդունակություններից: Նրանք արմատներով ամրացած են վորեկ տեղում և մնում են այնտեղ իրենց ամբողջ կյանքի ընթացքում: Բայց այդ գեռ վոչինչ չի նշանակում. կան մի շարք կենդանիներ ևս, որինակ, կորաները, սպունգները և այլն, վորոնք նույնպես իրենց ամբողջ կյանքում կպած են լինում միենանույն տեղին, բայց չնայած դրան, նրանք իրենց մարմնի վորոշ մասերը հարկ յեղած ժամանակ շարժում են և զուրկ չեն զգալու ընդունակություննից: Այդպես և բույսերը: Տաք յերկըներում ապրում ե մի բույս, վոր կոչվում և պատկառուի. սա ունի ակացիայի նման վետրածեկ տերեներ. յերբ մեկը թեկուզ հենց թեթև կերպով կպչում ե նրա տերեներին, իսկույն իրար դիմաց նստած տերեները մոտենում են և կպչում իրար: Վորոշ ժամանակից հետո տերեները կը կին հեռանում են և իրենց առաջվա դիրքն ընդունում: Իսկ յերբ խփում են աերեին ուժեղ կերպով, այն ժամանակ տեղի յե ունենում վոչ միայն այն, ինչ վոր ասացինք, այլ և ամբողջ տերեւը ցածրանում ե և կպչում ցողունին: Նույն ձեռք շարժվում են տերեները և ամբողջ բույսի վրա, յերբ հարվածի ազդեցության տակ ցնցվում ե ամբողջ բույսը:

կնշանակե, պատկառուկը զգում ե հարվածը և աշխատում ե կարծես խուսափել նրանից: Անձրէի ժամանակ ևս պատկառուկը նույնն ե կատարում. դրա համար ել կաթիլները չեն վասում նրա քնքույշ տերեները: Պատկառուկը զգայուն ե նաև դեպի լույսը. արել մայր ե մտնում թե չե, պատկառուկը փակում ե իր տերեները և մնում ե այդպես, մինչև վոր կրկին արել ծագում ե: Նման զգայնություն ունեն նաև մեր սովորական բույսերը, միայն, ինարկե, փոքր չափերով: Մեր սենյակներում պահպղ բույսերի տերեները յեթե ուշադրությամբ դիտենք, կտենենք, վոր չանդիսական և հարվածից հետո. բոլորն ել դարձած հն դեպի լույսը. յեթե շուռ տանք բույսերն այնպես, վոր տերեները դառնան դեպի սենյակի ներսը, վորոշ ժամանակից հետո կտենենք, վոր նրանք ծովում և ուղղվում են կրկին դեպի լույսը: Հայտնի յետենքին, վոր արևածաղկի ծաղիկը շաբունակ նայում ե արեին. փոխում ե արեն իր տեղը, փոխում ե և նրա ծաղիկն իր դիրքն ե միշտ այնպես, վոր ուղղված լինի դեպի արեկը: Շատ բույսերի տերեները ցերեկը ուղիղ դիրք են ունենում, իսկ դիշերը՝ կախված. նրանք դիշերը, այսպես ասած, «քնում են»: Այդպես են, որինակ, ակացիան, լոքին և այլն:

Այդ կողմից աչքի յեն ընկնում մանավանդ ծաղիկները. միքանի բույսերի ծաղիկներ գիշերն իրենց զլուխները կախում են, որինակ, զագարի ծաղկեփունջը: Միքանի բույսերի ծաղիկներ ել դիշերը փակվում են, որինակ, խտուտիկի, յերիցուկի, տատասկափշի ծաղկեփնջերը,




Պատկառուկի նյուդը.

չանդիսական վիճակում և հարվածից հետո. բույսերն են դարձած հն դեպի լույսը. յեթե շուռ տանք բույսերն այնպես, վոր տերեները դառնան դեպի սենյակի ներսը, վորոշ ժամանակից հետո կտենենք, վոր նրանք ծովում և ուղղվում են կրկին դեպի լույսը: Հայտնի յետենքին, վոր արևածաղկի ծաղիկը շաբունակ նայում ե արեին. փոխում ե արեն իր տեղը, փոխում ե և նրա ծաղիկն իր դիրքն ե միշտ այնպես, վոր ուղղված լինի դեպի արեկը: Շատ բույսերի տերեները ցերեկը ուղիղ դիրք են ունենում, իսկ դիշերը՝ կախված. նրանք դիշերը, այսպես ասած, «քնում են»: Այդպես են, որինակ, ակացիան, լոքին և այլն:

Այդ կողմից աչքի յեն ընկնում մանավանդ ծաղիկները. միքանի բույսերի ծաղիկներ գիշերն իրենց զլուխները կախում են, որինակ, զագարի ծաղկեփունջը: Միքանի բույսերի ծաղիկներ ել դիշերը փակվում են, որինակ, խտուտիկի, յերիցուկի, տատասկափշի ծաղկեփնջերը,

Այս բոլորը ցույց են տալիս, վոր կենդանու նման բույսն ես սնվում ե, չնչում, բազմանում ու աճում, զգում ու շարժվում և մեռնում: Ուրեմն, բույսն ել կանք ունեցող մարմին ե, ինչպես կենդանին:

Յույսի մարմինը բաղկացած ե գործարաններից, ինչպես կենդանին ներինը և ամեն մի գործարան իր հերթին բաղկացած ե ավելի մասրիկ մասրից: Յույսի այս մանրիկ մասերը շատ անդամ աչքով անհնարին ե դիտել. դրա համար գործ և ածվում մի գործիք, վոր իրերը՝ մեծացնում ե միքանի հարյուր, յերեմն նույնիսկ միքանի հազար անգամ: Այդ գործիքը կոչվում ե մանրադիտակ կամ միկրոսկոպ: Այս գործիքը գիտության շատ մեծ ծառայություններ ե արել: Յեթե մեր արե այդ գործիքը, բույսի հետ կապված յերեւյներից շատերը մեզ համար միանգամայն անհասկանակի կնային:



Միկրոսկոպ.


ԲՈՒՑՍԻ ԿՅԱՆՔԸ

ՍԵՐՄԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԾԼՈՒՄԸ

1. ՍԵՐՄԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.—Սերմի կազմության հետ ծանոթանալու համար վերցնում ենք վորհե սերմ և ըլնության յենթարկում։ Այդ տեսակետից ամենից հարմար են մեծ սերմերը, որինակ, լորու, սիսեռի սերմերը։

Ծանոթանանք լորու սերմի հետ։ Սա դրսից պատաճ ե մաշկով, վոր լինում ե զանազան գույների՝ սև, սպիտակ, կարմիր և այլն։ Լորու ներքին կազմությունը դիտելու համար պետք ե հեռացնենք այդ մաշկը։ Դրա համար լորին դցում ենք ջրի մեջ և մի որ պահում այնտեղ։ Ջրի մեջ լորին ուռչում, փափկում ե։ Այդ դրության մեջ մաշկը հեշտությամբ հեռացնում ենք նրանից։ Հեռացնելով մաշկը՝ նկատում ենք, վոր սերմը ներսում բաղկացած յերկու հավասար մասերից, վորոնք մի ծայրում միացած են միմյանց հետ։ Սերմի այդ մասերը կոչվում են շամփիլիներ։ Շաքիլներն իրար հետ միացած են մի մարմնիկով, վորի մի մասը դրսից յերկում է, այդ մասը կոչվում է արմատիկ։ Դա հետազայում զարդանալով առաջ ե բերում լորու արմատը։ Յերբ հեռացնում ենք շաքիլները միմյանցից՝ նկատում ենք, վոր արմատիկի հետ միացած ե մի բողբոջիկ, բաղկացած յերկու սպիտակավուն տերեխիկներից և մի փոքրիկ պտուկից։ Բողբոջիկից հետազայում առաջանում են լորու ցողունը և տերեխները։ Արմատիկը, բողբոջիկն ու շաքիլները միասին կազմում են ապագա բույսի ասղմը։ Ուրեմն, լորու սերմը բաղկացած ե մաշկից և սպիտակավուն պտուկից, իսկ սպիտակավուն պտուկից, բողբոջիկից և շաքիլներից։

2. ՍԵՐՄԻ ԾԼՈՒՄԸ.—Սերմի ծլումը դիտելու համար անում ենք հետևյալ փորձը։ Վերցնում ենք միքամիկ տամայակ լորու սերմ և յերկու շաբաթվա ընթացքում որական միքամիկ հատ ցանում փափուկ հողի կամ, ավելի լավ ե, խոնավ փայտի թեփի մեջ։ Վերջինիս մեջ լորին ծլում ե ճիշտ այնպես, ինչպես կծլեր հողի մեջ, այն տարբերությամբ միայն, վոր նրա միջից բույսը կարելի յե հեշտությամբ դուրս հանել, մինչդեռ հողից հանելու ժամանակ շատ անգամ արմատիկը վնասվում է։ Յերկու շաբաթից հետո մենք կունենանք մի շարք՝ ծլման զարգացած միացաների վրա զանգող սերմեր։ Նրանցից նազան աստիճանների վրա զանգող սերմեր։



Լորու ծլումը

միքամիսը, նոր ցանածները, դեռ թեփի յերեսը դուրս յեկած չեն լինի, ավելի առաջ ցանածները՝ նոր-նոր դուրս կան թեփի միջից, իսկ ամենահին ցանածները՝ բացած կլինեն արդեն իրենց առաջին կանաչ տերեխները։ Այսուհետեւ, մեկը մյուսի յետերից զգուշությամբ դուրս հանելով թեփի միջից՝ կնկատենք, թե ինչպես ապագա բույսն աստիճանաբար զարգանում է սպիտակ։ Առաջին յերկու-յերեք որը սերմը ուռչում է, նա բավականաշափ մեծանում է, բայց դեռևս նրա վրա կյանքի նշաններ

չեն յերեում, միայն արմատիկը մեծանում է և պարզ կերպով յերեում մաշկի տակ: Չորրորդ կամ հինգերորդ որն արմատիկը այնքան է մեծանում, վոր պատռում է մաշկը և դուրս գալիս:

Այնուհետեւ նա հետզհետեւ յերկարում է և արձակում իրենից կողմանակի ճյուղեր: Այդ ժամանակ սկսում է զարգանալ և բողբոջիկը: Տերեփկները դեռևս չեն յերեում, նրանք թագնված են շաքիլների արանքում: Յեթե շաքիլները բաժանենք միմյանցից՝ կնկատենք, վոր տերեփկները նրանց արանքում բավականաշափ մեծացել են: Յերբ արմատիկն յերկարանում է և ճյուղեր արձակելով՝ ամրանում է հողի կամ թեփի մեջ, շաքիլները սկսում են հետզհետեւ դուրս գալ լույս աշխարհ:

Հողից գուրս գալու գործում նրանց ոգնում է ցողունիկը, վորը աճելով՝ սկսում է աղեղի պես կորանալ: Սա իր՝ աղեղնածե մասով հողը կտմ թեփը պատռելով՝ ճանապարհ է բացում շաքիլների համար: Լույս աշխարհ յեկած շաքիլները գեռես նստած են լինում իրար վրա և գետի ցած թեքված, բայց նրանց արանքից դուրս են գալիս առաջին տերեփկները, վորոնք հետզհետեւ կանաչում են: Այնուհետեւ ցողունը կամաց՝ կամաց ուղղվում է, բացվում են և շաքիլները: Դրա հետ միասին բացվում են առաջին և արդեն կանաչած տերեփկները: Շաքիլները հողից կտմ թեփից դուրս գալուց հետո սկսում են հետզհետեւ կանաչել և բարակել, վերջը նրանք սովորական կանաչ տերեփկների յեն նմանվում: Սակայն, շաքիլներն յերկար չեն մնում: Վորոշ ժամանակից հետո նրանք կուչկատում են, թառամում և ապա թափվում:

3. ՇԱՔԻԼԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:—Շաքիլներն, ինչպես տեսանք, սկզբում լինում են հաստ ու մսոտ: Նըրանք լցված են լինում ոսլայով, հենց այդ նյութի համար ե, վոր մենք լրին գործ ենք ածում իբրև կերակուր: Սակայն, ինչքան սերմի ծլումն առաջ ե գնում, այնքան շաքիլները բարակում են. նրանց ալյուրովին նյութերից, թառամում են և իրեն անպետք բաներ՝ թափվում են:

հետո նրանք բոլորովին բարակում են, վերջն ել կուչկը չափում, թառամում և թափվում: Բայց հենց այդ ժամանակ բավականին զարգանում է սաղմը: Նրա արմատիկը յերկարում, խորանում է հողի մեջ և արձակում իրենից կողմանակի ճյուղեր: Բողբոջիկը նույնական մեծանում է: Նա դուրս ե գալիս լույս աշխարհ և տալիս կանաչ տերեփկներ: Վերտեղից ե վերցնում սաղմն իր սընունքը: Մեր սերմերը գտնվում ենին թեփի մեջ, վորտեղ վոչ մի սնունդ չկար, մինչդեռ նրանց սաղմն ածում, զարգանում ե: Պարզ ե, վոր սնունդի միակ աղբյուրը պեսք զարգանում ե: Պարզ ե, վոր սնունդի միակ աղբյուրը պեսք ե շաքիլները լինեն: Յեկ իրոք, յեթե հողից նոր դուրս յեկած բույսի շաքիլները պոկենք, բույսը կթառամի: Պատճառը հասկանալի յե: Բույսը դեռևս այնքան չե զարդացած, վոր ինքն իր մնունքը գտնի, իսկ շաքիլներն ել, վորտեղից պիտի վերցներ նա անհրաժեշտ մնունքը, չկան, նրանք պոկիած են: Յեթե կտրենք շաքիլների կեսը, առանց սաղմին վորեն մնան հասցնելու և այդ դրությամբ դնենք հողի մեջ, սաղմը կրկին կզարգանա: Բայց շատ թույլ և քիչ անցած՝ կթառամի, անշուշտ, սնունդի պակասության պատճառով: Ուրեմն, շաքիլները սաղմի համար սնունդի շտեմարաններ են, վորտեղից ոգտվում ե նա, մինչև վոր զարդանալով՝ հնարավորություն ե ստանում ինքն իր սնունդը գտնելու: Հենց այս և պատճառը, վոր սաղմի զարգանալու հետ միասին՝ շաքիլները հետզհետեւ բարակում են և վերջն ել, յերբ բոլորովին զրկված են լինում իրենց սնունդարար նյութերից, թառամում են և իրեն անպետք բաներ՝ թափվում են:

4. ՍԻՍԵՐԻ ՍԵՐՄԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ:—Սիսերի սերմն ունի նույն կազմությունը, ինչ վոր լորունը: Նա նույնական վրաից պատճած է մաշկով, վոր չըի մեջ վորոշ ժամանակ մնալուց հետո՝ հեշտությամբ հեռաց: Մաշկի տակ գտնվում է սաղմը՝ բաղկացած յերվում ե: Մաշկի տակ գտնվում է սաղմը՝ բաղկացած յերկու մսոտ շաքիլներից, դրսից նկատելի արմատիկից: Սիսերի շաքիլների արանքում թագնված բողբոջիկից: Սիսերի սերմի ծլումը ես կատարվում ե այնպես, ինչպես լորունը:

Հողի կամ փայտի խոնավ թեփի մեջ դրած սերմերը
սկզբում ուռչում են, և ուռչում են չափազանց ուժեղ
չափերով։ Յեթե վերցնենք մի կաթսա, լցնենք սիսեռով
և մինչև պրունգները ջրով լցնենք ու կաթսան տախտակով
ծածկելուց հետո՝ դնենք նրա վրա մի հինգ փլանոց
ծանրություն, սերմերն ուռչելով՝ կբարձրացնեն տախ-
տակը ծանրության հետ միասին։ Իսկ յեթե կաթսայի
փոխարեն վերցնենք ապակյա շիշ, փորոշ ժամանակից
հետո, յերբ սերմերը ուռչեն, շիշը կպայթի։ Սերմն ուռ-
չելուց հետո սկսում ե զարդանալ արմատիկը, վորը
պատռում ե մաշկը և ցած ուղղվում։ Այսուհետև զար-
դանում ե բողբոջիկը, սա զուրս ե զալիս շաքիների ա-
րանքից, կորանում աղեղի ձևով և դնալով դեպի վեր՝
հանում ե իր տերեկները լույս աշխարհ։ Շաքիները,
սակայն, մնում են հողի տակ, մինչդեռ լոբունը, ինչպես
տեսանք, բողբոջիկի հետ միասին դուրս են զալիս ողի
մեջ։ Հենց սրանով ե տարբերվում սիսեռի սերմի ծլումը
լուսւ սերմի ծլումից։

Բույսերի մի մասի սերմերը ճիշտ նույն կազմությունն ունեն, ինչ վոր լրբու և սիսեռի սերմերը։ Նրանց սաղմն ևս բազկացած ե բողբոջիկից, արմատիկից և յերկու շաքիլներից, վորոնց մեջ ամբարված են լինում նորածիլ բույսի համար սննդաբար նյութեր։

5. ՑՈՐԵՆԻ ՍԵՐՄԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ. ԾԼՈՒՄԲ. — Ցորենի սերմն ունի բոլորովին այլ կազմություն, քան լոռունը և սիսեռինը. Նու ունի յերկարագուն ձև, մի ծայրը սուր, մյուսը՝ բութ. Նրա մի յերեսն ուռուցիկ է, մյուսը տափակ. Այս տափակ յերեսի վրա, սերմի ամբողջ յերկարությամբ, անցնում է մի ակոսիկ. Սուր ծայրի մոտ, ուռուցիկ յերեսի վրա՝ կա մի փոքրիկ մաս, զոր նկատելի կերպով բաժանվում է շրջապատից. այդտեղ գտընվում է սերմի սաղմը. Զրի մեջ յերկու որ պահած սերմը, զոր բավականաշափ ուռած ու փափկած ե լինում, յեթե կտրենք ակոսիկի ուղղությամբ, կնկատենք, զոր սաղմը բաղկացած է արմատիկից և ծայրում սրացող բող-

բովածինս հենված ե մի բարակ յեռանկյուն թիթեղիկից, վել ջինս հենված ե մի բարակ յեռանկյուն թիթեղիկի վրա, վորը բաժանում ե սաղմը սերմի մնացած մասից: Այդ թիթեղիկը կոչվում է վաճանիկ: Դա ցորենի սերմի միակ շաքին ե: Ուրեմն, ցորենի սերմի սաղմը բաղկացած է բողբոջիկից, արմատիկից, և միայն մի հատիկ շաքիլից: Ցորենի շաքին իր մեջ ծիլի համար սնընդարար նյութեր չի պարունակում: Այդ նյութերի պաշտը գտնվում է շաքիլից, ուրեմն և սաղմից դուքս, նաև լըգնում և սերմի մյուս մասը: Սաղմն իր շաքիլով հենված է միայն այդ պաշարի վրա: Լավ ուսած սերմերից սաղմը հեշտությամբ կարելի յե բաժաննել սերմի մյուս մասից:

Յորենի սերմի ծլումը դիտելու համար անուն ու
հետեւալ փորձը։ Վերցնում են ցորենի հատիկներ և
թողնում են, վոր ծլեն՝ վոչ թե հողի կամ թեփի մեջ,
այլ ուղղակի ողի մեջ, հաստ ծծան թղթի վրա։ Դրա
համար թեյի բաժակը մինչև յերեք քառորդը լցնում են
ջրով և ծածկում բաժակի յերեսը ծծան թղթով։ Վերջնու
կտրում են այսպես, վոր փոքր ինչ ավելի մեծ լինի, քան
բաժակի բերանը և ունենայ յերկուսից մինչև չորս ծայր,
բաժակի յերեսը թղթով ծածկելու ժամանակ այդ ծայ-
րերը մացնում են ջրի մեջ։ Այնուհետև ծծան թղթի վրա
շինում են փոքրիկ անցքեր և նրանց մեջ դնում ցորենի
հատիկները։ Ջրի մեջ մացրած ծայրերով ջուրը ծծվում
և տարածվում ե ամբողջ թղթի վրա։ Յորենի հատիկ-
ները ծծելով այդ ջուրը՝ սկսում են ծլել։ Ցեթեւ հատիկ-
ները դնենք թղթի վրա վոչ թե միաժամանակ, այլ մի-
շաբաթվա ընթացքում, ամեն որ միքանիսը, այն ժա-
մանակ կարող ենք դիտել հատիկների ծլման զանազան
աստիճանները։ Փորձը ցույց ե տվել, վոր սկզբում հատիկ-
ներն ուռչում են, ապա յերկը որդ կամ յերրորդ որը ըս-
կըսում ե զարգանալ արմատիկը, վորը պատուելով մաշկը՝
գուրս ե դալիս։ Այդ արմատիկը չի ճյուղավորվում։ Շու-
տով, սակայն, սաղմա արձակում ե իրենից ուրիշ նոր
արմատիկներ, այսպես վոր քիչ անցած՝ ծիլն ունենում ե
թելանման արմատիկների մի ամբողջ փունջ։ Արմատիկի
հետ միաժամանակ զարգանում ե և բողբոջիկը. սա նույն

պես պատում ե պատյանը և դուրս գալիս: Բողբոջիկը նմանվում է մի խողովակի: Կարելով այդ խողովակն իր յերկարությամբ՝ կնկատենք, վոր նա բաղկացած ե վոլորված և մեկը մյուսի մեջ գտնվող տերեներից, վորոնք հետզհետե, իրար յետեից բացվում են: Հատիկը ծիլի զարգացման հետ միասին կուչկչատում է, վորովհետեւ ծիլը շաքիլի միջով ծծում ե նրա մեջ ամբարված սնընդությար նյութերը: Յերբ բոլոր նյութերը նրանից դուրս են դալիս, նա իրքեւ անպետք մի մարմին՝ ընկնում է: Յորենի շաքիլը մնում է հողի մեջ և յերբեք դուրս չի գալիս:

Հաճարի, գարու, վարսակի և յեգիպտացորենի սերմերն ունեն նույն կազմությունը և ծրում են ճիշտ այնպես, ինչպես ցորենի սերմը կամ հատիկը:

6. ԱՄՓՈՓՈՒՄՆ:—Ծանոթանալով զանազան սերմերի կազմության և ծլման ձեռքի հետ՝ տեսնում ենք, վոր բոլոր սերմերն ել ունեն իրենց մեջ սաղմ՝ բաղկացած արմատիկից, բողբոջիկից և շաքիլներից: Միայն միքանի սերմեր ունեն մի հատիկ շաքիլ, մյուսները յերկու շաքիլ: Կան բույսեր ել, վոր ունեն յերկուսից ավելի շաքիլներ: Շաքիլների թվի համաձայն բույսերը բաժանվում են միաշաքիլ, յերկշաքիլ և բազմաշաքիլ բույսերի: Մեր պազատու ծառերը, նույնպես բնդավոր բույսերը, յերկշաքիլ են, իսկ փշատերեկ բույսերը՝ որինակ, շամին, յեղինին և այլն, բազմաշաքիլ են: Այնուհետև տեսնում ենք, վոր բոլոր սերմերի մեջ կա սննդարար նյութերի պաշար: Այդ պաշարն յերկշաքիլների սերմերի մեջ ամբարված ե շաքիլներում, ասել ե, սաղմի մեջ, իսկ միաշաքիլների մեջ՝ սաղմից դուրս: Բազմաշաքիլների սերմերի մեջ ևս պաշարը գտնվում ե սաղմից դուրս: Այդ պաշարն ահագին նշանակություն ունի. առանց դրան ծիլը չեր կարող աճել, վորովհետեւ անկարող և դեռևս ինքնուրույն կերպով իրեն համար սնունդ գտնել: Բացի դրանից, տեսնում ենք նաև, վոր բոլոր սերմերը պատած են ամուր մաշկով, վոր պաշտպանում ե սաղմը զանազան վտանգներից:

ԾԼՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԾԼՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:—Մենք ծանոթացանք սերմերի կազմության և ծլման հետ. այժմ տեսնենք, թե ծլման համար ինչպիսի պայմաններ են անհրաժեշտ:

Առաջին անհրաժեշտ պայմանն այն է, վոր սերմերը վողջ լինեն: Ինչպես ամեն մի եյակ, այնպես ել սերմերը ժամանակի տեսակետից սահմանափակ կյանք ունեն: Ժամանակը լրանալուց հետո՝ եյակների նման սերմերը ևս մեռնում են: Մեռած սերմերը ծլել չեն կարող. Նըրանք զրկվում են, այսպես ասած, ծլելու ունակությունից: Յեթե ցանենք հինգ տարվա հաճարի սերմը, չի ծլի, վորովհետեւ նա ընդամենը չ կամ 3 տարի յե ապրում: Կազնու սերմն ապրում ե մի տարի, բարտունը՝ միքանի ամիս, իսկ ուռենու սերմը՝ միայն միքանի շաբաթ: Միքանի բույսերի սերմեր ապրում են բավական յերկար ժամանակ: Այսպես, որինակ, վարսակի սերմն իր ծլելու ունակությունը պահպանում ե ամբողջ 10—12 տարի, ուցորենի հատիկը՝ 20, յերբեմն ել ավելի, իսկ լորու, սիսեռի, խաշխաշի և ծիախոտի սերմերը՝ միքանի տասնյակը, նույնիսկ հարյուրավոր տարիներ:

Ինչպես եյակներին, այնպես ել սերմերը կարելի յե մեռցնել զանազան միջոցներով, որինակ, թունավորելով կամ յենթարկելով չերմության բարձր աստիճանների: Բոված արեածաղկի սերմը կամ ցորենի, սուրճի հատիկը յերբեք չեն կարող ծլել, վորովհետեւ նրանք արդեն մեռած են:

2. ԶԲԻՐՆ ԻԲՐԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ:—Ծէլու համար անհրաժեշտ է և ջուր: Սաղմը սնվում ե միայն հեղուկ դրության մեջ գտնվող նյութերով: Բայց ինչպես Այս հարցին պատասխանելու համար նախ և առաջ պիտի իմանանք, թե սերմերում գտնվող սննդարար նյութերն ինչ կազմություն ունեն: Հետազոտությունը ցույց ե ընչ կազմություն ունեն: Հետազոտությունը ցույց ե ավել, վոր տարբեր սերմերի մեջ գտնվում են տարբեր

աննդաբար նյութեր: Այսպես, որինակ, ցորենի, հաճարի, վարսակի, գարու մեջ այդ նյութերի մեծ մասը ուլա յե: Ծեկ այդ կարելի յե ապացուցել փորձով, կվերցնենք ափսեյի մեջ մի թեյի գդալ ցորենի ալյուր, վոր ստացվում է, ինչպես գիտենք, ցորենի հատիկների մեջ յեղած մննդարար նյութից, կածենք նրա վրա քիչ սառը ջուր և մի բարակ ձողիկով կխառնենք այնքան, մինչեւ վոր ստացվի թանձր խմբը: Ապա կվերցնենք ջրով գրեթե լցված մի բաժակ, յերեսը կծածկենք մի բարակ քողով, այնպես վոր վերջնս փոքր ինչ կախված ինսի դեպի ներս և շոշափի ջրի մակերեսը, Այնուհետև կդնենք այդ քողի վրա մեր պատրաստած խմորից մի փոքրիկ կտոր և կսկսենք մատով կամ ձողիկով խմորի գունդը շուռ ու մուռ տալ քողի վրա: Փոքր ինչ անցած՝ գնդից ջրի մեջ կանցնեն ալյուրային նյութի փոքրիկ սպիտակ մասնիկներ, վորոնք և ջուրը կպղոտորացնեն: Խմորի գունդը գնալով հետզհետե կփոքրանա և 15—20 րոպեյից հետո տակը կթնա դեղնավուն գույն ունեցող մածուցիկ մի նյութ, իսկ բաժակի ջուրը կաթնագույն կղառնա:

Խմորի գնդից հեռացող մասնիկները վոչ այլ ինչ են, բայց յեթե ուլա: Յույց տալու համար, վոր այդ մասնիկներն իրոք ուլա յեն, կարելի յե կատարել մի փորձ: Ուլան այն հատկությունն ունի, վոր յերբ նրա վրա յոդ են ածում, նա խսկույն կապտում ե: Յեթե վերցնենք մի բաժակի մեջ գտնվող կաթնագույն հեղուկից միքիչ և նրա վրա կաթեցնենք մի կաթիլ յոդ, հեղուկն խսկույն գեղեցիկ կապույտ գույն կընդունի. այդ արդեն ապացույց ե, վոր սպիտակ մասնիկներն ուլա յեն յեղել: Եթե բաժակի հեղուկը վորոշ ժամանակ հանգիստ դրության մեջ թողնենք, այդ սպիտակ մասնիկները բոլորը կնստեն տակը Դրանից հետո ջուրը կարող ենք թափել և նստվածքը չորացնելով ստանալ սովորական ուլա:

Խմորի գնդի տակը մնացած մածուցիկ զանգվածը աննդաբար նյութ ե: Այդ նյութը նման լինելով իր կազմությամբ ձվի սպիտակուցին՝ կոչվում ե սպիտակուցային նյութ: Ուլայի հետ միասին շատ սպիտակուցային

նյութեր են պարունակում լորու, սխենոի և միքանի այլ բույսերի սերմեր:

Միքանի սերմեր ել, որինակ, արեածաղկի, կտավատի, վուշի սերմերը պարունակում են իրենց մեջ սաղմի համար իրեն սնունդ՝ յուղային նյութեր: Յեթե վերցնենք արեածաղկի սերմը և ճնշելով՝ արորենք սպիտակ թղթի վրա, կստանանք վերջինիս վրա յուղային բիճ: Սյապես, ուրեմն, սաղմի համար սերմերի մեջ լինում են յերեք տեսակի սննդաբար նյութեր՝ ուլա, սպիտակուցային նյութեր յել յուղեր:

Այս սննդաբար նյութերից և վոչ մեկը չի լուծվում ջրի մեջ: Զվի սպիտակուցը, յերբ ածում ենք ջրի մեջ, նստում ե տակը և յերբեք չի լուծվում: Զի լուծվում և յուղը, նա լող ե տակի ջրի յերեսին, առանց նույնիսկ նըա հետ խառնվելու: Ինչպես տեսանք, չի լուծվում նաև սուլան. Նրա փոքրիկ մասնիկները նախ պղտորություն են առաջ բերում և վերջն ել նստում են անոթի հատակին: Բայց չի վոր սաղմը միայն հեղուկային նյութերով և սնվում: Ինչպես ե, ուրեմն, ոգտվում նա այդ նյութերից, յեթե դրանք չեն լուծվում ջրի մեջ: Պարզ ե, վոր այդ նյութերը պետք ե փոխեն իրենց բնույթը, նրանք պետք ե լուծելի գառնան: Յեկ այդպես ել լինում ե: Զրի մեջ չլուծվող այդ նյութերը փոխարկվում են լուծելի նյութերի: Այդ փոխարկումը պարզ կերպով յերեսում ե մանավանդ հացարույսերի սերմերի վրա: Վերջիններս, ինչպես գիտենք, լիքն են ոսլայով, վորը ջրի մեջ չի լուծվում: Սերմի ծլման ժամանակ այդ ոսլան հետզհետե փոխարկվում ե շաքարի, մի նյութի, վոր հեշտությամբ լուծվում ե ջրի մեջ: Վոր այդ, իրոք, այդպես ե, կարող լուծվում ե ջրի մեջ: Վոր հատիկները ծամենք հաստատել փորձով: Գարու չոր հատիկները ծամենք մի քաղցրություն չենք զգում, մինչդեռ յերբ ծամում ենք ծլած հատիկները, իսկույն զգում ենք քաղցր համ: Պարզ ե, վոր ոսլայի մի մասը ծլած հատիկների մեջ փոխարկվել ե շաքարի:

Ուրեմն, վորպեսզի ծլող սերմերի մեջ յեղած չլուծվող նյութերը փոխարկվեն լուծելի նյութերի և լուծվելով սնունդ գառնան սաղմի համար, անհրաժեշտ ե ջուր: Հովանունդ գառնան սաղմի համար, անհրաժեշտ ե ջուր:

Յ. ՈԴՆ ԻԲՐԵՎ. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ.—Բացի ջրեց,
ծլող սերմերի համար անհրաժեշտ ե և ոդ: Առանց ոդի
սերմերը ծլել չեն կարող: Յեթե լոբու սերմերն ածենք
ջրով շշի մեջ, յերբեք չեն ծլի: Ոդի անհրաժեշտու-
թյունը կարող ենք ցույց տալ և մի այլ փորձով: Կվեր-
ցընենք յերկու լայնաբերան շիշ, յերկուսի հատակին ել
կփռենք բամբակ կամ միքանի թերթ ծծան թուղթ, ա-
պա կիսնավացնենք այս բամբակը կամ ծծան թուղթը
և շաղ կտանք նրանց վրա ցորենի հատիկներ: Եշերի բե-
րանը յեթե բաց թողնենք, յերկու կամ յերեք որից հետո
հատիկները կսկսեն ծլել: Յերբ նրանք կարձակին արմա-
տիկներ և ցողուններ, շշերից մեկի բերանը կփակենք
խցանով այնպես, վոր այլևս ոդ չմտնի ներս: Միքանի
որից հետո կնկատենք, վոր բաց շշի մեջ ծլումն առաջ
ե գնում, և ծիլերն արձակում են կանաչ տերեկներ,
մինչդեռ փակ շշի մեջ սերմերի ծլումը կանդ ե առնում.
Նրանք մնում են նույն վիճակում, ինչ վիճակում վոր
կային մինչև շշի բերանը փակելը:

Բայց ինչնև համար ոդն անհրաժեշտ ե սերմի հա-
մար: Այս հարցին պատասխանելու համար շարունակենք
մեր փորձը: Բացենք մեր փակած շիշը, վորտեղ սերմերի
ծլումը դադարել եր և զգուշությամբ մտցնենք նրա մեջ
մի վառվող փայտիկ: Փայտիկն իսկույն կհանդչի: Պարզ ե,
վոր նրա մեջ այլևս թթվածին չկա, ծլող սերմերը կլա-
նել են այն: Բայց ինչ ե առաջացել թթվածնի փոխարեն:
Այդ իմանալու համար նույն շշի բերանին կդնենք յեր-
կու անցք ունեցող խցան, ապա սրա մի անցքի միջով
կմտցնենք շշի մեջ մի ձագար, իսկ մյուսով մի կոր խո-
ղովակ, վորի ծայրին հաղցրած բեղինե խողովակը կմըտ-
ցընենք կրաջրով լիքը մի բաժակի մեջ: Յերբ ձագարի
միջով ջուր ածենք շշի մեջ, վերջինիցս ողը դուրս կդա
և խողովակով կմտնի կրաջրով լիքը բաժակի մեջ: Կրա-
ջուրն իսկույն կսկսի պղտորվել: այդ արդեն նշան ե, վոր
շշից դուրս յեկող ողը պարունակում ե իր մեջ մեծ չա-
փերով ածխաթթու: Կնշանակե, շշի մեջ թթվածնի փո-
խարեն առաջացել ե ածխաթթու գաղ: Այսպիսով տես-

նում ենք, վոր սերմերը ծլելու ժամանակ կլանում են
ոդից թթվածին և արձակում են իրենցից ածխաթթու գաղ:
Ուրեմն, նրանք շնչում են. ասել ե, ոդն անհրաժեշտ ե
շնչառության համար:

Բայց ինչնև պետք ե շնչեն ծլող սերմերը: Ենչառու-
թյունը վոչ այլ ինչ ե, բայց յեթե այրումն: Ինչպես վոր
այրման ժամանակ այրվող մարմնի ածխաթթու միանում
ե ոդի թթվածնի հետ և առաջ բերում ածխաթթու գաղ,
դրա հետ միասին և ջերմություն, այնպես ել շնչառու-
թյան ժամանակ շնչող մարմնի մեջ գտնվող ածխաթթուը
միանում ե ոդի թթվածնի հետ և առաջ բերում դարձյալ
ածխաթթու գաղ և ջերմություն: Տարբերությունը մի-
տքն նրա մեջ ե, վոր ացրման ժամանակ ածխաթթու միա-
ցումը թթվածնի հետ ավելի արագ ե կատարվում, դրա
համար ել առաջանում ե մեծ չափով ջերմություն, մինչ-
դեռ շնչառության ժամանակ այդ միացման գործողու-
թյունը շատ գանդաղ ե կատարվում, ուստի առաջացող
ջերմությունն ել քիչ ե լինում:

Ենչառությունից առաջացող ջերմությունը շատ ան-
հրաժեշտ ե ծլող սերմերի համար: Այդ ջերմությամբ
նախ տաքանում են նրանք և ապա, վոր զլխավորն ե,
ջերմությունը նրանց ույժ ե տալիս: Վոր ծլող սերմերի
շնչառության ժամանակ ջերմություն ե առաջանում,
կարելի յե տեսնել հենց հետեւյալ փորձից: Յեթե վերցը-
նենք մի բանկա, մինչև կեսը լցնենք ցորենի ծլող հա-
տիկներով և սրանց մեջը մացնենք մի ջերմաչափ,
կտեսնենք, վոր այստեղ բարեխառնությունը մեկ կամ
յերկու աստիճանով ավելի բարձր ե, քան շրջապատինը:

Ջերմությունը ծլող սերմերին տալիս ե և ույժ: Այդ
ույժն անհրաժեշտ է վորոշ աշխատանք կատարելու հա-
մար, իսկ ծլող սերմերը բավականին մեծ աշխատանք ու-
նեն կատարելու: Նրանք պետք ե իրենց մեջ գտնված
չուծվող նյութերը փոխարկեն լուծելի նյութերի, ապա
այդ նյութերը լուծված վիճակում մղեն գեպի սրամքը և
այնուհետև, յերբ սաղմը զարգանում է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ԱԼ ՊԵՏՐՈՎԻ ԱՆԴՐԱ ԱՌԱՋԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
պետք ե պատուի հողը՝ լույս աշխարհ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆԴՐԱ ԱՌԱՋԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
7/1-1929

մար, մյուս կողմից ել արմատիկը ծակելով հողը՝ պետք ե խորանա և ամրանա նրա մեջ:

Այսպիսով տեսնում ենք, վոր շնչառության ժամանակ ջերմություն և ույժ ստանալու համար ծլող սերմերը ծախսում են իրենց ածխածնի մի մասը. այս պատճառով ել նրանց քաջը անպատճառ պիտի պակասի, թեպետ նրանց ծիլը հետզհետե մեծանում է. Յեվ իսկապես, յեթե վերցնենք վորոշվով ցորենի կամ սիսեռի սերմեր, չոր վիճակում կշռենք և ապա ծլելուց հետո, յերբ սկսում են նրանք կանաչել, չորացնենք իրենց արմատիկներով ու ցողուններով և կրկին կշռենք, կնկատենք, վոր նրանց քաշը պակասել է: Քաշի մեջ յեղած տարբերությունը ցույց կտա, թե սերմերն ինչքան ածխածին են ծախսել շնչառության վրա՝ ջերմություն և ույժ ստանալու համար:

4. ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ:—
Բացի ջրից և ողից, ծլող սերմերի համար անհրաժեշտ և նաև վորոշ քանակությամբ ջերմություն: 5 կամ 6 աստիճանի տակ սիսեռի կամ լորու սերմերը չեն ծլում: Նրանց ծլումը սկսվում է 8—10 աստիճանի տակ, այն ևս շատ դանդաղ: Այնուհետև ինչքան բարեխառնությունը բարձրանում է, այնքան ծլումն ավելի արագանում է: Լորու և սիսեռի սերմերն ամենահաջող կերպով ծլում են 30 աստիճանի տակ. սակայն, զրանից ավելի բարձր բարեխառնության մեջ նրանց ծլումը կրկին սկսում է դանդաղել, իսկ 45 աստիճանի տակ բոլորովին գաղարում է: Ճիշտ այդպես, մյուս բույսերի սերմերի ծլման համար ևս անհրաժեշտ է վորոշ աստիճանի տաքություն: Գարու, հաճարի և վարսակի սերմերը, որինակ, սկսում են ծլել 3—4 աստիճանի տակ, վարունգի, սեխի և ձմերուկի սերմերը՝ 14—16 աստիճանի տակ: 30 աստիճանը բույր տեսակի սերմերի ծլման համար ամենալավ բարեխառնությունն է, 50-ից բարձր աստիճանի բարեխառնության մեջ վոչ մի սերմ չի ծլում:

Թե բարեխառնությունն ինչքան մեծ ազդեցություն ունի սերմերի ծլման վրա, յերկում ե հետեւյալ փորձից:

ՅԵՅԵ վերցնենք հաճարի հատիկներ և նրանց մի մասը թողնենք ծլի 5—6 աստիճանի, մյուս մասը՝ 20—25 աստիճանի բարեխառնության մեջ, կտեսնենք, վոր առաջինները ծլում են 10—12 որից հետո, իսկ վերջինները միայն մի որից հետո:

Սերմերի ծլման համար, բացի ծլման ունակությունից, ջրից, ողից և վորոշ քանակությամբ չերմությունից, ուրիշ վաշինչ պետք չե: Լույսը, որինակ, վոչ մի նշանակություն չունի: Սերմերը նույն ձևով ծլում են թե մթության և թե լույսի մեջ: Նշանակություն չունի սերմերի ծլման համար նաև հողը, վորովհետև սերմի մեջ սաղմի համար կան պատրաստի մննդարար նյութեր: Յեվ իսկապես, ինչպես տեսանք, սերմերը ծլում են փայտի թեփի մեջ, խոնավ ծծան թղթի կամ բամբակի վրա. բայց պետք ե տսենք, վոր նրանք կարող են ծլել նաև աղյուսի և ապակու ավազի և կամ ուղղակի ողի մեջ:

ԲՈՒՅՍԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

1. ԲՉԻՉՉ:—Բույսի ներքին կաղմության հետ ծանոթանալու համար մենք անպայման պետք ե ումենք մանրադիտակ կամ միկրոսկոպ կոչված զործիքի ոգնության: Այս զործիքը դիտելի առարկաները մեր աչքի համար մեծացնում ե վոչ միայն տասնյակ, այլ հարյուրավոր ու հազարավոր անգամ. ահա այդ պատճառով ել հնարավորություն և տալիս մեզ զննության յենթարկելու բույսի ամենափոքրիկ մասերն անդամ: Դիտելով այս զործիքի միջոցով բույսի վորեւ մասից՝ ածելիի միջոցով կտրված չափազանց բարակ շերտիկը՝ նկատում ենք, վոր նա բաղկացած է վանդակիկներից: Այդ վանդակիկները շատ նման լինելով մեղրահացի խորիսիի բջիջներին, կոչվում են բջիջներ: Յուրաքանչյուր բջիջ մի բշտիկ ել լցված կիսահեղուկ նյութով, վոր կոչվում ե պրոտոպլազմա կամ ուղղակի պլազմա, Բշտիկի պատերը կազմում են բջիջի քաղանքը: Բույսի վոր մասն ել դիտելու լինենք մանրարդանքը: Բույսի վոր մասն ել դիտելու լինենք մանրարդիտակով՝ արմատը, ցողունը, ծաղիկը, մի-

ևնույն ե, կնկատենք, վոր բոլորն ել բաղկացած են բջիջներից. տարբերությունը միայն նրանց ձեր և մեծության մեջ կլինի, ուրիշ վոչինչ։ Ուրեմն, բույսը կազմված ե բջիջներից, ճիշտ այնպես, ինչպես առևոր քարի մեծ ու փոքր կտորներից կամ աղյուսներից։ Յեզ ինչպես վոր տան աղյուսները կամ քարի կտորները միմյանց հետ միացնող շաղախը հեռացրած ժամանակ տունը փուլ ե գալիս, այնպես ել, յեթե հեռացվի բջիջները միմյանց հետ միացնող նյութը, բույսը փուլ էղա, տալով մանրիկ բջիջների կույտեր։

2. Բջիջների ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ. — Բջիջներն առհասարակ այնքան փոքր են, վոր նրանց հնարավոր ե տեսնել միայն մանրադիտակով, սակայն լինում են և այնպիսիները, վորոնց կարելի յեւ տեսնել և հասարակ աշբով։ Այսպես, որինակ, լավ հասած ձմերուկի միջուկը բաղկացած ե աչքի համար պարզ տեսանելի փոքրիկ մասնիկներից։ Այդ մասնիկներից յուրաքանչյուրը մի բջիջ ե, կավ հասած խնձորի միքանի տեսակների մսային մասը ևս յերբեմն փշրվում ե փոքրիկ մասնիկների։ Կման մասնիկները բաժանվում ե նաև լավ յեփած կարտոֆիլով։ Այդ մասնիկները նույնպես բջիջներ են։ Յերբեմն բջիջները ել ավելի մեծ չափ են ունենում, որինակ, նարնջի միջուկի մեջ։ Կեղեննք նարինջը և վերցնենք նրա բլթակներից մեկը. դրսից նա ծածկված ե բարակ մաշկով։ Յեթե հեռացնենք այդ մաշկը, կնկատենք, վոր նարնջի միջուկը բաղկացած ե բավականին մեծ և յերկարուկ քսակներից, վորոնց կարելի յեւ ասեղի ծայրով բաժանել մեկը մյուսից։ Այդ քսակներից յուրաքանչյուրը մի առանձին բջիջ է։

3. Բջիջի ՄԱՇԿԻ ՅԵՎ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. — Բջիջը, ինչպես տեսանք, բաղկացած ե մաշկից և պրոտոպլազմայից։ Թարմ բջիջների մաշկը լինում ե բարակ և քնքույշ, հներինը՝ հաստ և պինդ, յերբեմն մաշկը չափազանց հաստանում, ամրանում ե։ Այդպիսի հաստ

ու ամուր մաշկ ունեցող բջիջներից են կազմված ծառերի բնափայտը, ընկուզի կեղեր, բալի, դեղձի, սաւորի կորիզները։

Բջիջի ամենակարենը մասը պրոտոպլազման ե. դա յեւ իսկապես բջիջի կենդանի նյութը, վորովհետև դրա մեջ են կատարվում կյանքի գործողությունները. դա յեւ աճողը, սնվողը, շնչողը և այլն։ Սրտաքուստ նա մի կիսանեղուկ լորձային նյութ ե, բաղկացած սպիտակուցային նյութերից, այսինքն այնպիսի նյութերից, ինչպիսի նյութերից բաղկացած ե ձվի սպիտակուցը։ Պրոտոպլազմայի մեջ կա մի թանձր զանգված. դա բջիջի կորիզն ե։ Գրեթե բոլոր բջիջներն ունեն իրենց մեջ այդպիսի կորիզ։ Ուրեմն, բջիջը բաղկացած ե մասեկից, պրոտոպլազմայից



Բջիջը. 1) Մաշկ, 2) Պրոտոպլազմա, 3 և 4)

5) Պլուտոնիկ հատիկները, 6) Բջջանիւթ:

առանձին պատճեն։ Սրանց շնորհիվ ե բույսը կանաչ գույն ստամուկան, թլորոֆիլը կարելի յեւ տերեներից դուրս հանել։

Դրա համար հարկավոր ե տերեները գցել սպիրաֆի մեջ-
այդաեղ քլորոֆիլը հեշտությամբ լուծվում և հեռանում
ե բջիջներից: Դրա հետևանքը լինում ե այն, վոր տե-
րեները սպիտակում են, իսկ սպիրաֆ՝ ընդհակառակը,
կանաչում ե: Նոր բջիջներն ամբողջովին լցված են լի-
նում պրոտոպլազմայով, իսկ ններն իրենց մեջ ունենում
են բաց տարածություններ կամ, ինչպես ասում են,
վակուուլներ, վորոնք լցված են մի հեղուկով, վոր բջջա-
նյութ ե կոչվում: Այդ վակուուլները հետզհետեւ շատա-
նում են բջիջի մեջ: Ավելի հին բջիջների մեջ նրանք միա-
նալով միմյանց հետ՝ բջիջի ներսում կազմում են մի մեծ
խոռոչ: Այդ դեպքում պրոտոպլազման ամբողջովին հավաք-
վում ե մաշկի մոտ և ամուր կերպով կայչում նրան:

Կենդանի բջիջների մեջ պրոտոպլազման շարունակ
շարժման մեջ ե գտնվում: Այդ շարժումն այնքան դան-
դաղ ե կատարվում, վոր դժվար ե նկատել, կան, սա-
կայն, միջանի բույսեր, վորոնց բջիջների մեջ պրոտո-
պլազմայի շարժումը կարելի յէ դիտել միկրոսկոպով: Պրո-
տոպլազման այդ բջիջների մեջ կարծես հոսում ե թա-
ղանթի կողքով: Նրա հետ միասին շարժվում են նաև
կորիզն ու քլորոֆիլի հատիկները:

Վակուուլներում գտնվող բջջահյութը ջրային հեղուկ
ե, վորի մեջ լուծված են լինում զանազան նյութեր՝
շաքար, զանազան թթուներ կամ աղեր: Բջջահյութն այն
հյութն ե, վոր դուրս ե գալիս զանազան պտուղներից,
որինակ լիմոնից, ձմերուկից, յերր կտրում ենք և կամ
բալից, խաղողից, յերբ հուպ ենք տալիս: Պտուղների
համը կախված ե հենց բջջահյութի մեջ լուծված նյու-
թերից: Զմերուկը քաղցր ե, վորովհետեւ նրա բջջահյու-
թի մեջ կա բավական մեծ չափով շաքար և լիմոնը թթու-
յի, վորովհետեւ նրա հյութի մեջ լուծված ե լիմոնաթթու:


4. Բջիջների բաջմանը մարմինները, ինչպես և
բույր կյանք ունեցող մարմինները, բաղմանում են բջիջները բազմանում են բաժանման միջոցով: Յերբ
բջիջը վորոշ մեծության ե համար, սկսում ե

վել: Սկզբում բաժանվում ե կորիզը, ստացվում ե յեր-
կու կորիզ, ապա բաժանվում ե պրոտոպլազման և այդ-
պիսով առաջանում ե յերկու բջիջ: Մրանը ել հասնելով
վորոշ հասունության՝ իրենց
հերթին կրկին սկսում են
բաժանվել: Բաժանվում են
գլխավորապես մատաղ բջիջ-
ները, վորոնք գտնվում են
բույսի աճող մասերում: Հը-
ները դադարում են բաժան-
վելուց: Մրանց մեջ պրոտո-
պլազմայի քանակությունը
քանի գնում ե, քչանում ե,
բջիջի կիսվելը.


Վերջն ել բջիջը մեռնում ե: Մեռած բջիջի մեջ այս և
պրոտոպլազմա չի լինում. նա բաղկացած ե լինում մի-
տյն մաշկից: Այսպիսի մեռած բջիջներից են բաղկա-
ցած ծառերի բնափայտը, կեղեկի վերեկի չերաք և այլն:

5. Բջիջների օեզերը Յեզ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԸ.—Յերի-
տասարդ բջիջները, գրեթե բոլորը համարյա, միենույն
ձևուն ունեն, բայց հետագայում հետզհետեւ փոխվում ե
նրանց ձևը: Յերբ դիտում ենք մանրագիտակով այս կամ
այն բույսից վեցըրած ձյուղի կտրվածքը՝ լայնությամբ
կամ յերկարությամբ, նկատում ենք, վոր նա բաղկացած
ե բազմազան ձևերի բջիջներից: Նրանց մի մասն ունեն
բարակ յերկարուկ ձև, մյուսները՝ կարճ ու հաստ, յեր-
բորդները՝ տափակ, չորրորդները՝ կլոր և այլն: Սակայն,
նման ձև ունեցողները միշտ հավաքված են լինում
միասին:

Ի՞նչու համար պետք ե բույսն ունենա այդշափ
բազմազան ձևերի բջիջներ: Հայտնի յէ, վոր բույսը ապ-
րող մարմին ե. իբրև ապրող մարմին ունի նա բազմա-
զան աշխատանքներ. նա պետք ե շնչի, հողից սնունդ
ընդունի, այդ սնունդը փոփոխության յենթարկի, պաշտ-
պանի իբրև զանազան վնասակար ազդեցություններից
և այլն: Այդ աշխատանքների համար ունի նա բազմազան



բջիջներ: Նրանց մի տեսակը հողից սնունդ եւ վերցնում, մյուսներն՝ ողից թթվածին, յերբորդներն՝ արմատի միջոցով հողից ստացած սնունդը տանում են դեպի բույսի մյուս մասերը, չորրորդները, ընդհակառակը, տերևների



Ծառի ճյուղի կտրվածք.


- 1) Վերնամաշէ, 2) Կեղեվ, 3) Թելեր, 4) Մազանոթ, 5) Կամքիսն,
7) Անոթ, 8) Եռւծ:

մեջ պատրաստված սնունդը տանում են դեպի արմատները և այլն: Աշխատանքները տարբեր են, այդ պատճառով ել ամեն մի բջիջ ստանում ե իր աշխատանքի համար ամենահարմար ձևը: Նույն ընդհանուր աշխատանք կատարող նման բջիջները համախմբված են լինում միասին: Նման աշխատանք կատարող և նման ձև ունեցող բջիջների այդ համախմբումները կոչվում են հյուս վածքներ: Կան զանազան տեսակի հյուսվածքներ, որինակ, ծածկույթի հյուսվածք, վոր ծածկում ե բույսը դրսից և պաշտպանում նրան զանազան վտանգներից, մեխանիկական, վոր բույսին ամրություն և կայունություն ե առլիս, հյութատար, վորի միջոցով սննդաբար նյութերը շարժվում են բույսի մեջ՝ մի կողմից մյուսը և այլն:

ԱՐՄԱՏ

1. ԱՐՄԱՏԻ ԱՃՈՒՄԸ: — Սերմերի ծլման ժամանակ, ինչպես տեսանք, ամենից առաջ զարգանում ե արմատը և ապա ցողունը: Արմատը զարգանալով՝ շարունակ ուղղվում ե դեպի ցած, իսկ ցողունը՝ դեպի վեր: Յեթե սերմն ընկած ե լինում հողի մեջ այնպես, վոր արմատը դարձած ե լինում վեր, ցողունը՝ ներքև, այդ դեպի քում արմատը ծռվում ե դեպի ցած, ցողունը՝ դեպի վեր: Ի՞նչու համար ե արմատը միշտ դեպի ցած ուղղվում: Առաջները մարդիկ կարծում ենին, թե արմատը հողի պետք ունենալու համար ե ցած գնում: Բայց դա սխալ է: Յեթե վերցնենք մի մաղ կամ մի արկղ, վորի հատակին կան բազմաթիվ անցքեր, ածենք նրա մեջ սերմեր, լորու կամ սխեռի, և նրանց վրա յել խոնավ հողի մի հաստ շերտ և կափինք առաստաղից կամ վորեն այլ տեղից, քիչ անցած՝ սերմերը կծլեն և մենք կնկատենք, վոր արմատներն ուղղվում են վոչ թե դեպի վեր, հողի մեջ, այլ ընդհակառակը, անցքերի միջով դուրս են գալիս դեպի լույս աշխարհ, իսկ ցողուններն ուղղվում են վերև՝ հողի մեջ: Կնշանակե, արմատը հողի համար չե ուղղվում ցած և վոչ ել ցողունը լույսի համար՝ դեպի վեր: Այդտեղ դեր ե կատարում մի այլ ույժ: այդ ույժը Արմատի անումը յերկը ձգողականությունն ե, վորի ծայրից, շնորհիվ բոլոր մարմիններն ընկնում են ցած: Այդ ույժն ազդում ե նաև արմատի վրա:

Արմատն աճում ե միայն ծայրից: Յեզ ուրիշ կերպ չեր ել կարող: Նա ամրացած ե հողի մեջ բազմաթիվ ճյուղերով: յեթե աճեր ամբողջ յերկարությամբ, այն ժամանակ հնարավորություն չեր ունենա հողի միջով առաջ շարժվելու: Մինչդեռ ծայրից աճելով՝ նա հետզհե-



տե խորանում ե հողի մեջ։ Վոր արմատը ծայրից ե աճում, ցույց ե առլիս հետեւյալ փորձը։

Նոր ծլած սիսեռի՝ մոտ կես վերշոկ յերկայնություն ունեցող արմատի վրա յեթե վրձնի թեթև շարժումով փոքրիկ գծեր քաշենք, միմյանցից մի միլիմետր հեռավորության վրա, յերկու որից հետո, յերբ արմատն ավելի յերկարացած կլինի, կնկատենք, վոր արմատի բոլորովին ծայրին գտնվող գիծը մասցել ե իր նախկին տեղում, իսկ նրանց հետո յեկողները միմյանցից բավականին հեռացել են։ Դիտողությունը ցույց կտա նաև, վոր արմատի սկզբում յեղած բոլոր գծերը պահպանել են իրենց նախկին հեռավորությունը միմյանցից։ Կոշանակե, արմատն աճում ե իր ծայրին անմիջապես հաջորդող մասերում։



2. ԱՐՄԱՏԻ ԾԱՅՐԱՊԱՏՅԱՆԸ ՑԵՎ ՄԱԶԱՐՄԱՏՆԵՐԸ։— Ինչու արմատն իր բուն ծայրից չի աճում, այլ նրան հաջորդող՝ մասից։ Դիտելով արմատի ծայրը խոչըրացույց ապակով, կնկատենք, վոր նա ծածկված ե մի տեսակ


գլխարկով։ Այդ գլխարկը կոչվում է ծայրապատյան։ Սա բաղկացած ե իրար վրա նստած միքանի շերտ հաստ բջիջներից։ Այս բջջաշերտերից գրսիները շարունակ մեռնում, թափվում են։ Թափվածների փոխարեններսում առաջանում են նորերը։ Ահա այս պատճառով աճման ժամանակ արմատի ծայրը չի յերկարում, ծայրապատյանն արմատի համար ունի շատ մեծ նշանակություն։ Արմատի ծայրը բաղկացած է չափազանց քնքույշ բջիջներից։ ծայրապատյանը, ծածկելով այդ քնքույշ բջիջները, պաշտպանում ե նրանց զանազան վտանգներից։ Բացի դրանից, ինքը բաղկացած լինելով հաստ և ամուր բջիջներից, ծած-

մատները, ցում արմատի համար դեպի հողի խորքը,

ծայրապատյանից փոքր ինչ վեր արմատը ծածկված ե լինում բազմաթիվ բարակ թելիկներով։ Այս թելիկները կոչվում են մազարմատներ։ Արմատի վերին մասերում այդպիսի մազարմատներ մենք չենք նկատում։ Յերբ արմատն աճում յերկարում ե, հին մազարմատները թափվում են, իրանց փոխարեն նոր աճած մասերում առաջանում են նորերը։ Ահա այս ե պատճառը, վոր արմատի հին մասերի վրա յերգեք մազարմատներ չեն լինում։ Դիտելով մազարմատները մանրադիտակի տակ, նկատում ենք, վոր նրանք բարակ քնքույշ 1) Արմատը, 2) Արմատի ծայրապատյանը։

3. ԱՐՄԱՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ։— Բույսի արմատը, ինչ-

պես տեսանք, զարգանում է սաղմի տրմատիկից։ Լորու, սիսեռի և մի շարք ուրիշ բույսերի սաղմային արմատիկները զարգանալով՝ հետզհետեյերկարում են և վերջը դառնում, այսպես ասած, գլխավոր արմատ։ Գլխավոր արմատ կոչվում է առհասարակ այն արմատը, վոր զարգանում ե անմիջապես սաղմի արմատիկից։ Գլխավոր արմատից բոլոր կողմերի վրա դուրս են գալիս կողմանակի ճյուղեր։ ուրանք ել իրենց հերթին նոր ճյուղեր են տալիս և այդպիսով սաղմի արմատից հետզհետե զարգանում ե մի մեծ և բարդ արմատ։ Միքա-



Գլխավոր արմատ։




1)



2)

նի բույսերի, որինակ, մեղ մոտ տարածված ծառերի մոտ, կողմանակի արմատներն այնպես ուժեղ կերպով են հաստանում, մեծանում և ճյուղավորվում, վոր դժվար ել լինում տարբերել նրանց գլխավոր արմատից: Այսպիսի արմատը կոչվում ե նյուղավորյալ: Ուրիշ բույսերի, որինակ, գաղարի, բողկի, արեածաղկի, սիսեռի մոտ գլխավոր արմատն արձակում ե իրենից միայն փոքրիկ կողմնակի ճյուղեր, իսկ ինքը, ընդհակառակը, հաստանում զարգանում ե և խորանում հողի մեջ: Այսպիսի արմատն ել կոչվում ե իլիկաձեվ: Սակայն կան բույսեր ել, մորոնց գլխավոր արմատը բոլորովին չի զարգանում. զարդանում են ցողունի հիմքից դուրս յեկող մի շարք թելանման արմատիկներ, վորոնք միասին մի փունջ են կազմում: Այդպիսի արմատը կոչվում ե փնջաձեվ արմատ: Փնջաձեվ արմատ ունեն ցորենը, գարին, խոտերը և այլն:



Փնջաձեվ արմատ

4. ԱՐՄԱՏԻ ԴԵՐԸ:—Արմատի գլխավոր դերն այն է, վոր բույսը հաստատում ե հողի մեջ և նրանից վերցնում այն բոլոր սննդարար նյութերը, վորոնք անհրաժեշտ են բույսի համար: Բայց ինչպես ե վերցնում արմատն այդ նյութերը հողից: Մենք տեսանք, վոր ամբողջ բույսը, ուրեմն և արմատը, բաղկացած են բջիջներից և բջիջներն ել դրսից պատաժ են մաշկերով: Այս մաշկերի վրա վոչ մի անցք չկա, ուրեմն ամուր վիճակի մեջ գտնվող նյութերն արմատի մեջ մտնել չեն կարող: Արմատի մեջ կարող ե մտնել միայն հեղուկային նյութ, ասել ե, ջուր և նրա մեջ լուծված զանազան նյութեր: Արմատի վրա, ինչպես գիտենք, կան մաշկարմատներ: Ահա այս մաշկարմատներն են,

վոր ծծում են դեպի իրենց հողի մեջ գտնվող ջուրը՝ մեջը լուծված նյութերով: Զուրը սկզբում ամբարվում ե մազարմատների մեջ. յերբ սրանը բոլորովին լցվում են, այն ժամանակ, ճնշման աղբեցության տակ, նրա մեջ գտնվող ջրի ավելորդ մասը ծծում ե հարևան բջիջների մեջ, սրանցից ել մյուս բջիջների մեջ: Այսպիսով բջիջից բջիջ անցնելով ջուրը վերջապես հաստանում է արմատի մեջ գտնվող առանձին խողովակներին կամ անոթներին: Սրանց մեջ հավաքվելով ջուրը հետզհետեւ բարձրանում է վերև՝ ցողունի միջով:

5. ԱՐՄԱՏԱՅԻՆ ՃՆՇՈՒՄՆ:—Այն ույժը, վորով հողից ստացած ջուրը բարձրանում է վեր, չափազանց մեծ է: Այդ ույժը կոչվում է արմատային ճնշումն, վորովինեւուե, իրոք, արմատը, շարունակաբար հողից ջուր ծծելով, մղում ե նրան դեպի ցողունը և այդպիսով վեր բարձրացնում: Յեթե գարնանը վորեւ բույս կտրենք արմատի մոտից, կնկատենք, վոր բավական յերկար ժամանակ կտրված տեղից ջրի կաթիլներ են դուրս գալիս և ցածթափում:

Երմատային ճնշումն ույժը մենք կարող ենք չափել: Դրա համար պետք է կտրենք գարնան մի բույս արմատի մոտից և ըեղին խողովակի միջոցով միացնենք նրա հետ մի կտոր ապակյա խողովակ, վորի մեջ ածված և մնդիկ: Արմատային ճնշումը մղելով ջուրը ցողունից խողովակի մեջ՝ հետզհետեւ կսկսի բարձրացնել մնդիկը: Փորձը ցույց ե տվել, վոր այդ ճնշումն այնքան մեծ է, վոր կարողանում է բարձրացնել մնդիկն ավելի քան 30 դյույմ: Բայց մնդիկը ջրից ծանը ե 13 $\frac{1}{2}$ անդամ: Կնըշանակե, արմատային ճնշումը ջուրը կարող է բարձրացնել 5 սաժենից ավելի:

Այդպիսի արմատային ճնշումը կարող է առաջանալ միայն ժամանակ, յերբ արմատի մեջ մտնի մեծ չափով ջուր: Յեվ արմատի մեջ, իսկապես, ահազին քանակությամբ ջուր է մտնում: Լավ զարգացած մեծ կեշի ծառը որվա մեջ հողից ծծում է 7—8, իսկ ամառը, շու-

գերին՝ մինչև 30 դույլ ջուր: Յեվ այդքան ջուրը ծծում է նա իր արմատների վրա զանգած մազարմատներով: Ինչպիսի յերկարություն պիտի ունենան արմատներն ու մազարմատները, վոր բույսը կարողանա որվա ընթացքում այդչափ ջուր ծծել: Մարդիկ հաշվել են, վոր ցորենի արմատի յերկարությունը, յեթե, իհարկե, գումարենք նրա բոլոր արմատիկները միասին, հասնում ե մոտավորապես կես վերստի, իսկ յեթե հաշվենք արմատիկների վրա յեղած մազարմատներինը, վորոնց թիվը մոտ 10 միլիոն ե, կհասնի գրեթե 20 վերստի: Շնորհիվ այդպիսի յերկարության բույսի արմատներն իրենց վրա յեղած մազարմատներով այնպես խիտ կերպով պատում են հողը, վոր ջրի վաչ մի կաթին իգուր չի կորչում:

Արմատային մազարմատներն արմատի վրա շարունակ իրենց տեղը փոխում են, արմատի հին մասերից թափում են նրանք և դուրս գալիս նոր տռաջացածների վրա: Յեվ այդ ահապին նշանակություն ունի, վորովհետեւ շնորհիվ այդ հանդամանքի՝ արմատը հնարավորություն և ստանում մնունդ վերցնելու հողի նորանոր մասերից:

Պետք ե ուշադրություն դարձնել արմատի և մի այլ հատկության վրա: Նա հողի մեջ աճում և զարգանում ե այն ուղղությամբ և հողի այն մասերում, վորտեղ ավելի սնունդ և խոնավություն կա: Արմատի այդ հատկությունը հաստատվում է հետեւյալ վործով: Վերցնենք մի ծաղկաման, խավաքարտով կամ փայտե բարակ տախտակով բաժանենք նրան միջից յերկու մասի, մի մասի մեջ ածենք պարարտ սևահող, մյուսի մեջ՝ մաքուր ավագ: Ասպա հանելով խավաքարտը կամ տախտակը՝ սևահողը ավաղից բաժանող գծի ուղղությամբ ցանենք միքանի հատ լորու սերմ: Վորոշ ժամանակից հետո այդ սերմերից կառաջանան լորու փոքրիկ տունկեր: Յեթե այնուհետեւ զգուշությամբ հանենք նրանց հողից և դիտենք, կտեսնենք, վոր նրանց արմատները զարգացել են զլիավարապես սևահողի մեջ: Այս նույն փորձը կարող ենք կատարել և այլ ձևով: Ծաղկամանի մեջ կածենք շերտ-շերտ իրար վրա սևահող և ավագ և կաճեցնենք նրա մեջ վորենք

բույս: Զգուշությամբ հանելով նրան հողից, դարձյալ նույն յերկությունը կտեսնենք. Նրա արմատները ճյուղավորված և զարդացած կլինեն զլիավարապես սևահողի շերտերում:

ԽԶ Ե ՍՏԱՆՈՒՄ ԲՈՒՅՍՈՒ ՀՈՂԻՑ

1. ԲՈՒՅՍԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԻ: — Մենք տեսանք, թե բույսը ինչպես ե մնունդ վերցնում հողից. բայց կա մի հարց ես. ինչ նյութեր ե վերցնում նա հողից: Այս հարցին պատասխանելու համար ամենից առաջ պետք ե իմանանք, թե ինքը բույսն ինչ բաղադրություն ունի, այսինքն ինչ նյութերից ե նա կազմված: Յեթե այդ իմացանք, մեղ համար պարզ կլինի այնուհետեւ, թե ինչ նյութեր են անհրաժեշտ բույսի մնողառության համար:

Բույսի բաղադրությունն իմանալու համար ամենից առաջ չորացնում են բույսը, այսինքն հեռացնում են նրա մեջ գտնված ջուրը: Չորացած բույսն այնուհետեւ այրում են: Պարզ ե, վոր նա ամբողջովին չի այրվում. տակը մնում է մոխիր: Ասել ե, բույսը կազմված է այրվող և չայրվող նյութերից: Այրվող նյութերը կոչվում են գործարանավոր, չայրվողները՝ անգործարան կամ հանքային նյութեր: Ուսումնասիրելով գործարանավոր նյութերը՝ գիտնական-ները գտել են, վոր նրանք բաղկացած են չորս պարզ մարմիններից՝ ածխածնից, ջրածնից, բրվածնից յև բորակածնից: Այս մարմինների մեջ ամենակարենը տեղը բռնում է ածխածնինը. Նա կազմում է չորացրած բույսի համարյա կեսը, Յեվ իրոք, յերբ բույսն ածխածնում են, այսինքն այրում են առանց ողի հոսանքի, ստանում են բավականին մեծ քանակությամբ ածուխ. իսկ ածուխը համարյա մաքուր ածխածնին է: Այսուհետեւ հետազոտելով մոխիրը՝ գիտնականները գտել են նրա մեջ ահապին թվով նյութեր, սակայն փորձերը ցույց են տվել, վոր նրանցից միայն վեցը կարեռություն ունեն և գտնվում են միշտ բռնուր բույսերի մեջ*: Ուրեմն, բույսի չոր նյութի մեջ

* Կալիոն, կրածին, մազնեղին, յերկաթ, ծծումբ և լուսածին.


գտնվում են ածխածին, թթվածին, ջրածին, բորակածին, և մոխրի մեջ գտնվող վեց պարզ մարմինները։ Ահա այս 10 պարզ մարմինները կազմում են յուրաքանչյուր բույսի անհրաժեշտ սննդարար նյութերը, առանց վորոնց բույսն աճել չի կարող։

Բայց վհրաեղից ե վերցնում բույսն այդ մարմինները Սկզբում մարդիկ կարծում եին, թե այդ մարմինները բույսը վերցնում ե հողից։ Սակայն պարզվել է, վոր այդ սխալ է։ Մեզնից գեռն յերեք հարյուր տարի առաջ մի գիտնական կատարել է մի հետաքրքրական փորձ։ Նա վերցրել է մի մեծ ծաղկաման, մեջը ածել է 200 ֆունտ վասարանի մեջ լավ չորացրած հող և տնկել է մեջը մի ուռենու ճյուղ, վոր կշռում եր 5 ֆունտ։ Հինգ ուարուց հետո ճյուղից զարգանում է մի կատարյալ ծառ։ Այսուհետեւ հանում ե նա ուռենին ծաղկամանից, մաքրում ե արմատները հողի մասնիկներից և չորսցնելուց հետո կշռում։ Դուրս է գալիս, վոր ուռենին կշռում է 4 փութ։ Նա կշռում է նաև այն հողը, վորի մեջ ապրել է ուռենին և նկատում է, վոր հողը պահպան է ընդամենը $\frac{1}{7}$ զրգանքա։ Կնշանակե, 4 փութ փայտ պատրաստելու համար ուռենին հողից վերցրել է միայն արդքան նյութ, մնացածը նա ուրիշ տեղից է վերցրել։ Փորձերը ցույց են տվել, վոր բույսը հողից վերցնում է միայն հանքային նյութերը և բորակածին։ Յեզ վորով հետև բոլոր հանքային մարմիններից բույսի համար անհրաժեշտ են միայն 6-ը, ուրեմն, նրա կանոնավոր աճման համար հողի մեջ անպատճառ պիտի լինեն միայն այդ 6 մարմիններն ու բորակածին։

2. ԶՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ.— Վոր բույսը կարիք ունի հողից վերցնելու միայն այդ վեց մարմինները և բորակածին, հաստատվում է հետեւյալ փորձով։ Վերցնում են մաքրու վերաթորած ջուր և մեջը լուծում բույսի համար անհրաժեշտ վեց մարմինները և բորակածին։ Այդ մարմիններից շատերը գորովճեան ջրի մեջ չեն լուծվում, դրա համար վերցնում են այնպիսի բարդ նյութեր, վորոնց

մեջ կան այդ մարմինները և միաժամանակ լուծելի յեն ջրի մեջ, որինակ, զանազան տեսակի աղեր։ Դրանցից կազմում են մի խառնուրդ և լուծում վերաթորած ջրի մեջ։ Այդպիսի լուծույթի մեջ դնում են այնուհետեւ նորածիլ բույսեր։ Փորձը ցույց է տվել, վոր այնտեղ բույսերն աճում են ճիշտ այնպիսի ինչպիս կածեյին պարարտ հողի մեջ։ Խնամքի դեպքում բույսերն այնուեղ վոշ միայն աճում, մեծանում են, այլ և ծաղկում, պատող ու սերմեր են տալիս։ Յեթե ջրի մեջ լուծված նյութերի մեջ պակասում է բույսի համար անհրաժեշտ մարմիններից վորեւ մեկը, բույսը կամ բոլորովին չի զարգանում կամ լինում է փոքրիկ, թույլ և շուտով թափանում է։ Այդպիսի ջրային լուծույթի մեջ բույսերի աճեցումը կոչվում է չրային կուլտուրա։

Այդպիսի ջրային կուլտուրա կարող ենք պատրաստել և մենք։ Դրա համար պիտի վերցնենք միքանի տեսակ աղեր և կազմենք նրանցից մի խառնուրդ։ Այդ աղերն են՝ կրածնի բորակատ, կալիսնի բորակատ, կալիսնի լուսածնատ, մագնեզիոնի ծծմբատ ¹⁾ աղերից դուրք չըում աճած բույս։ Բոլոր անհրաժեշտ աղերը պարունակող ջրի ²⁾ մեջ աճած բույս։ Ճնատ, Խառնուրդ կազմելու ժամանակ առաջին աղեր,



կրածնի բորակատից, պետք եւ վերցնենք յերկու մաս, մյուսներից մի-մի մաս, իսկ յերկաթի լուսածնատից մի աննշան քանակություն։ Այսուհետև խառնուրդի յերկու մասը պիտի լուծենք հազար մաս ջրի մեջ, այսինքն յեթե վերցնում ենք խառնուրդից յերկու գրամ, ապա դա պիտի լուծենք հազար գրամ կամ մի լիտր ջրի մեջ։ Պատրաստելով այդ ձևի լուծույթ՝ պետք եւ ածենք այն մի բանկայի մեջ և մեջը դնենք նորածիլ լոբի, սիսեռ կամ փորեռ այլ բույս։ Յեթե խառնուրդ կազմելու ժամանակ մոռանանք կամ դիտմամբ չվերցնենք վերոհիշյալ աղերից փորեռ մեկը, բույսը շատ թույլ կամ բոլորովին չի աճի։

Չըային կուլտուրան ցույց եւ տալիս, վոր բույսի աճման համար հողը չե, վոր անհրաժեշտ ե, այլ նրա մեջ գտնված հանքային նյութերը, Յեկ իրոք, յեթե հողի մեջ պակասում ե բույսի համար անհրաժեշտ հանքային նյութերից փորեռ մեկը, բույսի աճումը դանդաղում կամ դադարում ե, իսկ յեթե այդ հանքային նյութերը հողից դուրս լուծում ենք ջրի մեջ, բույսը նրա մեջ աճում ե ճիշտ այսպես, ինչպես կամեր պարարտ հողի մեջ։

ՏԵՐԵՎ

Մենք ծանոթացանք արմատի կազմության և նշանակության հետ, այժմ ել ծանոթանանք բույսի մի այլ գործարանի՝ տերեվի հետ։ Նախ տեսնենք, թե նա ինչպիսի կազմություն ունի։

ՏԵՐԵՎԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Տերեվների ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԸ.— Տերեվներն ունեն շատ բազմազան ձևեր, այդ պարզ կերպով նկատելի յեմեր ըրջապատի բույսերի տերեների վրա։ Նրանք առհասարակ բաղկացած են յերկու մասից, մի լայն տափակ թերթի նման մասից և մի բարակ, յերկարուկ մասից։ առաջինը կոչվում է թիթեղ, յերկը որդղ՝ կորուն, կոթունով տերեւը միանում է ցողունի հետ։ Կան տերեներ, փորոնք զուրկ են կոթունից. դրանց թիթեղն անմիջապես

և միանում ցողունի հետ։ Այդպիսիները կոչվում են նաև ադիր տերեներ։ Նատադիր տերեներներ ունեն, որինակ, խոտերը, հացարույսերը և այլն։

Տերեների թիթեղները լինում են շատ տարբեր ձևերի։ Նրանք յերբեմն կլոր են լինում, յերբեմն ել ունենում են ձվի, սրախ, նըշտարի, յերիկամունքի, ասեղի և այլն ձև։ Թիթեղների ունեցած ձևի պատճառով տերեները կոչվում են կլոր, ձվաձեղի, սրաձեղ, նըշտարաձեղների և այլն։ Տարբերվում են թիթեղները և իրենց յեզրերով։ Նրանց մի մասի յեզրերը կտըրտվածքներ չեն ունենում, մյուսներն, ընդհակառակը, կտըրտված

նատադիր տերեն։



Կլոր տերե.

Ձվաձեղ տերե.


Սրածեղ տերե. Նըշտարաձեղ տերե։

թիթեղները կամ ուժեղ կերպով կարտագ ածք ներթափակ չունեցողները կոչվում են թիթեղներ։ Գերեսում ասեղնաձեղ տերե, ներթափակ գծածեղ տերե, փոքր կտըրտվածքներ ունեցողները՝ աւամինավոր,

իսկ մեծ կտրտվածքներ ունեցողները՝ բլրակավոր տերեներ: Յերբեմն կտրտվածքները շատ խորն են գնում և թիթեղը բաժանում միքանի առանձին տերեիկների. այդ դեպքում տերեն կոչվում է բարդ: Յերբ այդպես տուաջացած տերեիկները միանում են միմյանց հետ մի կետում, տերեն կոչվում է մատնաձեվ, իսկ յերբ տերեիկները շարպած են լինում տերեսակոթի վրա՝ աջ և ձախ կողմերում, կոչվում է փետրաձեվ: Յերբեմն փետրածն տերեիկ վոքրիկ տերեիկներն իրենց հերթին բաժանվում են կըկին ավելի մանրիկ տերեիկների. այդ դեպքում տերեն կոչվում է բարդ փետրաձեվ:




Բլրակավոր տերեն:



Զանազան ձևի բարդ տերեկներ: 1, 2 լիլ 4) Փետրաձեվ տերեկներ. 3) Բարդ փետրաձեվ տերեն. 5) Մատնաձեվ տերեն: Վը առածված են բազմաթիվ ջղեր. որանք ավելի

նկատելի յեն մանավանդ ստորին յերեսի վրա: Տերեների մի մասի մեջ այդ ջղերը դուրս գալով կոթունից կամ տերենի հիմքից՝ զուգահեռաբար գնում են տերենի ամբողջ յերկարությամբ մինչև նրա ծայրը, առանց ճյուղեր արձակելու: Այդպիսի ջղեր ունեցող տերենը կոչվում է զուգահեռաջիղ տերեն: Մյուսների մեջ, ընդհակառակը, կոթունից կամ տերենի հիմքից դուրս են գալիս մեկ կամ միքանի ջղեր, վորոնք աջ և ձախ ճյուղեր են արձակում և կազմում թիթեղի մեջ ջղերի մի ամբողջ ցանց: Այդպիսի ջղեր ունեցողներն ել կոչվում են ցանցաջիղ տերեներ: Ջղերը թիթեղի մեջ տարածվելով զանազան ուղղությամբ կամ գնալով իրար զու-



Տերեվիերի զանազան ձեվի նստվածքներ:


Հերադիր կամ փոփոխադիր. Հակադիր.

Ողակաձեվ:

գահեռաբար՝ քնքույշ թիթեղին բավական մեծ ամրություն են հաղորդում, վորի շնորհիվ նա դիմանում է քամուն, անձրենի կաթիլների հարվածներին և այլ վտանգների:

Տերբեր եւ և տերեների նստվածքի ձեր: Յերեկն տերեները նստում են ցողունի տարբեր կողմերում: Տերեների այդպիսի նստվածքը կամ դասավորությունը ցողունի վրա կոչվում է հերթաղիք կամ փոփոխադիր: Յերեկն ել տեսնում ենք, վոր տերեները նստած են լինում զույգ-զույգ ցողունի միևնույն բարձրության վրա և իրարդեմ առ դեմ: Այսպիսի նստվածքն արդեն կոչվում է հակադիր: Պատահում ե նաև, վոր միքանի տերեներ դուրս են գալիս ցողունինույն բարձրությունից կամ կազմում են նրա շուրջը մի ողակ: Այս ձեր նստվածքն ել կոչվում է ողակաձեվ:

2. Տերեզի ՆԵՐԹԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ:—Տերեի ներքին կազմությունը կարող ենք զիտել միայն միկրոսկոպով: Դիտելով այդ գործիքով տերեի բարակ կտրվածքը՝ կնկատենք, վոր նրա վերին և ստորին յերեսների վրա գտնվում են մի շարք տափակ, թափանցիկ և հաստպատերով բջիջներ: Արանք միասին կազմում են տերեի մաշկը, վոր բարակ թաղանթի ձևով պատում ե տերեի յերեսները: Տերեի վերին յերեսը ծածկված ե լինում մոմային նյութի մի բարակ շերտով: Արա շնորհիվ տերեի վրա թափված ջուրը նրան չի խոնավացնում և սահելով նրա վրայով թափվում ե ցած: Միքանի տերեներից այդ մաշկը հեշտությամբ պոկվում է, բարակ թափանցիկ թաղանթի ձևով: Մաշկը տերեին տալիս ե ամրություն և պաշտպանում ե նրա ներսում յեղածքնույց միջուկը զանազան վտանգներից:



Քլորֆիլի համեմետ պարունակող
թիզուներ:


և քնքույց բջիջներից, վորոնք լցված են պրոտոսպլազմա-

յով և պարունակում են իրենց մեջ մեծ քանակությամբ քլորոֆիլի հատիկներ: Շնորհիվ այդ հատիկների յերեր կանաչ գույն ե ստանում: Տերեի միջուկի վերին մասում բջիջներն յերկարուկ ձեւ ունեն և դասավորված են խիտ կերպով իրար կողք-կողքի: Այդպես չեն ստորին մասի բջիջները: Արանք վորոշ ձեւ չունեն և շատ նոսր են դասավորված: Նրանց արանքում կան ազատ տարածություններ՝ լցված ողով: Այդ տարածությունները կոչվում են միջրջիջային տարածություններ:

Ողը մանում ե տերեի ներսը թաղանթի մեջ գտնվող հերձանցք կոչվող առանձին անցքերով: Այդ անցքերը դիտելու համար վերցնում են տերեի ստորին յերեսի թաղանթը և նայում մանրադիտակով: Վերջինիս միջոցով պարզ կերպով յերեսում ե, վոր թաղանթի անգույն բջիջների արանքում գտնվում են զույգ-զույգ դասավորված քլորոֆիլ պարունակող կիսալուսնաձև բջիջներ: Այս բջիջներն իրենց գործակոր կողմերով դարձած են իրար և կազմում են իրանց արանքում մի անցք, վոր տանում ե դեպի բջիջի ներսը: Տերեի այս անցքերը կարող են մեծանալ, փոքրանալ և կամ բոլորովին փակվել: Տերե անցք առաջացնող բջիջներն ավելի ուռուցիկ են դառնում, Յերկու հերձանցք տերեի մասի վրա անցքը մեծանում է,

(խիստ մեծացրած):

իսկ յերբ, ընդհակառակը, ուղղվում են, անցքը փոքրանում և կամ բոլորովին փակվում: Անցքերի թիվը տերեի վրա չափազանց մեծ է: Լազնու տերեն, որինակ, ունի մոտ մի միլիոն, իսկ արևածաղկի տերեի՝ մինչև 13 միլիոն անցք: Անցքերը մեծ մասամբ դասավորված են տերեի ստորին յերեսի վրա, վորովհետեւ այդտեղ նրանք ավելի լավ կարող են պաշտպանվել թե փոշուց և թե անձրեի ջրից:



ՏԵՐԵՎՆ ԻԲՐԵՎ ՍՆՍԴԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ


1. Ածհնակութիւնը ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ՏԵՐԵՎՆԵՐԻ ՄԻԶՈՅՈՎ:—Տեսնենք այժմ, թե տերեւն ի՞նչ նպատակների յեւ ծառայում: Զրային կուլտուրայի մեջ աճեցնելով բույսը՝ տեսանք, վոր հողից վերցնում եւ նա միայն հանգային նյութեր և բորակածին: Բայց բույսի մեջ կա նաև ածխածին, ջրածին և թթվածին: Զրածինն ու թթվածինը նա կարող է ստանալ ջրեց, վորովհետեւ ջուրը հենց այդ մարմիններից և բաղկացած: Հարց եւ առաջանում, վորտեղից եւ հապա վերցնում նա յերբորդ նյութը՝ ածխածինը:

Սյս հարցին գիտությունը յերկար ժամանակ չեր կարողանում պատասխանել: Մեզնից ավելի քան յերկու հարյուր տարի առաջ մի գիտնական փորձելով ցույց տվեց, վոր բույսը կարող է ողը մաքրել: Նա այսպիսի փորձեր կատարեց: Վերցրեց յերկու ապակյա անոթ, նրանցից յուրաքանչյուրի մեջ գցեց մի-մի մուկ և անոթներն ամուռ կերպով փակեց այսպես, վոր դրսից այլես ոդ չմտնի ներս: Քիչ ժամանակից հետո մկներն այնտեղ խեղզվեցին: Այսուհետեւ նա անոթներից մեկի մեջ դրեց մի բույս և կրկին յերկուսի մեջ գցելով մի-մի մուկ՝ նույն ձեռվ փակեց: Բանից դուրս յեկավ, վոր բույսից գուրկ անոթի մեջ մուկը կրկին կարձ ժամանակից հետո խեղզվեց, իսկ մյուսի մեջ յեղողը՝ մասց վողջ բավական յերկար ժամանակ: Պարզ եւ, պետք եւ յենթադրել, վոր բույսն այնտեղ մաքրում եր շնչառությունից փչացող ողը: Հայտնի յեւ, վոր շնչառության ժամանակ կենդանին վերցնում եւ ողից թթվածին և արձակում ածխաթթու. ուրեմն, վորպեսզի ողը մաքրվեր, հարկավոր եւ, վոր կատարվեր հակառակ գործողությունը: Յեվ իրոք, այդպես ել լինում եւ: Բույսն ոդից վերցնում եւ ածխաթթու դաղ և արձակում իրենից թթվածին:

Սակայն, այդ մեր գիտնականի փորձերը շարունակ հաջող չելին անցնում: Պատահում եր յերբեմն, վոր բույս

պարունակող անոթի մեջ կենդանին ավելի շուտ եր խեղդվում, քան մյուսի մեջ: Հետագայում միայն մի այլ գիտնական անհերքելի փորձերով հաստատեց, վոր բույսն ողը մաքրում եւ միայն ցերեկը, արեգակի լույսի տակ յեղած ժամանակ, իսկ գիշերը կամ մթության մեջ առհասարակ, նա նույնպես կենդանու նման ողից վերցընում եւ թթվածին և արձակում իրենից ածխաթթու դաղ:

Բայց բույսն ի՞նչու համար եւ վերցնում ածխաթթու դաղ և արձակում թթվածին: Յերկար փորձերից հետո գիտնականները պարզել են նաև այդ հարցը: Ածխաթթուն մի բարդ մարմին եւ բաղկացած ածխածնից և թթվածնից և անա պարզվել եւ, վոր բույսը վերցնելով ածխաթթուն ողից՝ արեգակի լույսի ազդեցության տակ բաժանում եւ նրա բաղադրիչ մարմինները՝ թթվածինն ու ածխածինը միմյանցից: Ածխածինն այնուհետեւ պահում եւ իր մեջ, իսկ թթվածինն արձակում: Վոր իրոք բույսի մեջ կատարվում եւ այդ գործողությունը, պարզ յերեցվում եւ հետեւյալ փորձից: Վերցընենք մեծ բանկա, դնենք մեջը միքանի տերեւ, ավելի լավ՝ մի ջրային բույս և ծածկենք վերջինս մի ձագարով: Հետո լցնենք բանկան ջրով և հագցնենք ձագարի ծայրին ջրով լիքը մի փորձանակ: Այսուհետեւ բանկայի ջուրը հագեցնենք ածխաթթու գաղով, վորի համար հարկավոր եւ միայն փշել խողովակով մի առ ժամանակական ջրի մեջ: Այդ կատարելուց հետո բանկան դնենք արքեկի լույսի տակ: Փոքր ինչ անցած՝ կնկատենք, վոր բույսի կանաչ մասերից ոկում են պոկել գաղի փոքրեկ ողղողջակներ, վորոնք վերաբանալով՝ հավաքվում են փորձանակի մեջ: Յեթե բանկան ծածկենք արքեկի լույսից՝ պղպջակների առաջացումը



Տերեվի սննդառույթունը
ցույց տվող փորձը:

կսկսի դանդաղել և վերջն ել բոլորովին կդադարի: Բայց հենց վոր նորից լույսի տակ դնենք, կը կին կսկսվի պըզ-պըզակների առաջացումը: Փորձանակն ամբողջովին գազով լցվելուց հետո, յեթե զգուշությամբ հանենք ջրից՝ մատով բերանը փակած և մտցնենք մեջը մի այրվող փայտիկ, վերջինս իսկույն կը ոցավառվի: Պարզ ե, ուրեմն, վոր փորձանակի մեջ հավաքված գազը թթվածին ե, Յեթե բանկան լցնենք յեռացրած ջրով և ապա դնենք արեր լույսի տակ, պղպջակներ չեն առաջանա, վորովեան այդպիսի ջրի մեջ ածխաթթու չի լինում. բայց բավական ե, վոր մենք փոքր ինչ խողովակով փշենք ջրի մեջ, իսկույն կսկսի պղպջակների առաջացումը: Յեկ այդ հասկանալի յեւ: Փշելու ժամանակ ջուրն ստանում ե ածխաթթու գազ:


Մեր փորձի ժամանակ բույսն ածխաթթուն վերցրեց ջրից, բնության մեջ, սակայն, բույսերն այդ գազը վերցնում են ողից իրենց տերեներով: Կնշանակե, բույսերը սնվում են ողով: Նրանք ողից վերցնում են իրենց սննդի ամենակարեւը՝ մասը՝ ածխածինը, վոր կազմում ե, ինչպես իմացանք, բույսի ամբողջ չոր նյութի գըեթե կեսը:

Բույսի ողից ածխաթթու վերցնելը և թթվածին արձակելն ահագին նշանակություն ունի բնության մեջ: Յեթե այդ չլիներ, այն ժամանակ շնչառությունից ողի մեջ յեղած թթվածինն այնքան կքչանար և ածխաթթուն, ընդհակառակը, այնքան կշատանար, վոր կենդանի եյակները նրա մեջ կիսեղդվեյին, ճիշտ այսպես, ինչպես մկները խեղդվում են փակ անոթների մեջ: Ուրեմն, յեթե կյանքը պահպանվում ե յերկրագնդիս վրա, այդ շնորհիվ բույսերի յեւ: սրանք շարունակ մաքրում են ողը և շնչառության համար պետքական դարձնում այն:

2. ՈՍԼԱՅԻ Ա.Ռ.Ա.ԶՈՒՄԸ:—Ածխաթթուն մտնում է տերեի մեջ անցքերի, միջով՝ ողի հետ միասին: Այստեղ վեր ե լուծվում նա թթվածնի և ածխածնի. թթվածինը դուրս ե գալիս, իսկ ածխածինը մնում է տերեի մեջ՝ ի՞նչ և լինում այնուհետեւ ածխածինը: Ուսումնասիրությունը ցույց ե տվել, վոր նա բաժանվելով թթվածնից:

անմիջապես միանում ե ջրի հետ և կազմում մինոր բարք մարմին, այն ե՝ ուլա:

Վոր իրոք այդ գեպքում տերեների մեջ ուլայե առաջնում, պարզ յերեսում ե հետեւյալ փորձից: Վերցնենք յերկու բույս. մեկը դնենք մթության մեջ, մյուսը՝ արեր լույսի տակ: Վերջինս, ինչպես գիտենք, ածխաթթու գազից կվերցնի ածխածին, մինչդեռ տուաջինը մթության մեջ այդ անել չի կարող: Յերեք որից հետո, յեթե կը տրենք այդ բույսերից մի-մի հատ տերեկ և յեփ աանք նրանց սպիրտի մեջ, յերկուսն ել կկորցնեն իրենց կանաչ գույնը, վորովեան նրանց քլորոֆիլը կլուծվի սպիրտի մեջ: Այսուհետեւ այդ անգույն տերեները մտցնելով յոդի մեջ՝ կնկատենք, վոր այն տերեկը, վոր յեղել ե լույսի ազդեցության տակ, անմիջապես մուգ կապույտ գույն ե ընդունում, մինչդեռ մյուսը մնում ե նույն անգույն տերեկը: Պարզ ե, վոր ուլա կա միայն այն տերեկի մեջ, վոր յեղել ե լույսի տակ:



Զանազան ձեվի ուլայի հատիկներ:


Դիտելով ուլա պարունակող տերեկը մանրադիտակով, կտեսնենք, վոր ուլան գտնվում ե քլորոֆիլի հատիկների մեջ փոքրիկ մասնիկներով: Քլորոֆիլի հատիկները, կը ն-

շանակե, այս գործարաններն են, ուր ողի ածխաթթուն վեր և լուծվում և նրա ածխածինը միացվելով ջրի հետ՝ պատրաստվում ե ոսլա: Ուրեմն, բույսի միայն կանաչ մասերը կարող են ոսլա պատրաստել, վորովհետեւ միայն նրանք են, զոր պարունակում են իրենց մեջ քլորոֆիլի հատիկներ:

Բայց ի՞նչ է լինում այնուհետեւ ոսլան, նուան, ի՞նչ-պես գիտենք, կարող ե փոխարկվել շաքարի, ի՞նչպես այդ լինում է ծըղ սերմերի մեջ: Առա ճիշտ այդովես, տերեների մեջ նա ևս շաքարի յե փոխարկվում և տերեկի մեջ յեղած ջղերով դուրս ե տարվում դեպի բույսի զանազան մասերն իրեն սնունդ: Նուան առաջին գործարանավոր նյութն ե, զոր պատրաստվում ե բույսի մեջ: Նրանից են այնուհետեւ պատրաստվում մյուս բոլոր նյութերը, որինակ, զանազան տեսակի բուսական յուղերը, բջիջների թաղանթները և այլն: Վերջապես նա յե, զոր միանալով բուրակածնի, լուսածնի և ծծումքի հետ՝ առաջ ե բերում պրոտոպլազման: Ամբողջ ոսլան միանգամից իրը սնունդ յերբեք զործ չի ածվում: Նրա մի մասն ամբարվում և այս ու այնտեղ և պահվում ե իրեն պաշար: Կարտոֆիլի գունդը լիքն և ոսլայով, նույնը և ցորենի, բրինձի հատիկը: Յերբեմն բույսն ոսլան փոխում ե շաքարի և այնպես պաշար ամբարում, որինակ՝ ճակնդեղի արմատի կամ զանազան պտուղների մեջ, յերբեմն ել յուղեր և շինում, որինակ, արեածաղկի և այլ զանազան սերմերում:

Այս բոլորից յերեսում ե, զոր տերենները բույսի սննդառության ամենակարևոր գործարաններն են: Դրանք են, զոր իրենց քլորոֆիլի հատիկների մեջ պատրաստում են անգործարան մարմիններից՝ ածխածնից և ջրից՝ գործարանավոր մարմիններ: Վոչ մարդ և վոչ ել կենդանիներն այդ ձեռվ գործարանավոր նյութեր չեն պատրաստում: Նրանք սնվում են միայն այս նյութերով, զոր պատրաստվում են բույսի կանաչ տերենների մեջ: Կնշանակե, յեթե յերկրիս զրա կանաչ բույսեր չլինելին, վոչ մարդ և վոչ ել կենդանիները չելին կարող ապրել:

3. ԼՈՒՅՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:—Ածխաթթվի վերլուծումն իր բաղադրիչ մարմիններին, նույնակես և ոսլայի առաջացումը տեղի յե ունենում, ինչպես տեսանք, արեկ լույսի ազդեցության տակ: Ասել ե, լույսը բույսի թե սննդառության և թե կյանքի համար անհրաժեշտ պայման ե: Յեվ իրոք, յեթե մի լով զարգացած բույս յերկարժամանակով դնենք մթության մեջ՝ կթառամի: Սկզբում նրա գույնը կղեղնի, ապա հետզհետեւ կթուլանա և վերջն ել՝ կմեռնի: Նա կմեռնի սովոր, վորովհետեւ առանց լույսի չի կարող նա ողից ածխածին վերցնել և պատրաստել նրանից ոսլա: Բայց այդ դեռ բոլորը չե: Հույսի ազդեցության տակ են առաջանում և քլորոֆիլի հատիկները, այն գործարանները, վորոնց մեջ պատրաստվում ե ոսլան: Մթության մեջ ծլած բույսը լինում է



Լույսի մեջ աճած լոբի:

Մրուբյան մեջ աճած լոբի:

թույլ, բարակ ու յերկար և դեղնավուն: Նրա մեջ չեն լինում քլորոֆիլի հատիկներ և յերբ սերմի մեջ գտնված սննդարար նյութերի պաշարը սպառվում ե, բույսը մեռնում ե: Բայց յեթե մինչև մեռնելը հանենք նրան լույսի մեջ, նրա մեջ քլորոֆիլ կառաջանա: Նա կկանաչի, կըսկըսի ողից վերցնել ածխածին և պատրաստել նրանից ոսլա, բույսն այնուհետեւ կկազդուրվի և կսկսի կանոնավոր կերպով աճել ու զարգանալ:

Այս բոլորը ցույց ե տալիս, վոր բույսն առանց լույսի ապրել չի կարող. Խիս անտառներում, ուր արեկի ճառագայթները ներս չեն թափանցում, գետնի վրա խոտ չի քննում. Ծառերի ստորին ճյուղերն ևս, վորոնք լույս չեն ստանում, չորանում, թափվում են. Լույսի այդպիսի մեծ կարիք զգալով՝ բույսերն աշխատում են իրենց տերևներով,



Ցողունը ծովում ե դեպի լույս.


Հնչքան կարելի յե, շատ լույս ստանալ: Տերևները միշտ ուղղվում են դեպի լույսը, ճիշտ այնպես, ինչպես արմատները միշտ ուղղվում են դեպի այն կողմը, ուր կարող են ավելի սնունդ և խոնավություն դժնել: Սենյակում պահպող բույսերի տերևները միշտ դարձած են լինում դեպի լույսը: Ծառի ստվերում կանգնած ժամանակ նկատում ենք, վոր արեկի ճառագայթները տերևների արանքով շատ քիչ են ներս թափանցում, վորովհետեւ տերևներն աշխատում են դասավորվել այնպես, վոր վոչ մի ճառագայթ իզուր տեղը չի անցնում: Վերջապես տերևի բարակ ու թերթի ձեւ ունենալը բացատրվում է նրանով, վոր այդ ձեռվ նրանք հնարավորություն ունեն ավելի լույս ստանալու:

ՏԵՐԵՎՆ ԻԲՐԵՎ ՇՆՋԱՌՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԶՐԻ ԳՈԼՈՐՉԻԱՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

1. ԲՈՒՅՍԵՐԻ ՇՆՋԱՌՈՒԹՅՈՒՆԻ.—Բույսերն ևս կենդանիների նման չնշում են և, ինչպես տեսանք, չնշում են թե



զարգացած բույսերը և թե ծլող սերմերը, այսինքն նորածիլ բույսերը: Ծնչառության ժամանակ նրանք վերցընում են ողից թթվածին և արձակում իրենցից ածխաթթու: Հարց ե առաջանում, արդյոք բույսերը չնշում են որվա բոլոր ժամանակները, թե վոչ: Զե՞ վոր ցերեկը, արեգակի լույսի աղդեցության տակ, նրանք ողից ներս են ընդունում ածխաթթուն, և վերցնելով վերջինիցս իրենց մննդի համար կարևոր ածխածինը՝ թթվածինն արձակում են, այսինքն կատարում են շնչառության հակառակ մի գործողություն: Բազմաթիվ փորձերով հաստատված ե արդեն, վոր բույսերը չնշում են և ցերեկը; լույսի մեջ, սակայն նրանց շնչառությունն այդ ժամանակ չի նկատում, վորովհետեւ ածխաթթու վերցնելու գործողությունը քսան անդամ ավելի ուժեղ ե կատարվում, քան շնչառությունը: Գիշերը կամ մթության մեջ շնչառությունը պարզ կերպով նկատելի յե դառնում, վորովհետեւ այդ ժամանակ ածխաթթու վերցնելու գործողությունը դադարում ե:



Վոր ցերեկը, լույսի մեջ բույսի շնչառությունը շարունակվում ե, ցույց ե տալիս հետեւյալ փորձը: Վերցնենք միքանի ծաղիկներ, այսինքն քլորոֆիլից զուրկ մասեր և դնենք բանկայի մեջ: Վորպեսզի ծաղիկներն այստեղ չթառամեն, բանկայի մեջ կածենք և միքիչ ջուր: Այնուհետև բանկան լավ կծածկենք իցանով և կղնենք արևի


Սում հանգըում ե անորի մեջ: տակ, թերկու կամ յերեք ժամից հետո յեթե բաց անենք բանկան և նրա մեջ մըտցընենք մի այրվող մոմ, կնկատենք, վոր նա իսկույն հանգչում ե: Այդ նշան ե, վոր այնտեղ թթվածին չկա: Վոր թթվածինի փոխարեն բանկայի մեջ տուաջացել ե ածխաթթու, այդ կարող ենք հաստատել մի այլ փորձով: Բան-

կայի բերանին կղնենք յերկու անցք ունեցող մի խցան, մի անցքով կմտցնենք բանկայի մեջ մի ձաղար, իսկ մյուս ովք մի կոր խողովակ: Ապա վերջնիս ծայրը բեզինե խոռովակի միջոցով կմտցնենք կրաջրով լիքը բաժակի մեջ: Այսուհետև յերբ բանկայի մեջ ջուր ածենք, նրա միջի ողը դուրս կգա կոր խողովակով և կմանի կրաջրի մեջ: Այդ գործողության ժամանակ կնկատենք, վոր կրաջրուրը պղտորվում է: Այդ ել նշան է, վոր բանկայի մեջ յեղել և մեծ չափով ածխաթթու: Ուրեմն, բույսը շնչում է նաև ցերեկը՝ արևի ճառագայթների տակ: Մենք փորձի համար վերցրինք դիտմամբ ծաղիկներ, վորովհետև նրանք զուրկ լինելով քլորոֆիլի հատիկներից՝ ողից ածխաթթու չեն վերցնում, հետեւապես և շնչառության չեն խանգարում: Բույսի շնչառությունը կատարվում է գլխավորապես տերեների միջոցով. ողը տերեկի հերձանցքերի միջով մանում և միջրջային տարածությունները, այնտեղ բջիջները վերցնում են նրանից թթվածին և տալիս են նրան իրենց մեջ հավաքված ածխաթթուն, վոր այնուահետեւ ողի հետ միասին դուրս ե գալիս կրկին նույն հերձանցքերով:

2. ԶԲԻ ԳՈԼԲՐՇԻԱՅՈՒՄԸ ՏԵՐԵՎՆԵՐԻՑ:—Բացի սննդառությունից, տերեները կատարում են և մի այլ աշխատանք: Նրանց միջոցով բույսն ազատվում է իր մեջ յեղած ջրի ավելորդ մասից: Ինչպես գիտենք, բույսն իր արմատներով հողից վերցնում է ահազին քանակությամբ ջուր: Այդ ջրի միայն մի անհշան մասն է գործադրում նա իր սննդառության վրա, իսկ մեծ մասը տերեների միջոցով գոլորշիացնում է: Վոր իսկապես տերեների միջոցով գոլորշիացնումն է կատարում, կարող ենք հաստատել հետեւյալ փորձով: Կվերցնենք յերկու փորձանակ հավասար մեծությամբ, յերկուսն ել կղնենք ջրով, ապա մեկի մեջ կղնենք նոր կտրված միքանի հատ տերեներ: Վորոշ ժամանակից հետո կնկատենք, վոր տերեներ ունեցող փորձանակի ջուրն ավելի յե պակապել, քան մյուսինք: Պարզ է, վոր այդտեղ գոլորշիացնումը շնորհիվ տե-

րեների ավելի արագ է կատարվել: Գոլորշիացող ջրի քանակությունը վորոշելու համար վերցնում են մի ծաղկաման, վորի մեջ գանգում ե վորեւ բույս, լավջրում են, ապա հողի յերեսը ծածկում են խնամքով անազի բարակ շերտով, վորպեսզի այնտեղից գոլորշիացնում աեղի չունենա և կշռում են ամբողջ ծաղկամանը: Մի որից հետո ծաղկամանը նորից կշռում են: Քաշերի մեջ յեղած տարբերությունը ցույց կտա գոլորշիացնումը և ներկայում ցույց տվող փորձը: Ցյունը: Այդպիսի փորձեր կատարելով՝ գտել են, վոր արևածաղիկը մի որվա մեջ գոլորշիացնում է իրենից 3—4 բաժակ ջուր, կաղամբը՝ 15 բաժակ, իսկ միջակ մեծության կաղնին ամառային տաք որերին՝ ավելի քան 5 վերը ջուր: Մարդիկ հաշվել են, վոր մի դեսյատին գարու արտն ամառվա ընթացքում գոլորշիացնում է 240 հազար, իսկ յեգիպտացորենինը՝ 300 հազար դույլ ջուր:

Բայց ինչու յե բույսն այդչափ շատ ջուր գոլորշիացնում: Պատճառը հասկանալի յե: Բույսը հողից ջուր է ծծում, յեթե այդ ջուրը մնար բույսի մեջ, պարզ է, վոր նա այլևս նոր ջուր չեր ծծի, ինչպես վոր ջրով լցված սպունգն այլևս ջուր չի ծծում: Ջրի մեջ լուծված գրությամբ գտնվում են զանազան սննդարար նյութեր: Ուրեմն, յեթե բույսն այլևս ջուր չծծեր, կզրկվեր և այդ նյութերից: Իսկ դրա հետեւանքը կլիներ այն, վոր նա սովամահ կլիներ, ինչպես սովամահ ե լինում, յերբ ողից հարկավոր չափով ածխածին չի ստանում: Կնշանակե, բույսը գոլորշիացման միջոցով հնարավորություն ե ստանում շարունակ հողից նոր ջուր, հետեւապես և նոր սննդարար նյութեր ծծելու: Ջրի գոլորշիացնալուց հետո, նրա



մեջ յեղած սննդարար նյութերը մնում են բույսի մեջ և գործ ածվում իբրև սնունդ:

3. ԳՈԼՈՐՃԻԱ.ՑՄԱՆ ԱՐԱԳԱՑՄԱՆ ՅԵՎ ԴԱՆԴԱ.ՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՐԵՎՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:— Բույսերից ջրի գոլորշիացումը շարունակ նույն չափով չե կատարվում: Յերբ բույսը խոնավ տեղում ե գտնվում և առատ ջուր ե ստանում, գոլորշիացումն արագ և ուժեղ ե կատարվում, իսկ յերբ, ընդհակառակը, չոր և ջրազուրկ վայրում ե գտնվում, գոլորշիացումը թուլանում, դանդաղում ե: Բացի դրանից, չոր և տաք յեղանակներին բույսերից ավելի շատ ջուր ե գոլորշիանում, քան խոնավ և ցուրտ յեղանակներին: Կնշանակե, համաձայն ստացած ջրի քանակության և շրջապատի ողի պայմաններին՝ գոլորշիացումը կամ ուժեղանում ե և կամ թուլանում: Ի՞նչպես ե կատարվում այդ: Ամենից առաջ տերեկի վրա յեղած հերձանցքները, վորոնց միջոցով տեղի յե ունենում գլխավորապես գոլորշիացումը, ինչպես տեսանք, կարող են մեծանալ և կամ փոքրանալ, նույնիսկ փակվել: Խոնավ յեղանակներին բույսն այդ անցքերը մեծացնում ե, ինչքան հնարավոր ե, իսկ չոր յեղանակներին, ընդհակառակը, փոքրացնում ե, յերեմն նույնիսկ բոլորովին փակում: Անցքերը մեծացրած ժամանակ գոլորշիացնումը ուժեղանում ե, փոքրացրած ժամանակ՝ թուլանում, դանդաղում: Ապա չոր և խոնավ տեղերում աճող բույսերի տերեները նույն ձեմ ու հատկությունը չունեն: Խոնավ տեղերի բույսերի տերեները մեծ են լինում, լայն թիթեղներով և ունենում են շատ ու չափազանց մեծ հերձանցքներ: Բացի դրանից, լինում են քնքույշ և պատաժ բարակ մաշկերով: Այս բոլոր հանդամանքները նպաստում են գոլորշիացման արագացման և ուժեղացման: Իսկ չոր տեղերում աճող բույսերի տերեները, ընդհակառակը, փոքր են լինում, նեղիկ կամ



Պակառ, վորի տերեները փշերի:

իսկ չոր տեղերում աճող բույսերի տերեները, ընդհակառակը, փոքր են լինում, նեղիկ կամ

բաժանված բազմաթիվ բլթակների, ունենում են քիչ և փոքր բացվածքներով անցքեր: Նրանց տերեները պատած են լինում սովորաբար կոշտ մաշկով, այն ևս ծածկված մոմանման նյութի մի հաստ շերտով: Այս բուլոր հանգամանքները թուլացնում, դանդաղացնում են գոլորշիացումը: Բացի դրանից, չոր տեղերի բույսերի տերեները հաճախ պատած են լինում մազարմատներով: Այս մազարմատները նույնպես խանգարում են գոլորշիացման: Վորովհետև գոլորշիացումը մեծ մասամբ տերեկի ստորին յերեսից ե տեղի ունենում, դրա համար ել մազարմատները զլխավորապես այդ յերեսի վրա յեն լինում: Չոր յերկրների միջանի բույսեր, վորպեսզի գոլորշիացումը նվազագույն չափերի հասցնեն, զրկվել են բուլորովին տերեներից: Այդպես են, որինակ, կակտուսները: Սրանց տերեները փոխարկվել են փշերի: Այդ բույսերի տերեների դերը իրենց վրա յեն վերցրել մսոտ և կանաչ ցողունները:

ՑՈՂՈՒՆ

Ցողուն կոչվում ե բույսի այն մասը, վոր զարգանում ե սաղմի բողբոջիկից և կրում ե իր վրա տերեներ: Ցողունն յերկու պաշտօն ունի: Մի կողմից տերեները հանում ե ողի ու լույսի մեջ և դրանով հարմարություն տալիս յուրաքանչյուր տերեկի ոգտվելու լույսից, մյուս կողմից ել արմատի միջոցով հողից ծծած ջուրը և սրա մեջ լուծված հանքային նյութերն իր միջով տանում հասցնում ե տերեներին և ընդհակառակը, տերեների մեջ ջրից ու ածխածնից պատրաստած գործարանավոր նյութերը տերեներից տանում ե դեպի բույսի մյուս մասերը:

ՑՈՂՈՒՆԻ ԱՃՈՒՄԸ ՅԵՎ ԶԵՎԵՐԸ

1. ՑՈՂՈՒՆԻ ԱՃՈՒՄԸ:— Սերմերի ծլման ժամանակ, ինչպես տեսանք, սաղմի բողբոջիկից զարգանում ե ցողունը: Վերջինս, վորպեսզի իր տերեները դուրս հանի լույսի և ազատ ողի մեջ, շարունակ ուղղվում ե դեպի

վեր: Նա աճում ե գլխավորապես գագաթից և տալիս ե այդտեղից մեկը մյուսի յետեկից նորանոր տերեներ: Ցողունի այն մասերը, վորոնց կոչում են տերեները, կոչվում են հանգույցներ: Յերկու հանգույցների միջի տարածությունը, ուրիշ կերպ ասած, մի տերեկից մինչև մյուսը յեղած տարածությունը, կոչվում ե միջնանգույցային: Յեթե կտրենք յերկայնությամբ ցողունի աճող գագաթիկը, կնկատենք, վոր նա բաղկացած ե մեկը մյուսի վրա նստած և դեռևս կատարելապես չզարդացած տերեներից: Նրանց մեջ ավելի հները ծածկում են իրենց տակ և պաշտպանում այդպիսով ավելի նորերին զանազան վտանգներից: Ցողունի այդպիս անզարդացած տերեներից բաղկացած գագաթիկը կոչվում ե բողբոջ կամ պտուկ: Բացի գագաթային աճումից ցողունի մատաղ մասերն աճում են և իրենց ամբողջ յերկայնությամբ: Յեթե ցողունի այդպիսի մատաղ մասի վրա նշաններ անենք միմյանցից հավասար հեռավորության վրա, ինչպես արել ենք արմատի ծայրի վրա՝ նրա աճումը դիտելու համար, վորոշ ժամանակից հետո կնկատենք, վոր այդ նշանները հեռանում են միմյանցից, և վերեի մասում շատ ավելի, քան ներքեւում: Այդ ցույց ե տալիս արդեն, վոր աճումը վերեւում ուժեղ կերպով ե տեղի ունենում, ներքեւում թույլ: Նույն յերեւութը կարող ենք դիտել գարնանը և մատաղ ճյուղերի վրա: Քանի նրանք փոքր են, տերեներն իրար շատ մոտ են լինում, ուրիշ կերպ ասած, միջնանգույցային տարածությունները շատ կարճ են լինում: Իսկ յերբ ճյուղը աճում է, այդ տարածությունները մեծանում են և տերեներն իրարից հեռանում:

2. ՑՈՂՈՒՆԻ ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒՄԸ:—Ցողունը սովորաբար ճյուղավորվում ե՝ կողմանակի ճյուղեր արձակելով: Ցողունի ճյուղավորումը կատարվում ե բողբոջների միջոցով: Այդ բողբոջները շատ լավ աեսանելի յեն ծառերի վրա, մանավանդ ձմեռը: Ցողունի կամ ճյուղի գագաթին նստած բողբոջը կոչվում ե գագաթային, իսկ կողքերում նստածները՝ անութային: Վերջիններս գտնվում են տերեների ա-

նութներում, այսինքն այնտեղ, վորտեղ տերեները կպչում են ցողունին: Կողմանակի ճյուղերն առաջանում են հենց այդ բողբոջներից:

Ցողբոջներն առաջանում են ամառը: Չմեռը ցրտից պաշտպանվելու համար նրանք դրսից ծածկված են լինում

հաստ խեժու թեփուկներով: Յեթե կարենք բողբոջն յերկայնությամբ, կնկատենք, վոր նա բաղկացած ե իրար վրա խիտ կերպով նստած սաղմային վիճակի մեջ գտնվող տերեներից: Դրսից այդ տերեները ծածկող թեփուկները նույնպես տերեներ են, բայց ձևափոխված: Գարնանը, յերբ որերը տաքանում են, բողբոջներն սկսում են բացվել: Սկզբում նրանք փոքր ինչ մեծանում են, ապա բացվում են նրանց թեփուկները, վորից հետո յերեւում ե վոլորուն վիճակի մեջ գտնվող մատաղ տերեների մի ամբողջ փունջ: Այդ տերեներն այնտեղ նստած են լինում մի կարճ ցողունիկի վրա: Այնուհետև թեփուկները թափվում են, իսկ ցողունիկը յերկարում ե՝ փոխարկվելով ճյուղի: Արա վրա նստած մատաղ տերեների անութներում նկատվում են նոր բողբոջներ: Չմեռը բողբոջների բացվելը դիտելու համար կտրում են ուռենու կամ բարտու ճյուղը և դնում ջրի մեջ: Մոտ յերկու շաբաթից հետո բողբոջներն սկսում են բացվել:

3. ՑՈՂՈՒՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ:—Ցողունները ձևով շատ բազմազան են լինում: Կան խոտային և փայտային ցողուններ: Խոտայինները փափուկ ու ճյութալի յեն և ապրում են մեծ մասամբ մի տարի, փայտայիններն, ընդհակառակը, ամուր են, բաղկացած փայտացած բջիջնե-



1) Վոռա պատկներով:

2) Պառկները բացվում են:

րից և ապրում են յերկար տարիներ։ Խոսային ցողուն ունեն խոտերը, փայտային՝ ծառերն ու թփերը։ Ծառերն ունեն գլխավոր ցողուն կամ բուն, վոր արձակում ե ամեն կողմի վրա ճյուղեր, ինչպես տանձենին, կաղնին, մայրին և այլն, իսկ թփերը զուրկ են այդպիսի գլխավոր բնից։ Նըանց արմատից դուրս են գալիս նման հաստություն ու նեցող միքանի ցողուններ։ Վարդենին, տիլին, հաղարձենին, մորենին թփեր են։


Ծառերի ցողունները հսկայական բարձրություն են ունենում։ Որինակ, կաղնու, շամու, յեղենու ցողունները յերեմ 10—15 սաժեն բարձրության են հասնում։ Եվկալիպտները Ավստրալիայում և Վիլինգտոնիաները Ամերիկայում հասնում են նույնիսկ 70 սաժեն բարձրության։ Խոտային ցողուններն, ընդհակառակը, շատ աննշան մեծություն են ունենում։ Միքանի խոտերի ցողունները նույնիսկ այնքան կարճ են լինում, վոր տերենները կարծես դուրս են գալիս ուղղակի արմատից։ Սյդպիսի ցողուն ունեն, որինակ, խտուտիկը, տակը կամ ճակնդեղը և այլն։

Ցողունները տարբերվում են բնականաբար նաև իրենց հաստությամբ։ Կան միքանի սաժեն, բայց կան և միանգամայն աննշան հաստություն ունեցողներ։

Միքանի խոտային բույսերի ցողուններ այնքան թույլ են, վոր իրենց դիրքը պահպանել չեն կարողանում։ Սրանք իրենց տերեններն արեի անմիջական ճառագայթների տակ դնելու համար դիմում են զանազան միջոցների։ Նրանցից միքանին, որինակ, փաթաթվում են ուրիշ բույսերի, և այդ ձևով բարձրանում վեր, ինչպես փաթաթուկը։ Սյդպիսիները կոչվում են փաթաթվող բույսեր։ Միքանին ել ունեն առանձին թելիկներ կամ խիորեր, վորոնցով կառչում են ուրիշ բույսերի կամ իրերի և այդպիսով բարձրանում վեր։ Արանք ել կոչվում են մագրեգներ։ Մագրեգներ են խաղողի վորթը, սիսեռը և այլն։ Կան և գետնատարածներ։ Արանք փովում են ուղղակի գետնի վրա։ Վարունգը, սեխը, ձմեռուկը, դդումը գետնատարած բույսեր են։ Վերջիններս աճում են միայն բաց տեղերում։

ՑՈՂՈՒՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԶՐԻ ՈՒ ՄԱՆԴԱՐԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՆՐԱ ՄԻՋՈՎ

1. ՑՈՂՈՒՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ։—Ցողունի կազմության հետ ծանոթանալու համար վերցնում են լորու, սիսեռի կամ վորեւ այլ բույսի թարմ ցողունից լայնությամբ կտրված մի շերտ և դիտում մանրագիտակով։ Դիտողությունը ցույց է տալիս, վոր ցողունը, տերեւի նման, դրսից պատաժ ե վերնամաշկով՝ բաղկացած տափակ և հաստ մաշկեր ունեցող բջիջներից։ Այդ վերնամաշկը շատ ցողուններից հեշտությամբ կարելի յե հանել։ Ցողունի ներսը բաղկացած է համեմատաբար ավելի մեծ, կանոնավոր ձև և քնքույշ մաշկեր ունեցող բջիջներից։ Սրանք կազմում են ցողունի հիմնական հյուսվածքը։ Այս հյուսվածքի մեջ, վերնամաշկի մոտիկ մասերում, կան փոքրիկ ըջաններ, բաղկացած ավելի փոքրիկ բջիջներից։ Սրանք ցողունի մեջ կազմում են խուրձեր կամ ջղեր, վորոնք անցնելով ամբողջ յերկայնությամբ՝ մտնում են տերևները և ճյուղավորվում նրանց մեջ։ Դիտելով ցողունի յերկայնությամբ կորվածքը մանրագիտակով՝ նկատում ենք, վոր ջղերը բաղկացած են յերկարուկ ձև ունեցող բազմազան բջիջներից։ Նրանց մի մասը միացած են միմյանց հետ, վորովհետու նրանց միմյանցից բաժանող միջնապատերը վերացած են։ Դրանք կազմում են ցողունի մեջ յերկար խողովակներ կամ, ինչպես ասում են, անորենի։ Անոթներից միքանինը իրենց մեջ ողակներ պարունակելու պատճառով կոչվում են ողակավոր անորենի։ Մյուսները նման են բարակ, յերկար, ձկուն, բայց և ամուր թելերի։ Այս ե պատ- 1) թել, 2) սղակավոր անոթ։ Ճառը, վոր ջղերը կոչվում են նաև անոթաբելային խըր-



ձակներ։ Սրանք ցողունի հիմնական հյուսվածքը բաժանում են յերկու մասի։ Խրձակներից դեպի ներս յեղած մասը կոչվում է ծուծ, իսկ դեպի վերնամաշկը յեղած մասը՝ նախնական կեղեվ։ Վերջինս միանում է ծուծի հետ ծուծի նառագայթներով, վորոնք անցնում են անոթաթելային խրձակների արանքով։

Անոթաթելային խրձակների այն մասը, վոր դարձած և դեպի ծուծը, կոչվում է բնափայտ, Բնափայտը կազմված է խողովակներից կամ անոթներից, վորոնք բաղկացած են յերկարուկ բջիջներից։ Սրանք պրոտոպլազմա չունեն իրենց մեջ, ուրեմն, մեռած բջիջներ են։ Խրձակների այն մասը, վոր դարձած և դեպի դուրսը, այսինքն վերնամաշկը, կոչվում է լուր։ Սա բաղկացած է գլխավորապես բարակ ու յերկար թելերից։ Թելերի արանքում գտնվում են անոթներ։ Վերջիններս կազմող բջիջներն ունեն մաղի նման ծակոտկեն միջնապատեր, գրա համար ել անոթները կոչվում են մաղանոթներ։ Մաղանոթների բջիջները կենդանի յեն, վորովհետև ունեն իրենց մեջ պրոտոպլազմա, բայց դուրս են բազմանալու ընդունակությունից։ Բնափայտի և լուրի արանքում գտնվում է խրձակների յերրորդ տարրը, կամբիոնը։ Սա բաղկացած է կենդանի նուրբ բջիջներից, վորոնք շարունակ կիսվելով բազմանում են։ Այդ մասից առաջանում է մի կողմից բնափայտ, մյուս կողմից՝ լուր։ Կամբիոնը ցողունի ամենակարեոր մասն է։ Այսպիսով, ուրեմն, անոթաթելերի խրձակները բաղկացած են յերեք մասից՝ բնափայտից, լուրից և կամբիոնից։ Փայտաթին նյուղերի կամ ընձյուղների ցողուններն այդ կազմությունն ունեն։ Փայտային բույսերից ցողունի մեջ, սակայն, ժամանակի ընթացքում տեղի յե ունենում վորոշ փոփոխություն։ Առաջին տարր վերջը կամբիոնի մի շերտն աճելով անցնում է





Մաղանոթներ

ծուծի ճառագայթների միջով և կազմում ամբողջական մի ողակ։ Այդ շերտն, ինչպես տեսանք, դեպի ներսն առաջ է բերում բնափայտ, դեպի դուրս՝ լուր։ Ահա այդ պատճառով տարր վերջը բնափայտն ևս կազմում ե մի տմբողջական ողակ, վորի միջով տեղ-տեղ անցնում են միայն նեղիկ բնափայտային շառավիղներ։ Նման ամբողջական ողակ կազմվում ե նաև լուրի մեջ։

Զմեռը կամբիոնի 1) Վերբամաշկ, 2) Անոթախրձակ, 3) Լուր, 4) Կամբիոն, 5) Բնափայտ, 6) Կամբիոն, 7) Կեղի, 8) Ծուծ։ Դադարում ե, Գարնանը սակայն բջիջներն սկսում են կրկին բազմանալ և մի կողմից առաջ բերել բնափայտ, մյուս կողմից՝ լուր։ Ցեվ վորովհետև առաջացած բնափայտը միշտ ավելի յելինում, քան լուրը, գրա համար ել ծառերը հաստանում են գլխավորապես բնափայտի շատանալու հետևանքով։ Գարնանը և ամռանը բնափայտն առաջանում ե խոշոր և ավելի բաց գույնի նրբաթաղանթ բջիջներից, աշնանը՝ փոքր, մութ գույնի և հաստաթաղանթ բջիջներից։ Այս ե պատճառը,

Բնի լայնությամբ կտրվածքը։ Ենթական շերտերը վոր ծառերի բնի լայնությամբ տեղի ունեցած կտրվածքի վրա բնափայտի մեջ նկատելի յեն շրջաններ։ Յուրաքանչյուր շրջան առաջանում է մի տարր ընթացքում, գրա համար ել այդ



շրջանները կոչվում են տարեկան տրյամբեր կամ տերտեր։
Եթե առաջի թվով կարելի յէ վորոշել ծառի տարիքը։

Ժամանակի ընթացքում փոփոխության ե յենթարկվում նաև նախնական կեղեր։ Դրսից նրա վրա առաջանում ե խցանային հյուսվածք, վոր պաշտպանում ե ցողունի մյուս մասերը զանազան վտանգներից։ Այդ հյուսվածքը բաղկացած ե մեռած բջիջներից, դրա համար ել չի աճում։ Յերբ բունը հաստանում ե, ծառերի կեղեր ճեղքվածքներ ե տալիս։ Մեծ ճեղքվածքներ են ունենում մանավանդ բազմամյա կաղնիները, ընկուզենիները, մայրիները, նախնական կեղեր խցանային հյուսվածքի և լուրի հետ միասին կազմում ե ծառերի բնի այն մասը, վոր սովորաբար կոչվում ե կեղեվ։ Այդ կեղեր բնից հեռացվում ե հեշտությամբ, մանավանդ գարնանը, վորովհետեւ բնափայտը լուրից բաժանող կամբիոնի նուրբ բջիջներն այդ ժամանակ հեշտությամբ բաժանվում են իրարից։ Կեղեի տակ գտնվում ե հաստ բնափայտը, իսկ սրա մեջ ել ծուծը։ Ծուծը ծառերի մեջ չի աճում։ Նա միշտ ունենում ե նույն մեծությունը։

2. ԶՐԻ ՈՒ ՍՆԴԱՐԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՑՈՂՈՒՆԻ ՄԻՋՈՎ։— Տերեների մեջ, վորպեսզի ուլա պատրաստի, անհրաժեշտ ե ջուր։ Արմատների ծծած ջուրը, ուրեմն, պետք ե բարձրանա ցողունի միջով վերև և հասնի տերեներին։ Իսկ տերեների մեջ պատրաստված գործարանավոր նյութերն անհրաժեշտ մնունդ են ամբողջ բույսի համար, ուրեմն, նրանք ել պետք ե տերեներից զնանցած, ցողունի միջով, գեպի բույսի բոլոր մասերը։ Ցողունի վճռ մասերով են շարժվում ջուրն ու այդ սննդարար նյութերը։ Պարզ ե նաև և առաջ, վոր նրանք պետք ե ունենան տարբեր ճանապարհներ, վորովհետեւ այլապես ջուրը կխառնվեր սննդարար նյութերի հետ և կխառնդարեր նրանց շարժումը։

Վերցնենք ծառի մի փոքրիկ ճյուղ, ողակաձև կըտրենք նրա կեղեր մինչև բնափայտը և դնենք ջրի մեջ այսպես, վոր ողակաձև կտրվածքը մնա ջրից դուրս։ Եթե ջուրը գնար կեղեի կամ լուրի միջով, հասկանալի

յե, վոր կթառամեր ճյուղը, վորովհետեւ ջուրը տերեներին չեր հասնի։ Սակայն փորձը ցույց ե տալիս, վոր ճյուղը չի թառամում։ Այդ նշան ե, վոր ջուրը գնում ե կամ ընափայտի և կամ ծուծի միջով։ Հին ծառերի մեջ հաճախ ծուծը փտում ե. նրանց մեջ առաջանում ե փչակ։ յերբեմն այդ փչակը չափազանց մեծանում ե, վորովհետեւ փտում են նաև բնափայտի հին շերտերը։ Բայց չնայած այդ բոլորին, ծառը շարունակում ե աճել։ Կնշանակե՞ց ջուրը գնում ե միայն բնափայտի միջով, այն ևս նրա թարմ շերտերով։

Ցույց տալու համար, թե ցողունի միջով սննդարար նյութերն ինչ ճանապարհով են շարժվում, անում ենք հետեւյալ փորձը։ Վերցնում ենք ուռենու յերկու ճյուղ, յերկուսի կեղեներն ել նույն տեղերում ողակաձև կտրում, մեկինը մինչև բնափայտը, մյուսինը՝ միայն վերնաշերտը՝ մինչև լուրը։ Այնուհետև, յերբ այդ ճյուղերը դնում ենք ջրի մեջ այսպես, վոր կտրվածքները ջրից դուրս լինեն, մի յերկու շարաթից հետո նկատում ենք, վոր նրանք յերկուսն ել սկսում են իրանցից արմատներ արձակել, բայց տարբեր տեղերից։ Մեկը ճյուղի ծայրից, մյուսը՝ կտրվածքի վերևից։ Կտրվածքի վերևից արմատներ տալիս ե այն ճյուղը, վորի կեղեր հանել ելինք մինչև բնափայտը, այսինքն հանել ելինք նաև լուրը։ Այս փորձը ցույց ե տալիս, վոր սննդարար նյութերն իշնում են լուրի միջով։ Մեր ճյուղի մեջ սննդարար նյութերը, հասնելով



Կ ա ր ե ա ն ո ր ն ե ր։

տարբեր պարագաներ առաջնային հանել ելինք նաև լուրը։ Այս փորձը ցույց ե տալիս, վոր սննդարար նյութերն իշնում են լուրի միջով։ Մեր ճյուղի մեջ սննդարար նյութերը, հասնելով

կտրվածքին կանգ են առնում և հենց այդտեղից ել առաջանում են արմատներ: Լուրի միջով սննդարար նյութերը սնում են մաղանոթներով: Միքանի բույսերի տերևներում պատրաստված մննդարար նյութերը ցած տարվելու համար, բացի մաղանոթներից, կան նաև յերկար ու խիստ ճյուղավորված խողովակներ, վորոնք կոչվում են կաթնանոթներ: Այս անոթները կտրած ժամանակ դուրս են գալիս կաթի գույն ունեցող մի թանձր հեղուկ:

3. Ի՞նչո՞ւ ՅԵ ԶՈՒՐԸ ԲԱՐՁՐԱՇՈՒԽ ՑՈՂՈՒՆԻ ՄԻԶՈՎ:— Զուրը բարձրանում ե ցողունի միջով յերկու պատճառով: Մեկը նրանցից հայտնի յե մեզ, այդ արմատային ճնշումն ե: Մազարմատները ջուր ծծելով հողից, մղում են այն գեղի ցողունը և այդպիսով վեր բարձրացնում: Մյուս պատճառը ջրի գոլորշիացումն ե տերեններից: Տերեններն իրենց միջի ջուրը գոլորշիացնելով, կրկին նոր ջուր են ծծում և այդպիս շարունակ: Կտրենք բարտու տերեններ ունեցող մի ճյուղ և մտցնենք կտրված մասը ջրի մեջ: Ջրից դուրս հանելուց հետո կտրված մասի վրա կտեսնենք ջրի մի կաթիլիկ: Շուտով այդ կաթիլիկը կծծվի ներս: Յեթե նորից ճյուղի ծայրը մտցնենք ջրի մեջ, դարձյալ նրա կտրված ծայրի վրա կմնա մի կաթիլիկ, վոր կրկին նույն ձեռվ կծծվի ճյուղի մեջ: Արմատային ճընշումն ու ջրի գոլորշիացումը տերեններից,—ահա այն գըլխավոր պատճառները, վորոնց շնորհիվ ջուրը բարձրանում ե ցողունի միջով:

ՑՈՂՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

1. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՑՈՂՈՒՆՆԵՐ:—Միքանի բույսեր, բացի գետնից վեր յեղած ցողուններից, ունեն նաև ձեռփոխված ստորերկրյա ցողուններ: Այդ ցողունները ծառայում են բույսի համար վորպիս բազմացման գործարաններ: Ստորերկրյա ցողուններն յերեք տեսակ են և կոչվում են կոնդարմատ (տակոիֆ), կոնդեգ կամ սոխարմատ և պալար:

Կոնդարմատ ունեն շատ խոտաբույսեր: արտաքուստ նման ե նա արմատի, այդ պատճառով ել արմատ անունով ե կոչվում: Բայց վոր նա արմատ չե, այլ ցողուն, այդ յերկում ե նրանից, վոր նրա վրա կան թեփուկների ձև ունեցող յետ զարգացած, ձեափոխված տերեններ, մինչդեռ, ինչպես գիտենք, արմատն յերեք տերև չի ունենում:

Կոճղարմատը սովորաբար ձգվում ե հողի տակնորիզոնական ուղղությամբ և իր ներքեմի յերեսից արձակում ե թելանման արմատիկներ: Կոճղարմատի առջևի ծայրը շարունակ աճում ե, յետեինը, ընդհակառակը, մեռնում: Առջևի աճող ծայրը վերջանում ե գագաթային բողբջով, իսկ թեփուկների նըմանող տերենների տակ գտնվում են կողմանակի բողբջները: Միքանի բույսերի գետնից վեր գտնվող ցողունները զարգանում են կոճղարմատի գագաթային բողբջից: այդ գեղքում գագաթային բողբջը ծովում ե վեր և դուրս գալիս հողի յերեսը, իսկ կոճղարմատը շարունակում ե աճել հողի տակ՝ կողմանակի բողբջներից: Մյուսների, սակայն, գետնից վեր գտնվող ցողունները զարգանում են կողմանակի բողբջներից: Կողմանակի բողբջներից զարգանում են նաև կոճղարմատի ճյուղերը, վորոնք իրենց հերթին ընծայողներ տալով՝ դուրս են գալիս գետնի յերեսը: Յերբ կոճղարմատի մեռնող մասը հասնում ե ճյուղավորված շրջանին, ճյուղերը բաժան-



Կոճղարմատ:

գում են միմյանցից։ Այդ գեպքում ստացվում են առանձին-առանձին բույսեր։ Այսպիսով, ուրեմն, կոճղարմատի միջոցով բույսը բազմանում է։ Բացի դրանից, կոճղարմատի շնորհիվ, վոր խորը թաղված է հողի մեջ, խոտաբույսերն իրենց գոյությունը պահպանում են յերկար տարիներ։ Աշնանը մեռնում է միայն գետնից վեր գըտնվող ցողունը, իսկ կոճղարմատը ձմեռվա ընթացքում պահպանում է իր գոյությունը և գարնան արձակում իրենից նոր ընձյուղներ։ Կոճղարմատի մեջ բույսերն ամբարում են սննդարար նյութեր, վորոնցով այնուհետև գարնանը սնվում են մատաղ ընձյուղները։

Պալարները նույնպես ձեափոխված ստորերկրյա ցողուններ են։ Պալարի որինակ կարող են լինել կարտոֆիլի գնդերը։ Սրանք զարգանում են վոչ թե արմատի, այլ բարակ ստորերկրյա ցողունների վրա։ Այս ցողունների ծայրերում հավաքվում է մեծ քանակությամբ սննդարար նյութ՝ ոսլա, վորից սկսում են նրանք հետրզնետե մեծանալ և պալարների ձև ընդունել։ Յեվ իրոք, պալարները լիքն են ոսլայով։ Պալարներ կարող են առաջանալ նաև գետնից վեր գտնվող ցողունների վրա։ Դրա համար հարկավոր է ցողունի վորմե մասը մթության մեջ պահել։ Ծաղկամանի մեջ աճած կարտոֆիլի թփի վորեւ ճյուղ, յեթե դնենք մի խավաքարտե արկղիկի մեջ այնպես, վոր ճյուղի ծայրը տերևներով ազատ մնան, յերկու շաբաթից հետո կտեսնենք, վոր ճյուղի մթության մեջ յեղած մօսից դուրս են յեկել փոքրիկ պալարներ։


Պալարների միջոցով բույսերը բազմանում են։ Կարտոֆիլի գնդերի վրա տեղաեղ կան փասեր, վորոնց մեջ նկատելի յեն բողբոջներ՝ ծածկված թեփուկներով, այսինքն չպարզացած տերևներով։ Այդ բողբոջները կոչվում են աչինե։ Հողի մեջ յեղած ժամանակ պալարի այդ աչքերից դարնանը զարգանում են ընձյուղներ, վորոնք դուրս են գալիս գետնի յերեսը։ Պալարի վրա սովորաբար լինում են միքանի աչքեր։ Յեթե պալարը բաժանենք մասերի այնպես, վոր յուրաքանչյուր մասի վրա լինի մի աչք և

դնենք հողի մեջ, ապա յուրաքանչյուր մասից կառաջանա մի առանձին բույս։ Նորածիլ բույսն իր սնունդը վերցնում է պալարի մեջ յեղած ոսլայից։

Ստորերկրյա ցողուն ե նաև կօնդեզը։ Աա բաղկացած է հաստ մսոտ ձեւափոխված տերևներից, վորոնք խիտ կերպով նստած են իրար վրա։ Այդ տերևները դուրս են գալիս կոճղեղի ներքեւում գտնվող մսոտ մասից, վոր կոչվում է հատակ և վորը վոչ այլ ինչ է, բայց յեթե խիտ կարձացած ցողուն։ Կոճղեղի արտաքին տերևները չոր են ու պինդ։ Մրանք պաշտպանում են կոճղեղը չորանալուց, իսկ ներքիններն, ընդհակառակը, մսոտ են ու հյութալի և պարունակում են իրենց մեջ ծիլի համար սննդարար նյութեր։ Յուրաքանչյուր թեփուկի անութում գտնվում է մի բողբոջ։ Գարնանը կոճղեղի հատակից դուրս ե գալիս թելանման արմատների մի ամբողջ փունջ, իսկ բողբոջը ներից մեկը կամ միքանիսը զարգանալով՝ տալիս են գետնից վեր գտնվող ցողուններ։ Այս ցողուններն սկզբում իրենց սնունդը վերցնում են կոճղեղի մսոտ տերևներից։ Աշնանը բույսը տալիս ե նոր կոճղեղներ, վորոնք ձմեռը մնում են հողի տակ և հետեւյալ գարնան առաջ բերում նոր բույսեր։ Կոճղեղներով բազմանում են սոխը, շուշանը և այլն։

2. ԲԱԶՄԱՑՈՒՄՆ ՇՅՈՒՂԵՐՈՎ. ՅԵՎ ՄԱՏՆԵՐՈՎ.—Միքանի բույսեր բազմանում են վոչ միայն ստորերկրյա, այլև գետնից վեր գտնվող ցողուններով, որինակ, շյուղերով, մատներով և բողբոջներով։

Շյուղերով բազմացնելու համար բույսի ճյուղը ծռում են ցած՝ գեղի գետինը, ծայրը բարձրացնում վեր, իսկ միջին մասը ծածկում հողով։ Հողի մեջ գտնվող մասից շուտով դուրս են գալիս յերկրողական արմատներ։ Յերբ



Կ ո ն դ ե զ

ա) Պատկերը, բ) Հատակը:

վերջիններս բավականին դարձանում են, ճյուղը կտրում են մայր բույսից. այդպիսով ստացվում է մի նոր ինքնուրույն բույս: Վորպեսզի ճյուղը շուտով յերկրորդական արմատներ արձակի, հողի մեջ գտնվող մասի կեղևի վրա անում են ողակածե կտրվածք: Այս ձեռվ բազմացնում են գլխավորապես հաղարձենին:


Միքանի բույսեր բազմանում են այդ ձեռվ կ իրենք իրենց, որինակ, յելագը, մանիշակը և այլն: Սրանք արձակում են բարակ, յերկար և գետնի վրա փուզող թելիկներ, վորոնց վրա լինում են բողբոջներ: Այս բողբոջներն արձակում են իրենցից տերեներ և դեպի հողը՝ արմատներ և այդպիսով առաջ բերում ինքնուրույն բույսեր:

Մատներով բազմացնելու ժամանակ ծառից կտրում են ճյուղը և կտրած ծայրը մտցնում խոնավ հողի մեջ, Շուտով ճյուղն յերկրորդական արմատներ տալով՝ ամրանում է հողի մեջ և առաջ բերում ինքնուրույն բույս: Մատներով բազմացնում են ուռենին, բարտին, հաղարձենին, խաղողի վորթը և այլն:

3. ՊԱՏՎԱՍՏ:—Շյուղերով և մատներով կարող են բազմանալ միայն այն բույսերը, վորոնք հեշտությամբ արձակում են իրենցից յերկրորդական արմատներ: Մեր պըտղատու ծառերն, որինակ, այդ միջոցով բազմանալ չեն կարող, վորովհետեւ շատ դժվարությամբ են տալիս այդպիսի արմատներ: Նրանք բազմանում են սերմերի միջոցով: Սակայն սերմերից առաջացած ծառերը տալիս են փոքրիկ և անհամ պտուղներ: Լավ տեսակի պտղատու ծառեր ստանալու համար մարդիկ դիմում են պատվասի ողնության: Մերմից առաջացած ծառի վրա պատվաստում են ազնիվ ծառի ճյուղը կամ բողբոջը, Պատվասի համար վերցրած ճյուղն աճելով պահում ե իր մայր բույսը բոլոր ազնիվ հատկությունները:

Պատվաստել կարելի յե թե մատներով և թե աչքերով: Մատներով պատվաստելու ժամանակ վերցնում են ազնիվ ծառից մի ամբողջ ճյուղ, իսկ աչքով պատվաստելու ժամանակ՝ միայն մի բողբոջ: Մատներով պատվաստ կատարում են հետեւյալ ձեռվ: Յերբ վայրի ծառը գեռ

շատ մատաղ ե, կտրում են նրան թեք ուղղությամբ և ապա ընարելով ազնիվ ծառի վրա ճիշտ նույն հաստու-



Պ ա տ Վ ա ս տ Մ ա ն յ ե ղ ա ն ա կ ց ե ր ։

- Ա. Բ) Վայրի բայտի հուրդ՝ ա) ազմիկ բարի հուրդ
Բ. Բ) Վայրի ծառի կերեկը մեղած իով ինչ բարձրացած, ա) ազմիկ ծառի կա-
գիկ սրած.
Գ. Ա) Ազմիկ ծառի վասիկի.
Բ) Վայրի ծառի կերեկը Դ մելով ներդած.
Վ) Ազմիկ ծառի բարձրացած առանձին կերած:

թյունն ունեցող մի ճյուղ՝ նույն թեքությամբ կտրում են և այդ ճյուղը: Այնուհետև կտրված ճյուղը գնում են վայրի ծառի վրա այնպես, վոր կեղևը գնա կեղևի ուղղությամբ և փայտային մասը՝ փայտայինի ուղղությամբ: Վրանից հետո խսիրով կապում են, պատում վորեւ անվաս ճյութով և փաթաթում փալասով: Այս բոլորը կատարում են նրա համար, վորպեսզի նրանք չշարժվին,

ապա ցրտից պաշտպանված լինեն և, վոր գլխավորն ե, կարփած տեղերից ջրային մասերը չգոլորշիանան:

Իսկ յերբ վայրի ծառը հաստ է, կտրում են հորիզոնական ուղղությամբ և խնամքով ճեղքում նրա կեղերը, Այսուհետև կտրում են ազնիվ ծառից աչքեր ունեցող մի լավ վոստիկ, ծայրը որում և մտցնում ճեղքի մեջ այնպես, ինչպես այդ ցույց ե տրված նկարի մեջ և կրկին վերոհիշյալ ձեռվ կապում; Յերբ վայրի ծառը շատ հաստ է, այն ժամանակ նման պատվաստ անում են միքանի տեղից: Մատներով պատվաստը պետք է կատարել գարնանը, մինչև բողբոջների բացվելը: Պատվաստի գլխավոր պայմանն այն է, վոր մատի կամքիոնի շերտն ընկնի վայրի ծառի կամքիոնի շերտի վրա: միայն այս դեպքում մատը կարող է միանալ վայրի ծառի հետ:


Աչերով պատվաստելու ժամանակ ազնիվ ծառի ճյուղից կտրում են մի լավ աչք շրջապատի կեղերի հետ միասին՝ վահանի ձեռվ և վայրի ծառի կեղերի վրա Դ ձեռվ ճեղքվածք պատրաստելով՝ աչքը դնում նրա մեջ և խընամքով կապում: Յերբ պատվաստած աչքից ճյուղ ե զարգանում, այն ժամանակ վայրի ծառի մյուս մասերը կտրում, հեռացնում են: Աչքերով պատվաստ կատարում են մայիս և հունիս ամիսներին:

ԾԱՂԻԿ

Բոլոր բույսերն աշխատում են կենդանի արարածների նման բազմանալ: Նրանք բոլորն ել մի ձգտում ունեն, թողնել իրենցից հետո սերունդ: Միքանի բույսեր, ինչպես տեսանք, բազմանում են ստորերկրյա կամ գետնից վեր յեղած ցողուններով, սակայն բույսերի մեծ մասը բազմանում է սերմերի միջոցով: Նրանք ծաղկում են և ապա առաջ բերում սերմեր: Տեսնենք այժմ, թե ինչ կազմություն ունեն ծաղիկները և ինչպես են առաջանում նրանցից սերմերը,

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

1. ԲԱԼԵՆՈՒ ԾԱՂԿԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ հետ ծանոթանալու համար վերցնենք բալենու ծաղիկը: Սա նստած է մի բարակ կոթի վրա, վոր կոչվում է ծաղկակոթի վերին մասը, վորի վրա տեղափորփած և ծաղիկը, կոչվում է ծաղկակալ: Ծաղկի շուրջը ներքեւում իրար կողքի շարպած են հինգ հատ կանաչ տերևկիկներ: Մրանք միասին կազմում են ծաղկի բաժակը, Բաժակի առանձին տերևկիկները կոչվում են բաժակաբերքեր: Բաժակաթերթերից հետո գալիս են հինգ հատ սպիտակ թերթիկներ, վոր դարձյալ շըրջանաձև շարպած են իրար կողքի: Մրանք ել կազմում են ծաղկի պլրսակը, պսակի առանձին թերթիկները կոչվում են պսակաբերքիկներ: Հեռացնելով պսակաթերթիկները՝ ծաղկի ներսում նկատում ենք բարակ թելիկները, Այդ թելիկները կոչվում են աւելիներ: Յուրաքանչյուր առել վերջանում ե մի պատճեն գաղտնական պատճառով կոչվում է փուանորք: Առեջների մեջտեղում գտնվում է ծաղկի վարսանդը, Սրա վերեկի լայնացած մասը կոչվում է սպի, միջին թելանման մասը՝ սոնակ, իսկ ներքեկ ուսուցիկ մասը՝ սերմնաւան: Սերմնարանում գտնվում են փոքրիկ սպիտակ հատիկներ: Դրանք սերմնարողբացներն են, վորոնցից հետագայում զարգանում են սերմերը: Այսպիսով, ուրեմն, բալենու ծաղիկը բաղկացած է բաժակից, պսակից, առեջներից և վարսանդից:




Բալենու ծաղկի մասերը.

1) Ծաղկակոթ, 2) ծաղկակալ, 3) Բաժակաթերթ, 4) Պսակաթերթ, 5) Առեջ, 6) Սերմնաւան, 7) Սոնակ, 8) Վարսանդը սպին:

Գլխիկով: Վերջինս փոշով լիքը լինելու պատճառով կոչվում է փուանորք: Առեջների մեջտեղում գտնվում է ծաղկի վարսանդը, Սրա վերեկի լայնացած մասը կոչվում է սպի, միջին թելանման մասը՝ սոնակ, իսկ ներքեկ ուսուցիկ մասը՝ սերմնաւան: Սերմնարանում գտնվում են փոքրիկ սպիտակ հատիկներ: Դրանք սերմնարողբացներն են, վորոնցից հետագայում զարգանում են սերմերը: Այսպիսով, ուրեմն, բալենու ծաղիկը բաղկացած է բաժակից, պսակից, առեջներից և վարսանդից:

Բոլոր ծաղիկները բալենու ծաղկի կազմությունը չունեն: Կան ծաղիկներ, վոր գուրկ են այս կամ այն



Առեջ:

Վարսանդ:


ծաղկամասից, որինակ, կակաչի ծաղիկը. սա գուրկ ե բաժակից: Յերբ ծաղկի մեջ բոլոր մասերը կան, ծաղիկը կոչվում ե լրիվ, իսկ յերբ այս կամ այն մասը պակասում ե, կոչվում ե թերի:

Բաժակն ու պսակը մինչև ծաղկի բացվելը ծածկում են ծաղկի ներսը գտնվող ավելի քնքույշ գործարանները՝ առեջներն ու վարսանդը և այդպիսով պաշտպանում նրանց զանազան վտանգներից: Այդ ե պատճառը, վոր այդ ծաղկամասերը կոչվում են ծածկույթներ, բաժակը արտաքին, պսակը՝ ներքին: Բաժակի տերեներն յերբեմն միացած են լինում միմյանց հետ. այդ դեպքում բաժակը կոչվում ե միացյալ: Նույն ձեռք միանում են յերբեմն և պսակաթերթիկները և կազմում միացյալ պսակ: Յերբ պսակաթերթիկները ծաղկի մեջ բոլորը նույն ձեռ ու մեծությունն ունեն, ծաղիկը կոչվում ե կանոնավոր, իսկ յերբ տարբեր՝ կոչվում ե անկանոն: Բարենու ծաղիկը կանոնավոր ե, իսկ մանիշակինը՝ անկանոն, վորովհետեւ նրա պսակաթերթիկները միմյանցից զանազանվում են իրենց ձեռք ու մեծությամբ:

Բաժակն ու պսակը պաշտպանում են առեջներն ու վարսանդը վոչ միայն մինչև ծաղկի բացվելը, այլ և նրանից հետո: Հայտնի յե, վոր գիշերը կամ վատ յեղանակներին ծաղիկները կամ զլուխները ցած են զցում և

կամ փակում են իրենց ծաղկաթերթիկներն ու բաժակաթերթիկները: Յերկու դեպքում ել ծաղիկը մի նպատակ ե ունենում, այն ե՝ պաշտպանվել անձրեկի կաթիկներից կամ ցողից, վորոնք շատ վատ ազգեցություն ունեն ծաղկի ներսի գործարանների վրա:

Առեջներն ու վարսանդը ծաղկի ամենակարևոր գործարաններն են, վորովհետեւ դրանք են առաջ բերում պտուղ և սերմ: Առեջները բաղկացած են առեջաթելից և նրա վրա նստած փոշանոթից: Վերջինս լիքն ե փոշով, վոր հասունանալուց հետո ցրվում ե դեղին, մանրիկ փոշու ձեռք: Դիտելով մանրադիտակի տակ փոշու հատիկները, տեսնում ենք, վոր նրանք առանձին-առանձին



Զանազան ձեռքի փուելատիկներ:


բջիջներ են, լցված պլրոտոպլազմայով և ծածկված գեղեցիկ թաղանթով: Տարբեր ծաղիկներ տարբեր թվով առեջներ ունեն: Կան ծաղիկներ, վոր միայն մի հատիկ առեջ ունեն, կան ծաղիկներ ել, վոր ունեն միքանի տասնյակ առեջներ:

Յերբեմն ծաղկի մեջ լինում են միայն կամ առեջներ և կամ վարսանդ: Միայն առեջներ ունեցող ծաղիկը կոչվում ե առեջածաղիկ, միայն վարսանդ ունեցողը՝ վարսանդածաղիկ: Առեջները ծաղկի արական գործարաններն են, վարսանդը՝ իգական. այդ պատճառով ել առեջածաղիկը կոչվում ե նաև արական, վարսանդածաղիկը՝ իգական: Յերբ արական և իգական ծաղիկը միևնույն բույսի վրա յե լինում, բույսը կոչվում ե միատուն, իսկ յերբ տարբեր բույսերի վրա, կոչվում ե յերկտուն: Տիլին, կաղնին, կեչին միատուն բույսեր են. նրանց արական և

իգական ծաղիկները գտնվում են միևնույն ծառի վրա։ Հացենին, ուռենին, բարտին յերկտուն են, վորովճետե նրանց իգական ծաղիկները մի ծառի վրա յեն գտնվում, արականները՝ մի այլ ծառի վրա։

ԾԱՂԻԿՆԵՐԻ ՓՈՇՈՏՈՒՄԸ

1. ԾԱՂԻԿՆԵՐԻ ՓՈՇՈՏՈՒՄԸ. — Պտուղն ու սերմերն Ա.Ա.ՉԱ.ՑՈՒՄԸ. — Պտուղն ու սերմերն առաջանում են ծաղիկներից։ Տեսնենք այժմ, թե ինչպես ե կատարվում։ Պտուղն առաջանում է վարսանդի սերմնաբանից, սեր-



ՍԵՐՄՆԱԲՈՂԲՈՅԻ ԲԵՂՄԵՆԱՎՈՐՈՒՄԸ:

մերը՝ սերմնաբողբոյներից։ ուրեմն, վարսանդից են առաջանում թե պտուղը և թե սերմերը։ Յեթե պոկենք վորեե ծաղկից առեջները և ծածկենք ծաղիկն այնպես, վոր դրսից նրա վրա ծաղկափոշի չթափվի, կտեսնենք, վոր ծաղկից այլևս պտուղ չի առաջանում։ Այդ նշան է, վոր պտղի առաջացման համար, բացի վարսանդից, անհրա-

ժեշտ են նաև առեջները։ Առեջների փոշանոթներն, ինչպես զիտենք, լցված են ծաղկափոշով։ Վորպեսզի սերմնաբանից պտուղ առաջանա, անհրաժեշտ է, վոր այդ ծաղկափոշին ընկնի վարսանդի սպիթի վրա, ուրիշ կերպ ասած, անհրաժեշտ է, վոր տեղի ունենա փուռում։

Յերբ վարսանդը հասունանում է, սպին ծածկվում ե կպչուն նյութով։ ծաղկափոշին նրա վրա ընկած ժամանակ կպչում է այդ նյութին և փոքր ինչ անցած՝ սկսում է ծլել այնտեղ։ Նրանից արձակվում է մի բարակ յերկար խողովակ, վոր սոնակով անցնելով՝ մտնում է սերմնաբանը և հասնում սերմնաբողբոյներին։ Յուրաքանչյուր սերմնաբողբոյն ունի մի փոքրիկ անցք և պարունակում է իր մեջ մի քսակիկ, վոր սաղմնային բակիկ և կոչվում։ Այս քսակիկի մեջ գտնվում են միքանի բջիջներ։ Բջիջներից մեկը կոչվում է ձվաբջիջ։ Համնելով սերմնաբողբոյն՝ ծաղկափոշու խողովակը նրա անցքով ներս և մտնում և միանում ձվաբջիջի հետ։ Այդ միացումը կոչվում է բեղմնավորում։ Յերբ տեղի յե ունենում բեղմնավորումը, ծաղիկը սկսում է թառամել. շուտով թափվում են նրա պսակաթերթիկները, չորանում են առեջները, չորանում են նաև վարսանդի սպին ու սոնակը. մնում է միայն սերմնաբանը, վորն սկսում է արագ կերպով աճել, զարգանալ։ Սերմնաբանը զարգանալով՝ դառնում է պտուղ, իսկ նրա մեջ գտնվող սերմնաբողբոյները՝ սերմեր։

2. ԽԱ.ՉԱ.ՉԵՎ. ՓՈՇՈՏՈՒՄ. — Բաղմաթիվ փորձերը ցույց են տվել, վոր յերբ ծաղիկները փոշոտվում եր իրենց մեջ գտնված առեջների ծաղկափոշով, այսինքն սերմեկան ծաղկափոշով, այն ժամանակ կամ բոլորովին սերմեր չեն տալիս, կամ տալիս են այնպիսի սերմեր, վորոնցից առաջանում են միայն թույլ ու վտիտ բույսեր։ Յեկ ընդհակառակը, յերբ ծաղիկները փոշոտվում են նման այլ ծաղկի կամ, ավելի լավ, ուրիշ տեղ գտնվող նման բույսի ծաղկի ծաղկափոշով, տալիս են արդեն առատ և լավ սերմեր։

Այդպիսի սերմերից առաջացած բույսերը լինում են առողջ և ուժեղ: Այս վերջին տեսակի փոշոտումը, յերք ծաղկափոշին ծաղիկն ստանում է ուրիշ նման ծաղիկներից և վոչ իր սեփական առեջներից, կոչվում է խաչաձեվ փռօտում:

Յեզ բույսերն աշխատում են, վոր տեղի ունենախաչաձեւ փոշոտում և վոչ թե ինքնափռօտում: Դրա համար բնությունը տվել է նրանց մի շարք հարմարություններ: Միքանի բույսեր, ինչպես տեսանք, ունեն, որինակ, առանձին-առանձին առեջածաղիկներ և վարսանդաղիկներ: Պարզ է, վոր այդ բույսերն ինքնափռօտում յերբեք չեն կարող ունենալ:

Սուեչներ ու վարսանդ պարունակող ծաղիկներ ունեցող մի շարք բույսերի յել առեջներն ու վարսանդները հասունանում են տարբեր ժամանակներ: Այդպես ե, որինակ, զանգակիկը: Սուած հասունանում են նրա առեջները և յերբ ծաղկափոշին ցրվում ու առեջները թառամում են, նոր սկսում ե բացվել վարսանդի սպին: Զղախոտի մեջ ել տեղի յե ունենում հակառակը, առաջ հասունանում ե վարսանդը և ապա առեջները: Վերջապես միքանի բույսերի առեջներն ու վարսանդը այսպես են զասագորված ծաղկի մեջ, վոր ծաղկափոշին յերբեք չի ընկնում վարսանդի սպիթ վրա, թեպետ առեջներն ու վարսանդը միաժամանակ են հասունանում: Այս բոլոր գեպքերում տեղի յե ունենում, ուրեմն, խաչաձեւ փոշում և վոչ ինքնափռօտում:

Բայց ինչպես ե կատարվում խաչաձեւ փոշոտումը, ինչպես և ծաղկափոշին ընկնում մի ծաղկից մյուսի վրա, վոր յերբեմն նրանից ահագին հեռագորության վրա յե գտնվում, դիտողությունները ցույց են տվել, վոր այդտեղ բույսերին ոգնության են հասնում միջատներն ու քամին:

3. ԾԱՀԿՆԵՐԻ ՓՈՇՈՏՈՒՄԸ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ:—Բույսերի մեծ մասի ծաղիկները փոշոտվում են միջատների միջոցով: Շատ միջատներ, որինակ, մեղուները, իշամե-

ղուները, թիթեռները և այլն, կերակրվում են ծաղիկների մեջ գանվող մեղրահյութով: Իբենց համար կերակրուր գտնելու համար այդ միջատները մի ծաղկից գնում են մյուսը և մեղրահյութը ծծելիս՝ քսվում առեջների փոշանոթներին: Քսվելով փոշանոթներին՝ նրանք իրենց վրա յեն թափում ծաղկափոշին: Հաճախ մեղուներին կարելի յե տեսնել ամբողջովին թաթախված ծաղկափոշումնչ: Այդ գրության մեջ, յերբ նրանք նստում են մի այլ ծաղկի վրա և մեղրահյութ ծծելու համար քսվում նրա զանազան մասերին, ինչպես նաև վարսանդի սպիթին, կատարում են փոշոտումն:

Յեթե միջատներ չլինեյին, այն ժամանակ շատ բույսեր չեյին փոշոտի, հետեապես և սերմեր չեյին տա: Վոր այդ, իրոք, այդպես ե, ցույց ե տալիս հետեյալ փաստը: Ավստրալիայում մարդիկ ցանում եյին առվույտ. սա լավ աճում եր, տալիս եր առատ ծաղիկներ, բայց յերբեք սերմ չեր տալիս: Ի՞նչու: Պատճառը հասկանալի յե: Առվույտի ծաղիկները փոշոտվում են միայն իշամեղուների միջոցով, մինչդեռ Ավստրալիայում այդ միջատները չըկային: Յերբ մարդիկ Յեվրոպայից Ավստրալիա տարան և իշամեղուները, վերջիններս բազմանալով այստեղ՝ սկսեցին փոշուել տռվույտի ծաղիկները և միայն այդ ժամանակ առվույտը սկսեց սերմ տալ:

Միջատների միջոցով փոշոտվող բույսերը միջատներին գրավում են միքանի միջոցներով: Ամենից առաջ նրանց ծաղիկները մեծ են և ունեն աչքի ընկնող գույներ: Հաճախ այդպիսի բույսերի ծաղիկներն ավելի նկատելի դառնալու համար համախմբվում են միասին և կազմում ծաղկափություն կամ ծաղկեփություն: Այդպես են անում մանավանդ այն բույսերը, վորոնց ծաղիկները փոքր են: Աչքի ընկնող գույներ ունենում են գլխավորապես պատկաթերթիկները: Կնշանակե, սրանք վոչ միայն պաշտպանում են ծաղկի ներքին գործարանները՝ առեջներն ու վարսանդը, այլ և ծառայում են մի այլ նպատակի, այն ե՝ գրավում են միջատներին: Փոքր պսակ և վոչ վառ գույներ ունեցող ծաղիկները միջատներին գրավելու հա-

մար արձակում են իրենցից բուրմունք: Միջատներն այդ բուրմունքի շնորհիվ շատ հեռուներից անզամ գնում են ուղղակի գեպի ծաղիկը: Սակայն, միջատներին զրավելու համար, բույսերի ամենամեծ միջոցը նրանց մեղահյութն է, վոր շատ միջատների միակ կերակուրն ե կազմում:

Բայց, իհարկե, բավական չե միայն զրավել միջատներին, անհրաժեշտ ե ունենալ և այնպիսի հարմարություն, վոր միջատներն իրենց այցելության ժամանակ փոշուաեն ծաղիկները: Յեկ այդ հարմարությունը մենք տեսնում ենք ծաղիկների մեջ: Առեջներն ու վարսանդը նրանց մեջ այնպես են դասավորված, վոր միջատները մեղահյութը ծծելիս անպայման պետք ե կամ փոշին վերցնեն իրենց վրա և կամ իրենց վրա յեղած փոշին քսեն վարսանդի սպիթն:

4. ԾԱՀԻԿՆԵՐԻ ՓՈՇՈՏՈՒՄԸ ՔԱՄՈՒ:— Քամու միջոցով կս փոշոտվում են բավականին շատ բույսեր: Այդ բույսերի ծաղիկներն իրենց կազմությամբ նման չեն միջատների միջոցով փոշոտվող բույսերի ծաղիկներին: Նրանք չունեն վոչ վառ գույնի պսակ, վոչ բուրմունք և վոչ ել մեղահյութ: Դրանց կարիքն այդ ծաղիկները չեն զգում: Բայց դրանց փոխարեն նրանք ունեն այլ հարմարություններ, վորոնց միջոցով կարողանում են դյուրությամբ քամու միջոցով փոշոտվել: Ամենից առաջ այդ ծաղիկները նստած են բույսի այնպիսի մասերում, վորտեղ քամին ազատ կերպով կարող ե նրանց ճոճել, շարժել. ապա առեջները դուրս են ցցված, վորպեսզի ծաղկափոշին թափված ժամանակ քամուց հեշտությամբ տարփի զանազան կողմեր: Բացի դրանից, այդ ծաղիկներն ունենում են ահագին քանակությամբ ծաղկափոշի: Յերբ ծաղկում ե կանեփը, նրա արտի վրա ծաղկափոշու մի ամպ ե կանգնում: Նույնն ենք տեսնում և շամու անտառում, յերբ ծաղկում ե շամին. անձերի կաթիլներն այդ ժամանակ խառնվելով ծաղկափոշու հետ՝ հաճախ դեղին դույն են ստանում: Քամու միջոցով փոշոտվող

բույսերի ծաղկափոշին լինում ե փոքր, չոր և թեթև: Շամու ծաղկափոշին նույնիսկ ողով լիքը առանձին փամփլափիկներ ունի, վորոնք նրան չափից դուրս թեթեացնում են: Վերջապես այդպիսի բույսերի վարսանդի սպիները լինում են դուրս ցցված և չափազանց մեծ, հաճախ նրանք փետուրի ձև են ունենում, մի հանգամանք, վոր նույնպես մեծ հարմարություն և ծաղկափոշին հեշտությամբ իր վրա վերցնելու համար:

Քամու միջոցով փոշոտվող բույսերն ունեն նաև այլ հարմարություններ, որինակ, նրանք բանում են խումբ-խումբ և ծաղկում են մեծ մասամբ վաղ գարնան: Խումբ-խումբ բան ժամանակ ծաղկափոշին առատ կերպով ցըրվում ե ողի մեջ և քամու միջոցով հեշտությամբ ընկնում վարսանդների սպիթի վրա, իսկ վաղ գարնան ծաղկելին այն նշանակությունն ունի, վոր տարփա այդ ժամանակ լինում են առհասարակ ուժեղ քամիներ և, վոր գլխավորն ե, իրենք քամու միջոցով փոշոտվող բույսերի մեծ մասը տերեած չի լինում, այդ պատճառով ել ծաղկափոշին, առանց տերեների կողմից արգելվի հանգիպելու, թափվում և ծաղիկների վրա:

ՊՏՈՒՂ ՅԵՎ ՍԵՐՄ

1. ՊՏՈՒՂՆԵՐԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍՍԿՆԵՐԸ:— Փոշոտումից հետո տեղի յե ունենում բեղմափրումն. այնունետե սերմաբանը զարգանալով սկսում ե փոխարկվել պտղի, իսկ սերմաբողբոշները՝ սերմերի: Սերմաբանի պատերից այդ ժամանակ զարգանում ե պտղապայանը: Միքանի պտուղների պտղապայանը լինում ե չոր ու պինդ, մյուսներինը՝ փափուկուհյութալի: Չոր ու պինդ պտղապայան ունեն, որինակ, ընկույզը, արևածաղկի պտղը, իսկ փափուկ ու հյութալի՝ բալը, սալորը, հաղարճը և այլն: Թե չոր և թե հյութալի պտուղները լինում են միասնում և քազմասերմ:

Միասնում չոր պտուղների տեսակներն են համարվում ունդը, կտիկը և ընկույզը: Ունդի պտղապայանը կաշե-

կերպ ե և միացած սերմի հետ, կտիկինը՝ կաշեկերպ ե, բայց միացած չե սերմի հետ, իսկ ընկուղինը՝ միացած չլինելով հանդերձ՝ փայտային ե: Ունդի որինակ կարող են լինել հաճարի, ցորենի և առհասարակ հացաբույսերի սերմերը, կտիկի որինակ՝ արևածաղկի սերմը, իսկ ընկուղի՝ ընկույզը, տխիլը և այլն: Այս միասերմ չոր պըտուղները հասունացած ժամանակ չեն ճեղքվում: Բազմասերմ չոր պտուղների տեսակներ են՝ պատիճը, փոնկը և արկդիկը: Սրանք բոլորը հասունացած ժամանակ ճեղքվում են և սերմերը ցրվում: Պատիճը միախինձ պտուղ ե. լորին, ակացիան, սիսեռը և այլն տալիս են այդպիսի պտուղ: Փոճոկը յերկխինձ ե. ոստարբերվում է պատիճից նրանով, վոր նրա միջով յերկայնությամբ անցնում ե մի միջնապատ, վորի վրա կպած են սերմերը. կաղամբի, շահպրակի պտուղը փոճոկ ե: Սրկդիկը լինում է միախինձ կամ բազմախինձ. այդպիսի պտուղ ունեն խաշխաշը, մանիշակը և այլն: Արկդիկը բացվում է անցքերով կամ կափարիչով:

Հյութալի պտուղների տեսակներն են համարվում հատապտուղը և կորիզավոր պտուղները: Հատապտուղն իր հյութալի միջուկի մեջ պարունակում է բազմաթիվ սերմեր. հատապտուղներ են խաղողի, հաղարձի պտուղները: Կորիզավոր պտուղներն ունեն մի սերմ՝ ծածկված պինդ, շատ կարծր պատյանով: Վերջին տեսակի պտուղներ են՝ բալը, սալորը, ծիրանը, դեղձը և այլն:

Հյութալի պտուղների կարգին են պատկանում նաև ինձորը, տանձը, սեխը, վարունգը և այլն:

2. ՊՑՈՒՂՆԵՐԻ ՑԵԼ ՍԵՐՄԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ:—Շատ բույսեր իրենց տեսակի պահպանության համար տալիս են ահագին քանակությամբ սերմեր: Բայց յեթե այդ սերմերը բոլորն ընկնեն բույսի անմիջապես տակը և ծրւեն այնտեղ, միմյանց կխեղղեն, վորովհետև այդտեղ նրանք բավարար չափով հող, խոնավություն և լույս չեն կարող գտնել: Այդ ե պատճառը, վոր բույսերն իրենց սերմերն ավելի լավ պայմանների մեջ դնելու հա-


մար աշխատում են, ինչքան՝ կարելի յե, ցրվել ավելի հեռավոր տեղեր: Այդ նպատակի համար պտուղներն ու սերմերն ունեն բազմազան հարմարություններ: Բույսերի մի մասն ինքն ե ցրվում սերմերը, իսկ մյուսները դրա համար դիմում են բամու, ջրի և կենդանիների ոգնության:

Չոր, բազմասերմ պտուղներ տվող բույսերը սովորաբար իրենք են տարածում իրենց սերմերը: Սրանց պտուղները հասունանալուց հետո ճեղքվում են: Այդ ճեղքումը կատարվում է միանգամից և այսպիսի ուժով ու ձեռվ, վոր սերմերը թռչում են զանազան տեղեր: Միքանի բույսերի սերմերը ճեղքման ժամանակ թռչում են միքանի սաժեն տարածություն: Այդ կողմից հայտնի յե մի գլուխիր կոչվող բույսը: Յերբ սրա պատիճը հասունանում ե, հարկավոր ե ծայրին միայն փոքր ինչ դիպչել, խկույն բացվում ե նա և սերմերը նետում զանազան տեղեր: Այդ բույսը շատ տարածված է մեր յերկրներում, բնում է սովորաբար խոնավ, սովերոտ վայրերում և ծաղկում է հուլիսին կամ ոգոստոսին:

Նման ձեռվ ցրվում են իրենց սերմերը նաև հյութալից պտուղ ունեցող միքանի բույսեր: Կովկասում, նաև Ղրիմում բնում ե մի բույս, վոր ծվծվուկ և կոչվում: Սա տալիս ե փոքրիկ վարունգի նման պտուղ՝ լցված լորձային հեղուկով, վորի մեջ լողում են մանր սերմեր: Յերբ պտուղը հասնում ե, պոկվում ե ցողունից և լորձային հեղուկը մեջը գտնվող սերմերի հետ միասին մեծութով դուրս ե գալիս այն անցքից, վոր առաջանում է պոկված տեղում: Ծվծվուկն իր սերմերը նետում ե այդ ձեռվ բավականին հեռու տեղեր:

Շատ բույսեր ել իրենց պտուղներն ու սերմերը տարածում են քամու միջոցով: Այդպիսի բույսերից միքանին, որինակ, խտուտիկը, ուռենին, բարտին, բամբակին ունեն բարակ և յերկար մազերով ծածկված սերմեր ու պտուղներ: Ծնորհիվ այդ մազերի սերմերը հեշտությամբ տարվում են նույնիսկ շատ հեռավոր տեղեր: Մյուսների սերմերը փոխանակ մազիկների՝ ունեն իրենց


վրա տարբեր ձևերի և մեծության թևեր, Այդպիսի սերմերը կոչվում են թիվավոր սերմեր, Թևավոր սերմեր



Բամբակի պտուղը Բամբակի սերմը

ունեն, որինակ, թղիին, կեճին, շամին, հացին, բանջարներից՝ ավելուկը և այլն:

Սերմերի տարածման գործում մեծ դեր է կատա-




Թիվավոր սերմեր յեվ պտուղներ.

1) Ծամու սերմը. 2) Կեճու պտուղը. 3) Թղկու պտուղները. 3) Հացենու պտուղները. 5) Հացենու սերմն առանձին. 6) Թեզու պտուղները.

բում նաև ջուրը, Յեզ այդ զարմանալի չե. ջուրն ինչպես վոր հողի և քարի կտորներ և տեղափոխում, այնպես ել

կարող ե պատահած սերմերը տեղափոխել, Լեռների բարձր տեղերում աճած բույսերի սերմերի մեծ մասը ջրի միջոցով և տարվում դեպի դաշտերն ու հովիտները. Ջրի միջոցով իւ տարածում իր սերմերը և կոկոսյան արմավենին. Սրա պտուղը բավականին մեծ է, մոտավորապես յերեխայի գլխի չափ. Դրսից պատած է նա հաստ ու ամուր կեղեռվ, վորի տակ գտնվում է թելային մի հատ շերտ. Այս շերտը պտուղը բավական թեթևացնում է. Թելային շերտի տակ գտնվում է յերկրորդ չափաղանց ամուր կեղեռը, որա մեջ ել՝ սերմը. Կոկոսյան արմավենին բանում է ծովերի ափերին. Նրա պտուղները պաշտպանված լինելով յերեք տեսակի կեղեններով՝ ջրի մեջ ընկնելուց հետո բավական յերկար ժամանակ լողում են նրա յերեսին, մինչև վոր ալիքները կամ ծովային հոսանքները նրանց ջրի ափն են գցում: Կոկոսյան արմավենին այդ ձևով է տարածվել տաք յերկների բոլոր կղզիների վրա:

Սերմերի և պտուղների տարածման գործին ոգնում են նաև կենդանիները. Չոր պտուղներից միքանին ունեն իրենց վրա կարթիկներ կամ կպչաններ. սրանցով նրանք կըպչում են մոտով անցնող կենդանիների բրդին ու մազերին: Ոյնուհետեւ, յերբ կենդանիները նրանցից աղատվելու համար քսվում են գետնին կամ զանազան իրերի, պոկվում են նրանք և այդպիսով տարածվում զանազան կողմեր: Կոռատուկի պտուղը:



Ամառը դաշտերում կամ մարգագետիններում զբունելու ժամանակ մեզ վրա ևս կպչում են բազմատեսակ սերմեր: Հյութալից պտուղների սերմերը տարածվում են մեծ մասամբ թռչունների միջոցով: Այդ պտուղների սերմերը սովորաբար ծածկված են ամուր ու պինդ պատյաններով. յերբ թռչուններն ուտում են պտղի հյութալից մասը՝ սերմերը նետում են այս ու այն կողմը: Փոքր սերմերը թռչունները հյութալից մասի հետ կուլ են տա-

լիս, բայց վորովհետև սրանք պատաժ են ամուր պատյաններով, մնում են անվաս նրանց մարսողական գործարանների մեջ և արտաթորությունների հետ դուրս են գալիս:

Այսպիսով, ուրեմն, բույսերն իրենց սերմերը տարածում են գլխավորապես քամու, ջրի և կենդանիների միջոցով:

Մենք ծանոթացանք բույսի կյանքի հետ. գիտենք այժմ, թե ինչպես ե սերմը ծլում, ինչպես ե աճում, զարգանում մատաղ բույսը, ինչպես ե մնվում, շնչում, ինչպես ե բազմանում և ինչպես ե տարածումնա իր սերմերը: Ծանոթանանք այժմ միքանի առանձին բույսերի հետ: Առաջին հերթին ծանոթանանք ծաղկաբերների հետ:

ԾԱՂԿԱԲԵՐ ԲՈՒՑՍԵՐ ՏԱՆՉԵՆԻ

Վայրի յեվ ազնիվ տանձենի: — Տանձենին վայրի գըրությամբ բնում ե անտառներում: Նրա պտուղները մանր են ու կոշտ: Շատ հին ժամանակներից սկսած մարդ գործ ե ածում նրա պտուղները: Այդ ե պատճառը, վոր նա դարերի ընթացքում առանձին խնամքի յե արժանացել, վորի շնորհիվ ել առաջացել են նրանից մեր այդիների այժմյան ազնիվ տեսակները:


Ազնիվացումը: — Բոլոր ազնիվ տեսակի տանձենիների սերմերից առաջանում են միշտ այնպիսի ծառեր, վորոնց պտուղներն իրենց ձևով ու համով նման են լինում վայրի տանձենու պտղին: Ազնիվ տեսակի պտուղ ստանալու համար անհրաժեշտ ե անպատճառ ծառն ազնվացնել պատվաստի միջոցով:

Փօքրը: — Վայրի տանձենու ճյուղերը վերջանում են փշերով: Այդ փշերով պաշտպանվում են ախտակեր կենդանիներից: Փշերով հարուստ են ներքեի ճյուղերը: Վերևի ճյուղերը, վորոնց կենդանիները հասնել չեն կարող, զուրկ են փշերից: Ազնիվ տանձենիները փշեր չունեն. նրանք

բնում են այդիներում: Այդտեղ մարդիկ պաշտպանում են նրանց զանազան կենդանիներից:

ՊՏՈՒԿՅԵՐԸ: — Գարնանը տանձենու վրա լինում են յերկու տեսակի պտուկներ. մի տեսակը կարճ ու սրածայր, մյուսը՝ մեծ ու հաստ: Առաջին տեսակի պտուկներից առաջանում են տերեւներ ունեցող ճյուղեր, մյուս տեսակի պտուկներից՝ տերեւներ և միաժամանակ ծաղիկներ ունեցող ճյուղեր:

ՏԵՐԵՎԸ: — Տանձենու տերեւ կոթավոր ե, ձվածկ և ունի սղոցածկ կը- տրավածքներ: Կոթն յերկար ե ու առա- ձգական: Քամու ժամանակ նա զյու- րությամբ թեքվում ե ամեն կողմի վրա: Շնորհիվ կոթի այդ ճկունության՝ տե- րեւը քամուց չի վը- նասփում: Նման ձեռվ կոթը պաշտ- պանում ե տերեւն անձրեփմեծ կաթիլ- ների հարվածից: Տե- րեւի թիթեղի մեջ տարածված ջղերը նրան մեծ ամրու- թյուն են տալիս: Այդտեղ ջղերը նույն կատարում, 1) ճյուղը տերեվեռով յեվ ծաղիկներով, 2) ծաղկի կտրվածքը, 3) Պտղի կտրվածքը, 4) Պտղի միջա- ինչ փոր յերկաթի ձողերը հովանոցի մեջ: Տանձենու տերեւը ծայրերում թեքված ե գեպի ցած, այդ պատճառով անձրեփ ջուրը ծայրերից թափվում եներքենում գտնվող տերեւների վրա, այդտեղից ել ավելի ցածը գտնվողների վրա և վերջը ծայրերում գտնվող տերեւներից ընկնում ե գետին: Կա-



Տ ա ն ձ ե ն ի.

1) Ճյուղը տերեվեռով յեվ ծաղիկներով, 2) ծաղկի կտրվածքը, 3) Պտղի կտրվածքը, 4) Պտղի միջա- ինչ փոր յերկաթի կտրերը:

ծաղիկները հովանոցի մեջ: Տանձենու տերեւը ծայրերում թեքված ե գեպի ցած, այդ պատճառով անձրեփ ջուրը ծայրերից թափվում եներքենում գտնվող տերեւների վրա, այդտեղից ել ավելի ցածը գտնվողների վրա և վերջը ծայրերում գտնվող տերեւներից ընկնում ե գետին: Կա-

թիւների ընկնելու տեղում գտնվում են մեծ քանակությամբ մաղարմատներ, վորոնք ջուրն իսկույն ներս են ծծում:

Ծաղիկը:—Տանձենին տալիս ե շատ մեծ թվով ծաղիներ, այնպես վոր ծաղկած ժամանակ ամբողջ ծառը սպիտակում ե: Ծաղիկները հոտավետ են և պարունակում են առատ մեղրահյութ: Այդ ե պատճառը, վոր նըրանց վրա կարելի յե տեսնել բազմաթիվ միջատներ, Յեզ այդ հասկանալի յե, տանձենու ծաղիկները փոշոտվում են միջատների շնորհիվ: Ավտրալիայում տանձենին պըտուղ չեր տալիս, մինչև վոր այնտեղ մեղրուներ չտարան: Տանձենու ծաղկի ծաղկական ունի բաժակի ձև: Նրա ծայրերին նստած են հինգ հատ կանաչ բաժակաթերթեր հինգ պսակաթերթիկներ և մոտ 20 առեջներ: Բաժակի փոքրիկ բերանից դուրս են գալիս վարսանդի 5 հատ սունակները: Վարսանդի սերմարանը միացած ե այդ բաժակի պատերի հետ:

Պտուղը:—Պտուղն առաջանում ե ծաղկակալից և սերմարանից: Ծաղկակալից առաջանում ե պտղի մսային մասը, սերմարանից՝ միջուկը: Վերջինս բաղկացած է 5 խորշերից, վորոնցից յուրաքանչյուրում գտնվում ե շագանակագույն սերմ:

Սերմի տարածում:—Վորպեսզի սերմից նոր բույս առաջանա, անհրաժեշտ ե, վոր նրա մսային մասը փափկամ կենդանիներն ու թռչունները ուտեն այն և սերմերը դուրս հանելով՝ ցրվեն զանազան կողմեր: Այդ սերմը դուրս համարած են շատ ամուր պատյանով: Պրա համար ել, յերբ կենդանիներն ուտելու ժամանակ չեն ջարդում տատաներով, ապա անվաս կերպով աղիքներից կրկին դուրս են գալիս: Կնշանակե, պտղի մսային մասը սերմի տարածման համար ե առաջացել պտղի մեջ: Հասած պտուղը կենդանիներին գրավելու համար ունի նաև աչքի ընկնող գույներ: Զհասած պտուղն անդանիներին գրավելու համար ունի նաև աչքի ընկնող գույներ: Զհասած պտուղն անդանիներին գրավելու համար ունի նաև աչքի ընկնող գույներ:

Տանձենին պատկանում ե վարդածաղիկների ընտանի-

քին: Այս ընտանիքին են պատկանում նաև խնձորենին, կեռասենին, բալենին, գեղձենին, մորենին, յելագը, մասրենին և վարդենին:

ՎԱՅՐԻ ՎԱՐԴԵՆԻ ԿԱՄ ՄԱՍՐԵՆԻ

Թաւիր:—Մասրենին բանում ե անտառների ծայրերին և ճանապարհների ու ցանկապատճերի մոտերքը: այդտեղ կազմում ենա խիտ թփեր: Նրա թուփը կազմվում ե այսպես: սկզբում գետնից դուրս են գալիս մի շարք ուղղաձիգ, փափուկ ընձյուղներ, վորոնք, սակայն, շուտով փայտանում են և աղեղնաձև կորանում դեպի ցած: Հետեւ տեյալ տարին աղեղների վերին մասից դուրս են գալիս թե ծաղիկներ ունեցող կարճ ճյուղեր և թե յերկար ու



Վայրի վարդենի կամ մասրենի.

1) Մասրենու ճյուղը տերեներով, փշեկներով և ծաղկավորութեամ կոկոնը, 2) ծաղկաբողբութեամ կոկոնը, 3) ճյուղը տերեներով և պտուկներով:

ուղղաձիգ ընձյուղներ: Վերջիններս փորոշ ժամանակից հետո կրկին կորանում են աղեղնաձև և նստում հին ճյուղերի վրա: Այս յերեսույթը կը կնվազում ե այնունետեւ ամեն տարի և այդպիսով մասրենու թուփը հետպհետեւ մեծանում ե ու խճնվում:

Փեերը: — Մասրենու մատաղ ճյուղերը, ծաղկակոթերը և տերեների գլխավոր ջղերը պատած են փշերով: Մրանք ամուր են և ունեն ցած ուղղված սուր ծայրեր: Փշերը դուրս են գալիս կեղեկց կամ մաշկից, դրա համար ել կեղեկի հետ միասին պոկվում են հեշտությամբ: Փշերով մասրենին պաշտպանվում ե խոտակեր կենդանիներից: Հին փայտացած մասերից փշերը թափվում են: Յեզ շատ հասկանալի յե: հին փայտացած մասերը կենդանիների կեր չեն կարող լինել, ուրեմն պաշտպանվելու կարիք չունեն:

Տերեվը: — Մասրենու տերեր բարդ ե: Գլխավոր տերեակոթի վրա նստած են 5—7 հատ տերեկիներ: Մրանք նստած են զույգ-զույգ՝ միայն ծայրին գտնվում ե մի հատ տերեկիկ, դրա համար ել մտարենու տերեր կոչվում ե անզույգ փետրաձեզ: Տերեկիները ձգաձև են և ունեն սղոցաձև յեզրեր:

Ծաղիկը: — Մասրենու ծաղիկը նման ե տանձենու ծաղկին այն տարբերությամբ, վոր նրա ծաղկակալը կրծաձև ե և վերջանում ե դեղին մսոտ ողակով: Ծաղկակալի վրա նստած են 5 հատ բաժակաթերթեր, 5 պսակաթերթիկներ և մեծ թվով առեջներ: Ծաղկակալի խոռոչում գտնվում են բազմաթիվ սերմարաններ, վորոնց սոնակները դուրս են գալիս խոռոչի բերանից և վերջանում դեղին սպիներով: Մասրենու ծաղիկը փոշությում ե միջատների շնորհիվ. դրանց գրավելու համար նա ունի աչքի ընկնող գույներ, սպիտակ կամ բաց-վարդագույն և ապա շատ ուժեղ բուրմունք: Նա բավականին մեծ ե. դրա համար ել հեռավից նկատելի յե: Մասրենու ծաղիկը մեղրահյութ չունի. միջատներին հյուրասիրում ե նա իր առատ ծաղկափոշով: Վերջինս խոնավությունից փչանում ե հեշտությամբ. այդ պատճառով ել գիշերներն ու խոնաւ յեղանակներին ծաղիկը փակվում ե: Այդ ժամանակ ծածկութը ծածկելով առեջները պաշտպանում են զանազան տեսակի հոտավետ ջրեր և սալոն:

Պտուղը յեկ սերմերի տարածվելը: — Մասրենու սերմը տարածվում ե թռչունների ու կենդանիների միջոցով:

Մրանց գրավելու համար նրա պտուղը հասունացած ժամանակ վառ-կարմիր գույն ե ստանում և պտղապատյանն ել դառնում ե համով ու ախորժելի: Պտուղն իր մեջ պարունակում ե բազմաթիվ սերմեր. սրանք պատած են մազմզուամուր կեղեներով, և այդ պատճառով թռչունների մարսողության գործարաններում փոփոխության չեն յենթարկվում և անփաս դուրս են գալիս արտաթռության հետ միասին: Մասրենու պտուղը կոչվում ե մասուր: Մարդիկ ևս գործ են ածում նրա մսոտ պաղապատյանը:

Վարդենի: — Մասրենու ազնիվ տեսակն ե վարդենին. սա իր ցողունով ու տերեներով բոլորովին նման ե մասրենուն. զանազանվում ե նրանից միայն իր ծաղկով: Վերջինս, վոր վարդ ե կոչվում, ունենում ե յերբեմն հարյուրից ավելի պսակաթերթիկներ, մինչդեռ մասրենու ծաղիկը, ինչպես գիտենք, ունի միայն հինգ հատ պսակաթերթիկ: Վարդն իր գեղեցկության և անուշահոտության պատճառով շատ հին ժամանակներից սկսած համարվում ե ծաղիկների թագուհի: Վարդենու հայրենիքն ե Պարսկաստանը և Տաճկաստանը. այստեղից նա տարածվել ե աշխարհիս բոլոր մասերը: Վարդի տեսակները շատ բազմազան են. կան կարմիր, դեղին, սպիտակ, շատ թերթիկներով և քիչ թերթիկներով վարդեր: Այդ բոլոր տեսակներն առաջ ե բերել մարդ՝ ընտրության միջոցով: Ինչքան վարդի մեջ պսակաթերթիկները շատ են, այնքան առեջները քիչ են: Յեզ այդ հասկանալի յե: պսակաթերթիկները առաջանում են առեջներից, Վարդի ծաղիկը պարունակում ե իր մեջ մի տեսակ յուղ, վորից մարդիկ պատրաստում են զանազան տեսակի հոտավետ ջրեր և սալոն:

Մասրենին ազնվացնում են վարդենու պատվաստով:

Գ Ա Զ Ա Ր

Բննելու տեղն ու արմատը: — Դազարը կամ ստեպղինը բանջարանոցի բույս ե, բայց վայրի գրությամբ բննում ե նաև դաշտերում՝ ճանապարհների մոտերքը: Այդպիսի

տեղերում հողի վերին շերտը հեշտությամբ չորանում է, սակայն գաղարը դրանից վնաս չի կրում, վորովհետեւ ունի շատ յերկար արմատ, վորով մտնում է հողի խոնավ շերտերը և այնտեղից վերցնում անհրաժեշտ ջուրը. Վայրի գաղարի արմատը դեղին և ու փայտային, բայց յեթե ցանենք նրա սերմերը բանջարանոցում և լավ խնամենք, կստանանք ավելի փափուկ արմատ ունեցող գաղար. Եարունակելով այս ձեռվ միքանի տարիներ՝ վերջը կստանանք մսոտ և համեղ արմատ ունեցող մեր բանջարանոցային գայլի գաղարը:



Գաղար.

Հեթե գարնանը գաղարի արմատը տնկենք հողի մեջ և միքանի շաբաթից հետո, յերբ նա արդեն ցողուն կլինի արձակած, հանենք ու դիտենք, կտեսնենք, վոր նա բավկան բարակել եւ դրա պատճառն այն ե, վոր նրա մեջ գտնվող նյութերը, գործադրվում են ցողունի, տերեների

և ծաղիկների կազմության վրա: Յեվ այդ հասկանալի յե, Գաղարն յերկամյա բույս ե. առաջին տարին տալիս ե շատ կարծ ցողուն և աշխատում ե, ինչքան կարելի յե, նյութեր ամբարել արմատի մեջ, իսկ յերկորդ տարին ողտվելով այդ նյութերից՝ արձակում ե յերկար ցողուն

և ծաղիկներ: Ցողունն այդ ժամանակ յերբեմն հասնում է մի արշին բարձրության:

Ցողունն աւ տերեվլը: — Գաղարի ցողունը սնամեջ եւ պատաժ ամուր մազարմատներով, իսկ տերեւը բարդ փետրածե ե. փետրածե կտրտված են նաև նրա առանձին տերեկիկները: Տերեների զասափորությունը հելթաղիլ եւ

Ծաղիկը: — Գաղարի ծաղիկները շատ փոքր են, բայց նրանք խմբվելով միասին՝ ծաղկեփունջ են կազմում և այդպիսով նկատելի դառնում միջատներին, նույնիսկ հեռվից: Ծաղկեփունջը կազմվում է այսպիս. գլխավոր ծաղկակոթը մի կետից արձակում ե բազմաթիվ յերկրորդական ծաղկակոթեր. Դրանցից յուրաքանչյուրն իր հելթին դարձյալ մի կետից արձակում ե փոքրիկ ծաղկակոթեր, վորոնք վերջանում են արդեն ծաղիկներով: Յեթե առաջին ծաղկակոթերը ծաղիկներով վերջանային, ծաղկեփունջը նման կլիներ պարզ հովանոցի, բայց վորովհետև նրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած մի այդպիսի հովանոց ե կազմում, այդ պատճառով ել ամբողջ ծաղկեփունջը նմանում ե բարդ հովանոցի: Այդ ձեռվ ծաղկեփունջը, խոսք չկա, ավելի յէ նկատելի դառնում միջատներին: Գաղարի հովանոցավոր ծաղկեփունջը ներքեւում պատաժ ե միքանի խիստ կերպով կտրտված տերեկիկներով. Նման տերեկիկներ ունեն նաև յերկրորդական հովանոցները, Այդ տերեկիկները կազմում են ծաղկեփնջի ծածկույթը և կատարում նույն դերը, ինչ վոր բաժակը, այսինքն պաշտպանում են ծաղիկները դրսի զանազան վտանգներից:

Ծաղկեփնջի մեջ յուրաքանչյուր ծաղիկ բաղկացած ե հինգ հատ կանաչ և ատամիկների նմանող բաժակաթերթերից, հինգ սպիտակ պսակաթերթիկներից, հինգ առեջներից և մի վարսանդից: Ծաղկի այս մասերը նստած են սերմնաբանի վրա: Վերջինիս վրա գտնվում ե և ծաղկի մեղրոցը: Սրա միջից դուրս են գալիս վարսանդի յերկու սոնակներն իրենց սպիտերով: Գաղարի ծաղկի մեղրը բոլորովին բաց ե. դրա համար ել մատչելի յէ նույնիսկ կարծ կնճիթ ունեցող միջատներին, Յեվ իսկա-

պես, գազարի ծաղիկներն այցելում են կարճակնճիթ միջատներ, որինակ, ճանձեր, փոքրիկ բզեզներ և այլն:

Պտուղը յեվ սերմի տարածումը: — Յերբ ծաղիկներից սկսում են պտուղներ առաջանալ, յերկրորդական ծաղկակոթերը մոտենում են իրար, վորպեսզի չհասունացած սերմերը հեշտությամբ չպոկվեն: Իսկ յերբ սերմերը հասունանում են, ծաղկակոթերը, ընդհակառակը, հեռանում են իրարից:

Գազարի յուրաքանչյուր պտուղը բաղկացած է յերկու սերմից: Վերջիններս պատած են միքանի շարք փշերով, վորոնք վերջանում են կարթիկներով: Այս կարթիկներով նրանք կպչում են կենդանիներին և տարվում զանազան կողմեր, իսկ գետին ընկած ժամանակ ել կպչում են հողին:

Գազարը հովանոցածե ծաղկեփունջ ունենալու պատճառով կոչվում է հովանոցավոր բույս: Հովանոցավոր բույսերի ընտանիքին են պատկանում նաև մաղղանոսը, սամիթը, կարոսը կամ քերեվիզը, գինձը, ապա վայրի բույսերից՝ բոխը, թունավոր մոլախինդը կամ գիծվուկը և այլն:

Բ Ո Ղ Կ

Արմատը. — Բողկը բանջարանոցային բույս ե. ունի բավականին հաստ արմատ, վոր ցած գնալով՝ հետպհետե բարակում ե: Առաջին տարին բողկը տալիս է շատ կարծ ցողուն և աշխատում է նյութեր ամբարել արմատի մեջ, իսկ յերկրորդ տարին այդ նյութերը գործադրվում են ցողունի և ծաղիկների վրա:


Ցողունը յեվ ՏԵՐԵՎՆԵՐԸ: — Ցողունը պատած է փոքրիկ ամուր մաղիկներով, վորոնք պաշտպանում են նրան ծաղիկների փոշոտման գործին վոչ մի ոգուտ չտվող միջատներից: Տերեները դասավորված են հերթական կարգով: Ցողունի հիմքի մոտ յեղած տերեները մեծ են և ունեն մեծ բլթակներ, վերեկնները՝ փոքր, աննշան բլթակներ, իսկ ծայրին գտնվողները՝ զուրկ են համարյա բըլթակներից: Այդպիսի դասավորությունն ու ձեզ հնարավո-

ըություն են տալիս բոլոր տերեներին հավասար չափով լույս ստանալու: Տերեները նստած են ցողունի վրա փոքր ինչ թեր դիրքով, այս պատճառով ել տերեների վրա թափված անձրևի կաթիկները սահելով գնում են դեպի ցողունը և ապա այստեղից ել դեպի արմատը: Շնորհիվ իր տերեների այդ դիրքին անձրևի ժամանակ ինքն իրեն ջրում է:

Ծաղիկները: — Բող-

կի ծաղիկները փոքր են, բայց նկատի դառնալու համար ծաղկեփունջ են կազմում: Ծաղիկները ծաղկեփունջի մեջնստած են առանձին ծաղկակոթերի վրա, վորոնք գուրս են գալիս գլխավոր ծաղկակոթի զանազան կողմերից: Այդ ձեփ ծաղկեփունջը կոչվում է վողկույզ: Ծաղկեփունջի ծաղիկները բուրը միանգամից չեն բացվում, այլ աստիճանաբար՝ ներքեւից դեպի վեր, այսպես վոր գեռ ըլացված ծաղիկների կողքին տեսնում ենք ծաղկեփունջի մեջ նաև պտուղներ:

Բողկի ծաղիկը լրիվ ե. նա բաղկացած է բաժակից, պսակից, առեջներից և վար-



Բ ո ղ կ.

սանդից: Բաժակը կազմված է 4 տերենիկներից, պսակը՝ 4 պսակաթերթիկներից: Պսակի թերթիկները դասավորված են իւաչի ձեռվ. գրա համար ել բողկի ծաղիկը

կոչվում ե խաչծաղիկ։ Առեջները 6 հատ են, 4-ը յերկար, 2-ը՝ կարճ։ Առեջների մեջտեղում գանգում ե վարսանդը՝ բաղկացած յերեարավուն սերմարանից, կարճ սոնակից և գնդաձև սպիից։ Բողիկի ծաղիկը փոշոտվում ե միջատների, զլիսավորապես մեղուների միջոցով։

ՊՏՈՒՂՐ. — Փոշոտումից հետո ծաղիկը թառամում է, մնում ե միայն սերմարանը, վոր շուտով աճում, զարդանում ե և փոխարկվում պտղի։ Վերջնս զլանաձև փոճոկ է, վորի մեջտեղով, յերկարությամբ անցնում ե միջնապատ։ Յերբ հասունանում են սերմերը, փոճոկը ճեղքվում է, պատյանները հեռանում են միջնապատից, վորից հետո սերմերը պոկվում են և ցրվում զանազան կողմեր։

Խաչծաղիկների ընտանիքին են պատկանում բանջարանոցային բույսերից՝ կաղամբը, մանանեխը, շաղգամբը, խրենը, ծաղիկներից՝ շահալրակը և այլն։ Նրանց մեծ մասն յերկամյա յե։ Առաջին տարին տալիս են փոքր ցողուն և նյութեր են ամբարում կամ արմատի մեջ, ինչպես բողկը և կամ ցողունի մեջ, ինչպես կաղամբը։

ԽԱՇՈՂԻ ՎՈՐԹ

ԲՈՒՆԻ ՈՒ ԵՋՈՒՂԵՐ. — Վորթի բունն ու ճյուղերը շատ թույլ են։ Նրանք չեն կարողանում իրենց դիրքը պահպանել, դրա համար ել մարդիկ տնկում են նրանց մոտ հենարաններ։ Վորթն այդ հենարաններին կպչում է իր թելիկներով։ Այս թելիկները կամ, ինչպես ասում են, խիղբերը, յերկճյուղ են և շարունակ ուղղվում են դեպի այն կողմը, վորտեղ գտնվում ե հենարանը։ Ժամացույցի սլաքի պես թելիկները շրջաններ ծրելով՝ վորոնում են այդ հենարանը և գտնելուց հետո սկսում են փաթաթվել նրան։ Նույն ձեռվ թելիկները փաթաթվում են նաև այլ ծառերի ճյուղերին կամ բներին և ամրանում։ Փաթաթվելուց հետո թելիկի այն մասը, վոր գտնվում ե հենարանի և վորթի ճյուղի միջև, սկսում է վոլորվել։ Մրա հետեանքը լինում ե այն, վոր ճյուղը հետզհետե մոտենում ե հենարանին։ Վոլորված մասը զսպանակի ձեռվ կարող է յերկարել և կար-

ճանալ։ Այդ այննշանակությունն ունի, վոր քամու ժամանակ ձգվելով՝ թույլ չի տալիս, վոր ճյուղը պոկվի հենարանից։ Հետագայում թելիկը հետզհետե հաստանում, փայտանում է և ստանում ուղղակի յերկաթե թելի ամրություն։ Թելիկներից հենարանի չհանդիպողները չորանում, թափվում են։

ՑԵՐԵՎԸ. — Ցերեվը կոթավոր ե և միքանի խորը գնացող կտրվածքներովք բաժանվում ե 3—5 անհավասար ըլթակների։ Ցեզրերն ունեն մեծ ու փոքր ատամներ։ Մատաղ տերեի ատորին յերեսը ծածկված է մազմզուկներով։

ԾԱՂԻԿԸ. — Վորթի ծաղիկները փոքր են. նրանք կաղմում են ծաղկեվնչեր (նշանակությունը)։ Ծաղիկնչի մեջ զլիսավոր ծաղկակոթունն արձակում ե զանազան կողմերի վրա յերկրորդական ծաղկակոթեր, վորոնք իրենց հերթին նույնպես ճյուղավորվում են և ապա վերջանում ծաղիկներով։ Այդպիսի ծաղկեփունջը կոչվում է բարդ վորկույզ կամ նուրան։ Ծաղիկը բաղկացած է հինգ բաժակներից, հինգ պսակաթերթիկներից, հինգ առեջներից և մի վարսանդից։ Պսակաթերթիկները միացած են միմյանց հետ և մի տեսակ խփիկ են կազմում բաժակի վրա։ Խփածն պսակի տակ գտնվում են առեջներն ու վարսանդը, վորոնք այնտեղ պաշտպանվում են զանազան վտանգներից։ Յերբ ժամանակը գալիս է, խփիկը հիմքից կտրվելով՝ հետզհետե բարձրանում է և ապա ընկնում. գրանից հետո բացվում են առեջներն ու վարսանդը. Վորթի ծաղիկները արտաքուստ այնքան ել աչքի չեն ընկնում. միջատներին գրավում են նրանք իրենց անուշ բուրմունքով։ Վորթի ծաղիկը միջատներին հյուրասիրում է առատ մեղրով։

ՊՏՈՒՂՐ. — Վորթի պտուղը լինում է դեղին, կանաչ



կարմիր և կապտավուն գույների. Նա պատած է մոմանը-
ման նյութի մի բարակ շերտով, վորով պաշտպանվում է
խոնավությունից: Վորթի պտուղը կոչվում է խաղող:


Սերմի տարածումը:—Վորթի սերմերը տարածում են
կենդանիները. մարդիկ խաղողն ուտելու ժամանակ շատ
անգամ սերմերը ջարդում փշացնում են, սակայն, թըռ-
չունները, որինակ, ճնճղուկները, տարմահավերն ու կեռ-
նեխները կուլ են տալիս սերմերն առանց ջարդելու: Յեզ
վորովինետև այդ սերմերը պատած են քարի պես ամուր
մաշկով, այդ պատճառով չեն մարսվում նրանց՝ ստամոքս-
ներում և անվասս վիճակում դուրս են գալիս արտաթո-
րությունների հետ: Ընկնելով հարմարավոր տեղեր՝ նրանք
ծլում են և առաջ բերում նոր վորթեր: Խաղողի համեղ
նյութը հենց այդ թոշուններին գրավելու համար ե: Հա-
սած խաղողը ստանում ե այս կամ այն գույնը թոշուննե-
րին նկատելի դառնալու համար: Չհասած խաղողը կանաչ
ե լինում և թթու, վորպեսզի թոշունները նրանց այդ ժա-
մանակ նախ չնկատեն և ապա չախորժեն ուտել.

Խաղողի գործածությունը:—Խաղողը բավականին հա-
մեղ և սննդարար պառող ե: Նրանից պատրաստում են գի-
նի: Դրա համար խաղողը ճմում են և ստանում քաղցր
մի հյութ, վոր միքանի ժամից հետո սկսում ե թթվել
կամ խմորվել: Այդ խմորումն առաջ են բերում մաշկի
վրա գտնված մանրիկ սունկերը: Խմորումից հեղուկը
սկսում ե պղտորվել: Պղտորված հեղուկն այնուհետև հե-
տրդնետե պարզվում և վերջը գինու փոխարկվում: Կար-
միր գինի պատրաստելու ժամանակ սև կամ կապտավուն
գույնի խաղողի մուշկն ևս գցում են խմորվող հեղուկի
մեջ: Գինին քիչ չափով՝ ոգտակար ե ծիվանդների համար,
իսկ մեծ չափով, վորպես սպիրտ պարունակող հեղուկ,
վնասակար ե և քայլայում ե մարդու առողջությունը:
Ուժեղ ազդեցություն ունի գինին մանավանդ յերեխա-
ների վրա: Խաղողից պատրաստում են նաև չամիչ: Դրա
համար խաղողը չորացնում են արևի տակ:

Լ Ո Բ Ի

Ցողունը:—Լոբու միքանի տեսակներ ունեն կարճ
ու ամուր ցողուն և կարողանում են իրենց դիրքը պահ-
պանել, մյուսները, սակայն, կարիք ունեն հենարանների: Այս վերջին տեսակի լոբու ցողունը սկզբում բարձրանում
է ուղիղ վեր, ապա գագաթը ծովում ե և սկսում ժամա-
ցույցի ոլաքի պես պառույներ գործել: Այդ ժամանակ,
յեթե հանդիպում ե վորեւ ամուր իրի, կանգ ե առնում
և իր ծայրով սկսում վաթաթվել նրան: Այնուհետև կրկին
վեր և բարձրանում և
գալաջալ նույն ձեռվ փա-
թաթվում հենարանին: Այդ-
պիսի լոբու ցողունը պա-
տած ե կարճ ու ամուր
մաշկերով, վորոնցով հաջող
կերպով կպչում ե նա հե-
նարանին: Պտույաներ գոր-
ծող գագաթի տերևները
շատ փոքր են, վորպեսզի
շարժումների ժամանակ չը
խանգարեն ցողունին:

Տերեվը:—Լոբու արձա-
կած առաջին տերևները հա-
նարակ են, մյուսները
բարդ, բաղկացած յերեք
հատ ձվածկ տերևիկներից:
Յերեկն այդ տերևները հո-
րիզոնական դիրք են ունե-
նում, գիշերը՝ թեք: Գլխա-
վոր տերևակոթն այդ ժա-
մանակ ծովում ե վեր, իսկ տերևիկներն, ընդհակառակը,
կախվում են ցած: Գիշերը, այսպես ասած, տերեք
քնում ե: Պատճառը: Հայտնի յե, վոր բույսն իր տերենե-




Լ Ո Բ Ի.

ա) ճյուղը տերևներով և ծաղկիկներով.

բ) Սերմը:

կախվում են ցած: Գիշերը, այսպես ասած, տերեք
քնում ե: Պատճառը: Հայտնի յե, վոր բույսն իր տերենե-

բով շարունակ ջուր ե գոլորշիացնում և գոլորշիացած ջրի փոխարեն արմատները հողից կրկին նոր ջուր են ծծում, վորի մեջլուծված դրությամբ գտնվում են սնընդարար աղեր: Կնշանակե, յեթե գոլորշիացումը կանգ առներ, բույսն այլև հողից նոր սնունդ չեր վերցնի: Գիշերը տերեները ծածկվում են ցողով: Աս փակում ե անցքերը և խանդարում գոլորշիացման գործողությունը: Իսկ յերբ տերեր կախվում ե, ցողի կաթիլներն այլև չեն մնում տերեի վրա: Նրանք սահում թափվում են ցած, վորի պատճառով անցքերը բացվում են և գոլորշիացումը շարունակվում է: Զափազանց տաք որերին տերեները կախվում են ել ավելի ուժեղ կերպով: Յեվ այդ հասկանալի յե: Հորիզոնական ուղղություն ունեցող տերեներն արեից առատ ջերմություն ստանալով՝ ավելի շատ են գոլորշիացնում, քան արմատը կարող ե հողից ծծել, և հետեանքը լինում ե այն, վոր բույսը թառամում է: Սակայն, յերբ տերեները կախվում են, այդ տեղի չի ու-



Լոբու տերեր գիշերը:

Լոբու տերեր ցերեկը:

նենում, վորովհետեւ արեի ճառագայթները տերերի վրա ընկնում են թեք ուղղությամբ և դրա համար ել քիչ են առաջնում նրան:

Ծաղիկը: — Լոբու ծաղիկն անկանոն է: Նա նման է թռչող թիթեռնիկի, դրա համար ել կոչվում է թիթեռնածաղիկ: Բաժակը, վոր իսկապես բաժակի նմանություն ունի, բաղկացած ե հինգ հատ բաժակից, վո-

րոնք ներքեում միացած են միմյանց հետ: Պսակը, վոր անկանոն ե, բաղկացած ե հինգ թերթիկներից: Վերեկի թերթիկն ամենամեծն ե, սա մինչև ծաղկի բացվելը ծածկում է ծաղկիկը և թույլ չի տալիս, վոր անձրեածուրը մտնի ծաղկի ներսը: Այդ թերթիկը կոչվում է առագաստ: Սրա ներքեում գտնվում են յերկու հատ ավելի փոքր և միմյանց բոլորովին նման թերթիկներ. սրանք ել կոչվում են թեվեր կամ թիալիներ: Վերջիններիս տակ գտնվում են մյուս յերկու թերթիկները, վորոնք ներքեվում միացած են միմյանց հետ և կազմում են մի նավակ: Այդ մասն ել կոչվում ե նավակ: Սրա մեջ գըտնը վում են 10 հատ առեջներ, վորոնցից 9 հատն իրանց թելիկներով միանալով միմյանց հետ, կազմում են մի խողովակ, վորի յերկայնությամբ վերկից անցնում ե մի ճեղքվածք: Այդ ճեղքվածքն ել ծածկվում ե տասներորդ առեջնով: Վարսանդն անցնում ե առեջներից կազմված այդ խողովակի սիջով: Նա բաղկացած է յերկարամը վագանաններից և կոր սոնակից, վոր վերջանում ե սպիռվ: Սոնակի վերին մասի ներքեկի յերեսը ծածկված ե մաղիկներով և կոչվում ե խօզանակ: Վարսանդի հիմքի մոտ գտնվում են մեղրաբեր գեղձեր: Լուսու ծաղիկը փոշոտվում է միջատների, դլխափորապես մեղուների և իշամեղուների միջոցով: Նրա կազմությունն այնպես ե, վոր միջատների այցելության ժամանակ պետք ե անպատճառ փոշոտվի: Նրա փոշանոթներն ավելի վաղ են հասունանում, քան սպիռն: Մինչև ծաղկի կատարելապես բացվելը փոշանոթները փոշին թափում են իրենց տակ գտնվող սպիռի և խոզանակի վրա: Սպիռն այդ փոշուց չի ոգտվում, վորովհետեւ դեռևս հասունացած չե: Յեվ ահա՝ յերբ մեղուները կամ իշամեղուները նստում են ծաղկի թերթիկի վրա, սրանց ծանրության տակ ճնշվում են թիալիկները և ապա նավակը: Վերջինս այդ ճնշման տակ փոքր ինչ ցած է ցած և գույնում միջամատի փորին: Այնուհետեւ միջամատի փորը բավում ե խոզանակի վրա:

նակին, վոր ծածկված եւ ծաղկափոշով։ Յեթե միջատը գալիս եւ ուրիշ ծաղկից և իր փորի վրա ծաղկափոշի ունի, ապա քսվելով սպիթն՝ փոշոտում եւ նրան։ Այդտեղից գընալով մի զուրիշ ծաղկի, միջատն արդեն այդ ծաղկից եւ ծաղկափոշի տանում նրան։ Այդպիսով կատարվում է խաչաձև փոշոտում։

Լոբու ծաղիկը փոշոտում են միայն մեծ միջատները, վորովհետև միայն դրանք կարող են իրենց ծանրությամբ ճնշում գործ դնել նավակի վրա։ Փոքրերը փոշոտում առաջ չեն բերում։ Նրանք չեն ոգտվում և ծաղկի մեղրայութից, վորովհետև սա գտնվում է առեջներից կաղմբված խողովակի ներքեր մասում։ Մեղրահյութին հասնելու համար նրանք պետք եւ ցածրացնեն նավակը, իսկ այդ անել նրանք չեն կարող։ Ասել ե, լոբու ծաղիկն իզուր տեղը իր մեղրահյութը չի շուայլում։ Մեղրահյութ տալիս ե նա միայն այն միջատներին, վորոնք նրան կարող են փոշուել։

Պտուղը։—Ծաղկից առաջանում եւ պտուղը։ սա մի յերկար պատիճ ե, վորի մեջ շարված են սերմերը։ Հասունանալուց հետո պատիճը ճեղքվում է և սերմերը միջից թափվելով։ տարածվում են գետնի վրա։ Մարդկա գործ են ածում լոբու թե խակ պտուղը և թե հասած սերմերը։

Թիթեռնածաղիկների ընտանիքին են պատկանում նաև վոսպը, սիսեռը, բակլան, առվույտը, ակացիան և այլն։

Տ Խ Լ Ի

Տիլին գարնանը։—Վաղ գարնանը տիլու վրա նկատվում են բացի պտուկներից նաև յերկար կատվիկներ։ Յուրա յեղանակներին դրանք ամուր են լինում և ճյուղի մի կողմը ծռված, իսկ տաք որերին՝ յերկարում են, առաձգական դառնում և կախվում ցած։

Կատվիկը բաղկացած է կոթունից և նրա վրա նըստած բազմաթիվ թեփուկներից։ Յուրաքանչյուր թեփուկի տակ գտնվում են յերկու ուրիշ թեփուկներ, վորոնց տակն ել գտնվում են 8 հատ առեջներ։ Վերջիններս


արական գործարաններն են, ուրեմն, կատվիկներն արական ծաղիկներ են։ Յուրաքանչյուր կատվիկ բաղկացած է այնքան ծաղիկներից, վորքան նրա մեջ թեփուկներ կան։ Կնշանակե, կատվիկը ծաղկեփունջ է։

Բացի կատվիկներից, տիլու վրա նկատվում են նաև պտուկների նման ծաղիկներ, Սրանք ել ունեն միայն վարսանդներ, վորոնք վերջանում են կարմիր թելերի նմանող սպիթներով։ Վարսանդը ծաղկի իգական գործարանն ե. Կնշանակե, պըտուկի նմանող ծաղիկն ել բույսի իգական ծաղիկն է։ Արական և իգական գործարանն երը տիլու վրա գտնվում են առանձին-առանձին ծաղիկներիմեջ, բայց վորովհետև այդ ծաղիկները գտնվում են միենույն թփի վրա, այդ պատճառով ել տիլին կոչվում ե միատուն բույս։

Փուտումը։—Ճըլու ծաղիկները փոշուավում են քամու միջոցով։ Յեթե

մենք արեստ մի որ, 1) իգական ծաղիկը, 2) կտավիկը, 3) ձյուղը տեյլը որի մեջ մեղմիկ քամու միջոցով։

Միկ քամի յե զգացվում, դիտենք տիլու թուփը, կնկատենք, վոր նրա առածգական ճյուղերն, իրենց վրա գտնված կատվիկների հետ միասին, նույնիսկ թեթե քամիների ժամանակ շատ հեշտությամբ շարժվում են։ Շարժումների ժամանակ պարզ կերպով կտեսնենք, վոր կատվիկներից բարձրանում են զեղին փոշու ամպեր,



Տ Խ Լ Ի.

վորոնք քամուց տարվում են զանազան կողմեր և վերջը թափում ցած։ Այդ ծաղկափոշին ե, վոր այսուհետե հեշտությամբ ընկնում ե նաև իգական ծաղիկների սպիռների վրա և նրանց փոշում։

Տիլու ծաղիկները վոչ վառ գույներ ունեն, վոչ բուրմունք և վոչ ել մեղք։ Յեկ այդ շատ հասկանալի յե չե վոր այդ բոլորը միջատների համար ե, իսկ տիլին միջատների կարիք չի զգում։ Նա փոշում ե քամու միջոցով։ Սակայն, քամու միջոցով փոշում վելու համար նա ունի այլ հարմարություններ։ Նրա կատվիկները գտնվում են մատաղ ճյուղերի ծայրերին, վորպեսզի քամուց հեշտությամբ ճոճվեն, ապա այդ կատվիկներն առաձգական են դառնում այն ժամանակ, յերբ պետք ե իգական ծաղիկը փոշում։ Առաձգական դարձած ժամանակ նրանք կախվում են ուղիղ դեպի ցած, և այդ նրա համար, վոր ծաղկափոշին թափվի վոչ թե գետին, այլ ներքեռում գտնվող թեփուկների վրա և այդ տեղից այնուհետեւ քամու միջոցով տարվի զանազան կողմեր։ Տիլին ծաղկում ե այն ժամանակ, յերբ տերեները դեռ բացված չեն, ուրեմն, ծաղկափոշին կարող ե անարգել կերպով տարվել այս ու այն կողմը, ապա ծաղկափոշին չոր ե, թեթև և փոքր, վորպեսզի հեշտությամբ շարժվի ողի մեջ։ Վերջապես կատվիկներն ունեն շատ առատ ծաղկափոշի։ Արա մեծ մասը յեթե աննպատակ թափվում ե այս ու այն կողմը, մի մասը միշտ ընկնում ե սպիռների վրա։ Սպիռներն ել, վորպեսզի հեշտությամբ ընդունեն ծաղկափոշին իրենց վրա, վոչ միայն մեծ են, այլ և ծածկված են մազմզուկներով։ Չոր ու փոքրիկ ծաղկափոշին ընկներով սպիռների վրա՝ շնորհիվ մազմզուկների՝ մնում ե այստեղ, նույնիսկ քամիների ժամանակ։

Տերեվը։—Տիլին ծաղկելուց հետո միքանի շաբաթ անց, սկսում ե տերենել։ Նրա տերելը մոտավորապես սրտաձև է և ունի ատամնավոր յեղրեր։ Յուրաքանչյուր ատամ իր հերթին նույնպես ատամնավոր կտրավածքներ ունի, բայց ավելի մանրիկ։ Տիլին բանում ե անտառներում, մեծ ծառերի արանքում, դրա համար ել ունի մեծ

ու քնքույշ տերեներ, վորպեսզի առատ լույս ստանա և կարողանա մեծ չափով ջուր գոլորշացնել։

Պտուղը։—Տիլու պտուղն ունի հաստ փայտային կեղեւ, վոր պաշտպանում ե միջուկը զանազան վտանգներից։ Պտուղը գտնվում ե մի բաժակի մեջ, Այս բաժակն առաջանում ե սերմնարանը շրջապատող թեփուկներից Բաժակակ ունենալու պատճառով տիլին կոչվում ե բաժակակեր բույս։

Սերմի տարածումը։—Տիլու սերմը տարածվում ե կենդանիների, գլխավորապես սկյուռների ու ճայերի միջոցով։ Սրանք պոկելով պտուղը կամ զանելով թփերի տակը, տեղն ու տեղը չեն ուտում, այլ տանում են մի անվտանգ տեղ հանգիստ կերպով ուտելու համար։ Այդ դեպքում հաճախ անզգությունից պտուղները թափում են նրանք այս ու այն կողմը։ Բացի դրանից, սկյուռներն իրենց համար ձմեռվա պաշար են ամբարում զանազան տեղերում, սակայն պատահում ե յերբեմն, վոր նրանք մոռանում են իրենց պահած պտուղների տեղը և այդպիսով սերմը տարածվում ե։ Սերմի տարածման գրքում մեծ դեր ե կատարում մարդու։ Զհասած պտուղների բաժակները շատ թթու յեն լինում, վորպեսզի կենդանիները նրանց ձեռք չտան։

Պտուկները։—Պտուղները հասնելուց հետո տերեները գեղնում կամ կարմրում են և ապա թափվում։ Հուլիսին տերեների անութներում սկսում են առաջանալ պտուկներ և արական ու իգական ծաղիկներ։ Իգական ծաղիկները պաշտպանվելու համար ծածկված են դրսից թեփուկներով, իսկ արական ծաղիկները կամ կատվիկների թեփուկները դարձյալ նույն նպատակով նստած են շատ խիտ կերպով իրար վրա և ծածկված մազմզուկներով։

Բաժակարեների ընտանիքին պատկանում են նաև կաղնին, հաճարենին, կեճին, շագանակենին, ընկուղենին և այլն։

Խ Տ Ո Ւ Տ Ի Կ


Խտուտիկը շատ տարածված բույս է, բնոււմ ե դաշտերում, մարգագետիններում, նաև ճանապարհի յեզերքին և պատերի ճեղքվածքներում, յեթե որանք լցված են լինում հողով։

Արմատը՝ Խտուտիկը բազմամյա բույս է. ունի մեծ, հաստ և խորը գնացող արմատ։ Այդ արմատով նա խոնավություն ե ծծում հողի խորը շերտերից, վրա համար ել աճում ե նաև այնպիսի չոր տեղերում, ուր ուրիշ բույսեր աճել չեն կարող։

Ցողօնի յեկ ենեվները՝ Ցողունը շատ կարճ ե և թաղված հողի մեջ. այդ ե պատճառը, վոր տերեները կարծես թե դուրս են դալիս անմիջապես արմատից։ Զմեռն այդ ցողունը արմատի հետ միասին մնում ե հողում և գարնանը արձակում տերեներ ու ծաղիկներ։ Այդպիսի ցողուն ունենալու պատճառով կենդանիները, տերեներն ու ծաղիկները ուտելու ժամանակ ցողունին չեն ֆնասում։ Անվաս մալով ցողունը՝ իրենից կրկին նոր տերեներ ու ծաղիկներ ե արձակում։ Կնշանակե, կարճ և հողում թաղված ցողունը նրան հնարավորություն ե տալիս իր գոյությունը պահպանելու։ Տերեները մեծ են և շրջանաձև փոված գետնի վրա։ Դրանք այդ ձևով ծածկում են հողը և պաշտպանում նրան չորանալուց։ Բացի դրանից, տերեների յեզրերը փոքր ինչ վեր են բարձրացած, դրա համար ել անձրևի ջուրը սահելով տերեների վրայով գնում ե ուղղակի գեղի արմատը։ Տերեների այդպիսի դասավորության ու ձեր շնորհիվ խտուտիկը ծածկում ե մոտը բսած քնքույշ բույսերին և զրկելով լույսից՝ խեղդում ե նրանց ու ինքը միայնակ ոդավում հողի սննդից։ Դաշտերում և մարգագետիններում, սակայն, ուր խիտ բուսականություն ե լինում, խտուտիկն այդպիս վարվել չի կարող այնտեղ նա, ընդհակառակը, տերեները ուղղում ե վեր, գեղի լույսը։

Ծաղիկները՝ Խտուտիկի ծաղիկները նստած են յերկար և սնամեջ կոթունների վրա։ Առաջին հայացքից մեզ թվում ե, թե յուրաքանչյուր կոթունի վրա նստած ե մի հատիկ ծաղիկ։ Սակայն, ուշադիր կերպով դիտելով

Լաւ չըբացւած զամբիւղ



Խ Տ Ո Ւ Տ Ի Կ.

Նկատում ենք, վոր նա մի հատիկ ծաղիկ չե, այլ մի ամբողջ ծաղկեփունջ և նման լինելով զամբիւղի, կոչվում

և զամբյուղ։ Դրսից զամբյուղը պատած ե յերկու շարք կանաչ տերևներով. այս տերևները կազմում են զամբյուղի ծածկույթը։ Մինչև զամբյուղի բացվելը, ծածկույթը ծածկում ե նրան և պաշտպանում չբացված ծաղիկները ցըտից և այլ վտանգներից։ Ցերեկը զամբյուղը բացվում ե լայն կերպով, իսկ կեսորից հետո սկսում ե փակել. գիշերը, նույնպես և վատ յեղանակներին, ծածկույթը խիտ կերպով ծածկում ե զամբյուղը։ Կնշանակե, ծածկույթը պաշտպանում ե նրան և բացվելուց հետո՝ ցողից ու անձրևից։

Յեթե պոկենք զամբյուղից մի հատիկ ծաղիկ և դիտենք, կնկատենք, վոր նրա ներքեռում գտնվում ե փոքրիկ սպիտակ սերմնարանը և սրա վրա սոնակը։ Վերջինիս ներքեռում, համարյա սերմնարանի վրա շարված են շրջաձեմի շարք մազիկներ. սրանք կազմում են ծաղիկի բաժակը։ Բաժակից վերև գտնվում ե պսակ՝ բաղկացած միմյանց հետ միացած հինգ հատ թերթիկներից։ Պսակը ներքեռում կազմում ե մի խողովակ, վոր շրջապատում ե սոնակը, իսկ վերեռում լայնանալով՝ ծովում ե մի կողմը և լեզվակի ձեռվ յերկարում։ Ծաղիկի մեջ կան հինգ հատ տուեչներ. սրանք ունեն յերկար փոշանոթներ, վորոնք միացած են միմյանց հետ և կազմում են մի խողովակ, վորի միջով անցնում ե սոնակը։ Սոնակը վերջանում ե յերկճղի սպիտակ. Զամբյուղի ծաղիկները բացվում են վոչ. թե միանգամմից, այլ աստիճանաբար՝ յեղըերից սկսած։ Փոշոտումը կատարվում ե միջատների միջոցով. ծաղիկները դրանց հյուրասիրում են առատ մեղրահյութով, վոր գտնվում ե պսակի խողովակի մեջ։

ՊՏՈՒՂՅ.՝ Փոշոտումից հետո ծաղիկի պսակը, առեջներն ու սոնակը թառամում, թափվում են. Թում են միայն սերմնարանը և մազիկներից բաղկացած բաժակը։ Այսուհետեւ զամբյուղը փակվում ե և պտուղներն այնտեղ սկսում են զարգանալ. Սոնակի այն մասը, վոր գտնվում ե սերմնարանի և բաժակի միջև, աճում յերկարում է, աճում են նաև բաժակի մազիկները։ Բաժակից վերջը առաջանում ե մի փամփլիկ փետրիկ։ Յերբ պտուղները

հասունանում են, ծածկույթի տերեփկները ծովում են դեպի ցած, ծաղկակալը ուսուցիկ ձև ե ընդունում, և ստացվում ե ամենքին հայտնի խտուտիկի փետրագնդակը։ Մերմիկները, վորոնք հարթ ծաղկակալի վրա հազիվ են պահվում, ամենաթեթև քամուց անգամ պոկվում են և շնորհիվ իրենց փետրիկի՝ տարգում զանազան կողմեր։


Խտուտիկը՝ զամբյուղի նման ծաղկեփունչ ունենալու պատճառով պատկանում ե զամբյուղալորեների ընտանիքին։ Այդ ընտանիքին են պատկանում նաև արևածաղիկը, կանկարը, տերեփուկը (վազլեկ), յերիցուկը (րոմաշկա) կռատուկը, տատասկափուշը, գերզինը և այլն։

Կ Ա Ր Տ Ո Ֆ Ի Լ

ՊԱՂԱՐԵՆԵՐ.՝ Կարտոֆիլն ամենատարածված բույսերից ե։ Շատ յերկըներում նա հացաբույսերի տեղ ե ծառալում։ Նրա այն մասը, վոր գործ ենք ածում իրեկ կերակուր, աճում ե գետնի տակ և կոչվում ե պալար։ Սա թվում ե թե բանում ե կարտոֆիլի արմատների վրա. բայց իրոք այդպես չե։ Յեթե ամառվա սկզբին հանենք զետնից կարտոֆիլի թուփը, կտեսնենք, վոր նրա ցողունի ստորերկրյա մասի վրա կան բարակ անգույն և յերկար ընձյուղներ։ Այս ընձյուղներն իրենց վրա այս ու այն տեղ ունեն փոքրիկ թեփուկներ, այսինքն ձևափոխված տերևներ։ Հայտնի յե, վոր արմատի վրա յերբեք տերևներ չեն դուրս գալիս. Յեթե ընձյուղների վրա կան թեփուկներն առեներ, այդ նշան ե արդեն, վոր նրանք ստորերկրյա ձևափոխված ցողուններ են։ Ամառվա վերջերին գետնից հանած կարտոֆիլի թփի վրա կտեսնենք, վոր ընձյուղների ծայրերը հաստացել, մեծացել են և փոխարկվել պալարների. Ուրեմն, պալարները դուրս են գալիս վոչ թե արմատների, այլ ստորերկրյա ցողունների վրա և վոչ այլ ինչ են, բայց յեթե այդ ցողունների հաստացած ծայրերը։ Ինչքան մեծ ստորերկրյա ցողունը, այնքան շատ են լինում նրա վրա և պալարները։ Այդ և պատճառը, վոր մարդիկ կարտոֆիլի ցողունի ներքեկի մասը հողով ծածկում են։

Ի՞նչով ե լցված կարտոֆիլի պալարը: Յեթե կարենք պալարը և ածենք նրա վրա մի կաթիլ յոդ, կնկատենք, վոր կաթիլի ընկած տեղը իսկույն մուզ կապույտ գույն ե ստանում: Այդ նշան ե արդեն, վոր պալարի մեջ կա ուլա: Յեվ իրոք, պալարն ամբողջովին լցված ե ոսլայով:

Պալարի վրա տեղ-տեղ կան փոսեր, ուր գտնվում են բողբոջիկներ՝ ծածկված թեփուկներով. դրանք կոչվում



Կարտոֆիլ.

են աչեր, Գարնանը մառանում յեղած պալարների այդ աչքերից դուրս են գալիս բարակ ցողուններ, վորոնք լուց-սի պակասության պատճառով դեղնավուն գույն են ունենում: Հողում դրված պալարներից ևս նույն տեղերից դուրս են գալիս ցողուններ: Յյուրաքանչյուր աչքից դուրս

ե գալիս մի ցողուն, դրա համար ել պալարը կարելի յե բաժանել այնքան մասերի, վորքան նրա վրա աչքեր կան և յուրաքանչյուր մասից դուրս կդա մի առանձին թուփ: Սկզբում ցողունն իր սնունդը վերցնում ե պալարից: Այդ ե պատճառը, վոր վերջինս ցողունի աճման հետ զուգընթաց փափկում, կուչկչատում ե և վերջը, յերբ զրկվում ե իր բոլոր մննդարար նյութերից՝ փտում ե: Նրա տեղ, սակայն, նոր ցողունի վրա առաջանում են նոր պալարներ: Սրանք ձմեռը մնալով հողի մեջ՝ գարնանը կարտոֆիլի նոր թփեր են առաջ բերում: Ուրեմն, պալարների միջոցով կարտոֆիլը բազմանում ե:

Ցօդունը յիշ Տերեվիները: — Կարտոֆիլի ցողունը հյութալի յե, անկյունավոր և ծածկված մանրիկ մաղիկներով: Տերեները մեծ են և անզույդ փետրածեն: Սրանց բոլոր տերեկիկները նույն մեծությունը չունեն. խոշոր տերեկիկների արանքում տեղավորված են համեմատաբար փոքրերը: Թե ցողունը և թե տերեներն իրենցից անդուրեկան հոտ են արձակում և թունավոր են: Այդ ե պատճառը, վոր կենդանիները նրանց չեն ուտում: Թունավոր նյութ են պարունակում նաև արևի ճառագայթների տակ կա-նաչած պալարները:

Ծաղիկները: — Ծաղիկները նստած են կարճ կոթունների վրա՝ ցողունի գագաթին: Ծաղկի բաժակը բաղկացած է 5 տերեներից, վորոնք միացած են միմյանց հետ և միայն վերևում ունեն հինգ ատամիկներ: Պսակն ևս բաղկացած է միմյանց հետ միացած հինգ թերթիկներից. որանք լինում են կամ սպիտակ և կամ բաց մանիշակագույն: Առեջները հինգ հատ են, ունեն կարճ թելիկներ և յերկարավուն փոշանոթներ: Փոշանոթները դասավորված են այնպես, վոր կաղմում են մի խողովակ, վորի միջով դուրս ե գալիս վարսանդի սոնակը:

Կարտոֆիլի ծաղիկները մեղք չունեն և միջամտները նրանց շատ քիչ են այցելում: Այդ ե պատճառը, վոր նըրանք մեծ մասամբ իրենք իրենց են փոշոտում: Փոշոտման ժամանակ ծաղիկը ծովում ե դեպի ցած, դրա համար ել ծաղկափոշին թափված ժամանակ ընկնում ե ուղ-

ղակի սպիթի վրա և փոշոտում նրան։ Ինքնափոշոտումից առաջանում են թույլ սերմեր, բայց այդ կարտոֆիլի համար նշանակություն չունի, վորովհետեւնա բազմանում է մեծ մասամբ պալարների միջոցով։ Կարտոֆիլի միքանի տեսակներ նույնիսկ պտուղներ ու սերմեր չեն տալիս. դրանց ծաղիկները չեն փոշոտվում և բացվելուց հետո քիչ անցած՝ թառամում, թափում են։

ՊՏՈՒՂԾ.—Պտուղը փոքր եւ կանաչ գույնի. նա նույնպես ցողունի և տերեների նման թունափոր ե։ Մարդու համար այդ պտուղը վոչ մի նշանակություն չունի։

ՀԱՅՐԵՆԻՔԸ.—Կարտոֆիլի հայրենիքը հարավային Ամերիկայի տաք յերկրներն են։ Յերկար ժամանակ ժողովուրդը դործ չել ածում այդ, բայց հետո ստիպված յեղավ սովի պատճառով գործ ածել իբրև կերակուր։ Այժմ կարտոֆիլը տարածված է աշխարհի բոլոր մասերում։ Կարտոֆիլը պատկանում է մորմազգիների ընտանիքին։ Այդ ընտանիքին են պատկանում նաև մորմը, պոմիդորը, ծխախոտը և այլն։

Ս Ո Խ

ԿՈՆԴԵԳԸ.—Սոխի այն մասը, վոր գործ ենք ածում կերակրի մեջ, ածում և գետնի տակ և կոչվում է կոնդեգ։ Յեթե յերկարությամբ կտրենք կոճեղը, ներքենում կնկատենք մի մսոտ մաս, վոր հատակ և կոչվում։ Դա սոխի կարճացած և դրա համար տափակած ցողունն է։ Սրա վրա նստում են մի շարք տերեներ, դրսիները՝ չոր, կոտրվող և կարմրավուն գույնի, ներսիները՝ փափուկ, մսոտ, հյութալից և սպիտակավուն։ Ասել ե, կոճեղը ճիշտ նույն կազմությունն ունի, ինչ վոր բողբոջը. այդ պատճառով ել կարող է համարվել ստորերկրյա բողբոջ։ Իսկ վոր հատակի ներքեկի մսոից ել դուրս են գալիս մի շարք թելանման արմատիկներ, ապացույց ե, վոր հատակը ստորերկրյա ցողունն է։

ԿՈՆԴԵԳԻ ՆԵԱՆԱԿՈՒՐՅՈՒՆԸ.—Մառանում կոճեղը հաճախ ծլում է և արձակում խողովակած տերեներ. յեթե

տեղը լույս ե, այդ տերեները կանաչ են լինում, իսկ յեթե մութ գեղնավուն. Հողի մեջ գրված կոճեղն ևս ծլում է և տերեներ արձակում։ Տերեների համար անհրաժեշտ մնունդն այդ ժամանակ վերցվում է կոճեղի թեփուկներից։ Այդ ե պատճառը, վոր այդ թեփուկները հետզհետեւ բարակում ու կուչկչատում են և վերջն ել փչանում։ Դրա փոխարեն ամենաներսի թեփուկների անկյուններում գտնվող պտուկներից կամ բողբոջներից մեկը կամ միքանիսը սկսում են աճել, մեծանալ և նոր կոճեղներ առաջ բերել։ Այս նոր կոճեղներն իրենց մեջ պաշար են ամբարում հետեւյալ տարվա բույսի համար։ Դրսի չոր տերեները պաշտպանում են կոճեղը չորանալուց, իսկ հողի տակ՝ զանազան վորդերից։

ՏԵՐԵՎԸ. Սոխի տերեւը խողովակածն է. Նրա ջղերը գնում են իրար կողքով, համարյա զուգահեռաբար, ասել ե, նա զուգահեռածիղ տերեւ է։ Այդպիսի ջղեր ունեն միաշաքիլները։ Ռւբեմն, սոխը միաշաքիլ է. և իսկապես, նրա սերմը բաղկացած է մի շաքիլից և վոչ լոբու նման՝ յերկու շաքիլից։


ՄԱԼԻԿԵՆԵՐԸ.—Սոխի ծաղիկները փոքր են, ունեն կանաչավուն սպիտակ գույն և խողովակածն ծաղկակոթունի ծայրին կազմում են գնդածն հովանոցավոր ծաղկեփունջ։

Սոխի ընտանիքին են պատկանում նաև սխտորը, ձներեկը և գեղեցիկ ծաղիկներ ունեցող հակինթը, հովտաշշանը, շուշանը և այլն։ Այս ընտանիքին պատկանողները շուշանի անունով կոչվում են ՇՈՒՇԱՆԱԶԳԻՆԵՐ։

Ց Ո Ր Ե Ն

ՑՈՐԵՆԸ մեզ մոտ ամենատարածված հացաբույսն է. Նրա հատիկներից հաց ենք պատրաստում, իսկ ցողունից՝ հարդ, վորով կերակրում են ձմեռը ընտանի կենդանիներին։

ԱՐՄԱՏԸ.—Ցորենի հատիկը ծլելիս արձակում է, ինչպես տեսանք, վոչ թե զլսավոր արմատ, այլ մի շարք համարյանույն յերկարությունն ունեցող թելանման ար-



Ց Ա Ր Ե 6.

մատներ: Այդպիսի արմատները կոչվում են փնջաձեվ: Այդ թելանման արմատների ընդհանուր յերկարությունը կես վերստից ավելի յէ, իսկ արմատների վրա գտնված մազարմատների ընդհանուր յերկարությունը համառմատ ե մոտ 20 վերստի: Այս բոլոր արմատները տարածվում են մի փոքրիկ տեղում, դրա համար ել հողի մասնիկները պատում են այնպիսի խիտ ցանցով, վոր վոչ մի կաթիլ ջուր իզուր չի անցնում:

Յոդունն ու տերեվները:—Ցորենի ցողունը կոչվում է ծղոտ. սա յերբեմն յերկու արշինից ավելի բարձրություն ե ունենում, բայց լինում է շատ բարակ: Չնայած իր այս բարակության, նա բավական ամուր ե և վոչ միայն տանում ե տերեների ու հասկի ծանրությունը, այլ և գիմաղրում ե ուժեղ քամիներին: Դրա պատճառն այն ե, վոր նա սնամեջ ե, այսինքն ունի խողովակի ձև և միջնապատերով բաժանված ե միքանի մասերի: Ցողունի ներքեւի մասում այդ միջնապատերն իրար ավելի մոտ են, քան վերեռում: Յեվ այդ շատ հասկանալի յեւ ներքեւի մասի վրա ավելի ծանրություն կա, հետեւապես այդ մասն ավելի ամուր պետք ե լինի, քան վերևինը: Միջնապատերի գտնված տեղերում ցողունը զգալի կերպով հաստանում է. այդ մասերը կոչվում են հանգույցներ:

Տերելը բաղկացած է յերկու մասից՝ թիթեղից և վերնամաշկից, վոր ներքեռում պատռում ե ցողունը: Այս յերեկուսի միացման տեղում գտնվում է վեր ցցված մի հավելված, վոր կոչվում է լեզվակ: Վերջինս ամուր կերպով հենված ե ցողունին, դրա համար ել թույլ չի տալիս, վոր տերեկի թիթեղով հոսող ջուրը մտնի վերնամաշկից կազմված խողովակի մեջ: Յեթե կտրենք ցորենի մատաղ ցողունը, կտեսնենք, վոր տերեկի խողովակածկ վերնամաշկի մեջ գտնվում են ցողունը, մատաղ տերեները և հասկը, վորոնք այնտեղ հրաշալի կերպով պաշտպանվում են զանազան վտանգներից: Տերելի թիթեղը բարակ ժամանակների ձև ունի. քամու առաջ նա հեշտությամբ ծովում ե ամեն կօղմի վրա և այդպիսով պաշտպանում բույսն ուժեղ քամիներէց:

Ծաղիկները:—Յորենի ծաղիկները ցողունի գագաթին կազմում են ծաղկեփունջ։ Գլխավոր ծաղկակոթունի վրա նստում են մի շարք ծաղիկների խմբեր, առանց կոթունների. այդպիսի ծաղկեփունջը կոչվում է հասլ։ Մակայն, նրա ծաղիկների յուրաքանչյուր խումբն իր հերթին նույնպես մի մանրահասկ է, վորովհետև այդտեղ ևս ծաղկակոթի վրա ծաղիկները նստած են առանց կոթերի։ Կնշանակե, ցորենի ծաղկեփունջը բարդ հասկ է։ Մանրահասկերից յուրաքանչյուրը շրջապատված է յերկու թեփուկով, վորոնց տակ նստած են յերեք, յերբեմն ել ավելի ծաղիկներ։ Սրանք զուրկ են բաժակից և պսակից, բայց յուրաքանչյուրն ունի յերկու թեփուկ, վորոնք կոչվում են ծաղկի թեփուկներ։ Սրանցից արտաքինը յերբեմն վերջանում է մի յերկար և սուր ծայրով, վոր կոչվում է բիս։ Յորենի միքանի տեսակներ քիստ չունեն։ Ծաղկի թեփուկների ներսում գտնվում են յերկու այլ թեփուկներ։ Սրանցից հետո գալիս են արդեն առեջները. սրանք յերեք հատ են և ունեն յերկար և մեծ փոշանոթներ։ Առեջների թելիկները բարակ են, այդ պատճառով ել մեծ փոշանոթները շարունակ ճոճվում են։ Ծաղիկն ունի միայն մի վարսանդ, վորի սերմնարանի մեջ կա մի սերմնաբողբոջ։ Սերմնարանի վրա նստած են յերկու հատ փետրավոր սպիներ։ Ծաղիկը փոշոտվում է քամու միջոցով։ Այդ և պատճառը, վոր նա չունի վոչ վառ գույներ, վոչ բուրմունք և վոչ ել մեղրահյութ։ բայց ունի առատ չոր ու մանրիկ ծաղկափոշի, վոր քամուց հեշտությամբ տարվում է զանազան կողմեր և մեծ փետրավոր սպիներ, վորոնց վրա ծաղկափոշին հեշտությամբ կարող են ստել։

Պտուղը:—Փոշոտումից հետո ծաղկի թեփուկները ծածկվում են. նրանց պաշտպանության տակ զարգանում ու հասունանում են ցորենի սերմն ու հատիկը։ Յերբ վերջինս հասունանում է, թեփուկները չորանում, բացվում են և հատիկն ընկնում է հողի վրա։

Յորենը պատկանում է խոտազգիների ընտանիքին։ Այդ ընտանիքին են պատկանում նաև մեր բոլոր հացա-

բույսերը՝ գարին, վարսակը, նաճարը, կորեկը, յեզիպտացորենը, ապա մեր դաշտերը ծածկող խոտերի՝ մեծ մասը և տաք տեղերում բանող բրինձն ու շաբաթեղեգը։

ՇԱՄԻ

Շամին տարածված բույս ե. շատ տեղերում կազմում են նա մեծ անտառներ։


Արմատը:—Շամին ունի գլխավոր արմատ, վոր յերկարում, խորանում է հողի մեջ և ծծում խոր շերտերում յեղած ջուրը։ Այդպիսի արմատով նա լավ ամրանում է նույնիսկ վիսրուն ավազային հողում և դիմանում ամենառուժեղ քամիներին անգամ։ Գլխավոր արմատից դեպի ամեն կողմ դուրս են գալիս բազմաթիվ ճյուղեր, վորոնք իրենց հերթին դարձյալ ճյուղավորվում են։ Շնորհիվ այդպիսի արմատների կարողանում է նա բավարար չափով ջուր ու սննդարար նյութեր ծծել նույնիսկ անբերը և չոր հողից։ Այդ և պատճառը, վոր նա բանում է այնպիսի տեղերում, ուր ուրիշ ծառեր յերբեք չեյին կարող աճել։

Բուն ու նյուղերը:—Մատաղ բունն ու ճյուղերը ծածկված են կարմրավուն կեղևով, վոր հետագայում հետրզնետե գորշավուն գույն և ստանում և ճեղքճեղքվում։ Թե բունը և թե ճյուղերն ունեն իրենց մեջ առատ ճյութ։ Ինց վորեւ մաս այս կամ այն պատճառով վնասվում է, այդ ճյութը դուրս է գալիս և ծածկում վնասված տեղը. այդպիսով վերքը փակվում և սունկերը չեն կարողանում մանել նրա մեջ և փուռման առաջ բերել։

Բաց տեղում աճող շամին շատ չի բարձրանում և հենց ներքեցից արձակում է յերկար ճյուղեր, իսկ անտառում, ուրիշ ծառերի արանքում, ընդհակառակը, բարձրանում է և շատ բարձր, լինում է բարակ և բոլորովին զուրկ ճյուղերից, միայն վերևում կազմում է մի փոքրիկ ճյուղավոր գագաթ։ Պատճառը հասկանալի յե. բաց տեղում ճյուղերն ամեն կողմից լույս են ստանում, դրա համար ել ազատ կերպով զարգանում են, մինչդեռ անտառում լույս ստացվում է միայն վերևից և նա ձգտում է

վեր, դեպի այդ լույսը, կազմելով այնտեղ իր ճյուղավոր գագաթը։ Վերջինս այնքան խիտ է լինում, վոր լույսը չի թափանցում ներքեւ, այդ եւ պատճառը, վոր ներքեռում յեղած ճյուղերը մնալով առանց լույսի՝ չորանում, թափվում են։

Տերեվները։—Շամու տերեներն ասեղի նմանություն



Շամի.

- 1) ճյուղն իզական ծաղիկներով։ 2) ճյուղն առական ծաղիկներով։ 3) չառաւացած կոճը։ 4) Կոճը բացված բեկուկներով։ 5) Թեկուկը յեկու սերնարորդներով։ 6) Թեկուկը ներսից յեկու սերմերով։ 7) Նույնը դրսից 8) Ներմարդը։ 9) Սերմ առանց բեկի։ 10) Թեկի ներմարդ սար։ 11) Առական ծաղիկներով։ 12) Մաղկանուու հատիկ։ 13) Կրտմեց էիչ վերել։ իզական կոճը։ 14) Շամու ծիլը։ 15) Ասեղնաձև ներվները, ձախ կողմուն միջակտուրը։

ունեն, դրա համար ել կոչվում են ասեղնաձեվ։ Նրանք նստած են ճյուղերի վրա զույգ-զույգ։ Ունեն փոքր մակերևույթ և ծածկված են հաստ ու կոշտ մաշկով։ Շնորհիվ տերեների այդ հատկությունների՝ շամին շատ քիչ ջուր եւ գոլորշիացնում, վորով և կարողանում եւ աճել սույնիսկ շոր ավաղային տեղերում։ Շամու տերեներն առանձ են 2—3 տարի։ Նրանք թափվում են մաս-մաս, դրա համար ել տարվա ամբողջ ընթացքում շամին մնում եւ կանաչ և կոչվում եւ մօտականաչ։

Ծաղիկներ։—Շամին յերկու տեսակ ծաղիկներ եւ տալիս՝ առեշագոր և վարսանդագոր։ Սրանք գտնվում են միւնույն ժամանակում վրա, դրա համար ել շամին համարվում եւ միատեսն բույս։ Առեշագոր ծաղիկները կազմում են ծաղկեփնչեր։ Յուրաքանչյուր ծաղկեփունջ բաղկացած եւ զլիագոր ծաղկակոթունից և նրա վրա նստած բաղմաթիվ գեղին գույնի առեջներից։ Առեշները վերջանում են յերկուական փոշանոթներով, սրանք հասունացած ժամանակ պատռվում են և ցրվում ծաղկափոշին, վոր մանր, չոր և չափազանց թեթև լինելու պատճառով քամուց հեշտությամբ տարվում եւ զանազան կողմեր։

Վարսանդագոր ծաղկեփնչերը կազմում են փոքրէկ կարմրագուն գույնի կոներ, վորոնք նստած են լինում մատաղ ընձյուղների ծայրերին։ Կոները բաղկացած են կարճ ծաղկակոթունից և նրա վրա նստած կարմիր մսալից թեփուկներից։ Յուրաքանչյուր թեփուկի յետեռում, հիմքի մոտ գտնվում եւ յերկու հատ մերկ սերմնաբողբոջ։ Սրանք սերմնարանի մեջ չեն դանդում։ Այդպիսի սերմնաբողբոջներ ունենալու պատճառով՝ շամին կոչվում եւ մերկասերմ բույս, մինչդեռ մյուս բույսերը, վորոնց սերմնաբողբոջները գտնվում են սերմնարանի մեջ, կոչվում են ծածկասերմ։ Փոշոտաման ժամանակ կոնի թեփուկները բացվում են և ողի մեջ այս ու այն կողմը տարվող ծաղկեփոշին նստելով սերմնաբողբոջների վրա՝ փոշոտում եւ նրանց։ Շամին, ասել ե, փոշոտվում եւ քամու միջոցով։ Վորպեսզի այդ փոշոտումն ապահովվի, շամին տալիս եւ ահազին քանակությամբ ծաղկափոշի։

Կոնք յեզ սերմերը: — Փոշտառումից հետո կոների թեփուկները փակվում են և նրանց ծայրերը ծածկվում են խեժով, այնպես վոր այլիս վոչ մի բաց տեղ չի մնում: Այդ թեփուկների տակ այնուհետև սկսում են զարգանալ սերմերը. սրանք զարգանում են շատ դանդաղ և հասունանում են միայն տարի ու կեսից հետո: Եյդ ժամանակավա ընթացքում կոներն աճում, մեծանում են, փայտանում և շատ ամրանում: Սերմերը հասնելուց հետո, կոների թեփուկները կրկին բացվում են և նրանց արանքից սերմերը դուրս գալով՝ թափվում են: Այդ սերմերն ունեն բարակ թեփիկներ, դրա համար ել քամին քշում տանում ե նրանց հեռավոր տեղեր:

Շամին պատկանում ե ասեղնաևերեվների ընտանիքին, Այդ ընտանիքին են պատկանում նաև լեղմնին, սոճին, ցրտենին և այլն:

ՍՊՈՐԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

Մեր անցած բոլոր բույսերը պատկանում եյին ծաղկաբեր բույսերի կարգին. նրանք տալիս եյին ծաղկներ, ապա սերմեր և բազմանում եյին այդ սերմերով: Ծանթանանք այժմ այս բույսերի հետ, վորոնք չեն ծաղկում, սերմեր չեն տալիս և բազմանում են առանձին տեսակի փոքրիկ հատիկների կամ, ինչպես ասում են, սպորների միջոցով և կոչվում են անծաղիկ կամ սպորատու բույսեր:


Պ Տ Ե Ր

Պտերը բանում ե խոնավ ու ստվերոտ տեղերում, մեծ մասամբ անտառներում:

Կոնդամատը: — Պտերի ցողունը գանգում ե հողի տակ և կոչվում ե կոնդամատ: Նա ծածկված է մեռած տերեների մացորդներով, սևագորշ թեփուկներով և բազմաթիվ թելանման արմատներով: Կոճղարմատը յետից

շարունակ մեռնում, փառում ե, իսկ առջևից՝ աճում, տալով ամեն տարի տերեների նոր վնջեր:

Տերեվիները: — Պտերի տերեները դասավորվում են այն-



Պ տ ե ր.

պես, վար ստացվում ե մի ձաղոր: Այս ե պատճառը, վոր

ծառերի տերենների արանքով անցնող ճառագայթները լուսավորում են նրա բոլոր տերենները հավասար չափով։ Պտերի տերենները մեծ են ու քնքույց։ Յեվ այդ շատ հասկանալի յեւ։ Պտերն աճում ե ստվերոտ ու խոնավ տեղերում։ Սակայն, մեծ ու քնքույց տերենները քամուց հեշտությամբ կարող ելին կոտրվել, պատռվել։ Դրա զեմ տերենները պաշտպանվում են մի հարմարությամբ։ Յուրաքանչյուր տերեն բաժանված է բազմաթիվ տերենինների։ Արանք իրանց հերթին նույնակես բաժանվում են ավելի մանրիկ տերենների կամ մասերի։ Քամին անցնում է այդ մասերի արանքով և տերենին վոչ մի վաստ չի պատճառում։ Պտերի մատաղ տերենը վոլորված է լինում միշտ խխունջի խեցիի նման։ Այդ դրության մեջ հեշտությամբ ե կարողանում հողը ծակել և դուրս գալ լույս աշխարհ, ապա նա շատ քիչ ջուր և գոլորշիացնում, ինչպես վոր թաց փալասը ծալված վիճակում։ Մատաղ տերենը ծածկը ված է շադանակագույն թեփուկներով։ Արանք նույնակես պաշտպանում են տերենը չորանալուց և արտաքին զանագան վտանգներից։

Սպորանօրը։—Պտերի տերենների ներքեմի յերեսների վրա ամառվա կեսերին նկատվում են բազմաթիվ բծեր։ Մըանք սկզբում լինում են բաց կանաչավուն, բայց հետագայում հետզհետեւ սեանում են։ Այդ բծերը դասավորվում են յերկու շարքով՝ յուրաքանչյուր տերենամասի միջին շրի աջ և ձախ կողմերում։

Դիտելով այդ բծերը մանրադիտակով՝ տեսնում ենք, վոր նրանցից յուրաքանչյուրը վոչ այլ ինչ ե, բայց յեթե առանձին ձողիկների վրա նստած քսակների մի ամբողջ կույտ։ Դրսից քսակների այդ կույտը ծածկված է մի թիթեղով, վոր կոչվում է ծածկույք։ Քսակները լցված են բազմաթիվ մանրիկ հատիկներով, վորոնք կոչվում են սպորտներ, զրա համար քսակներն ել կոչվում են սպորտակեր, իսկ բծերը՝ սպորանօրներ։

Պտերը բազմանում է սպորների միջոցով։ Ամառվա վերջերին, յերբ սպորանոթները հասունանում են, սպորապարկները պատռվում են և սպորները դուրս են թափվում։

Սպորները փոքր են և թեթև, այդ պատճառով ել քամուց հեշտությամբ տարածվում են զանազան կողմեր։

Սպորանոթները գտնվում են տերենի ներքեմի յերեսի վրա։ Այդտեղ նրանք պաշտպանվում են անձրիխց։ Կնշանակի, նրանք ել ծաղկի նման պաշտպանվում են զանազան վտանգներից։ Յեվ այդ շատ հասկանալի յեւ, թե ծաղիկները և թե սպորանոթները նույն նպատակին են ծառայում, յերկուսն ել առաջ են բերում նոր բույսեր։

Նախածիլ։—Անտառի հողով լցված ծաղկամանում ցանած սպորները միքանի որից հետո սկսում են ծլել։ Նրանք առաջ են բերում սրտածե տերենիկների նման բույսեր, վորոնք ամրանում են հողի մեջ թելանման արմատներով։ Տերենիկների նմանող այդ բույսերը կոչվում են պտերի նախածիլ։ Նախածիլն արտաքինով բոլորովին նման չե պտերին։ Իսկական պտերն առաջանում է հետո։ Յեվ այդ ահա թե ինչպես։ Նախածիլի ներքեմի յերեսի վրա կան յերկու տեսակի գործարաններ՝ սուր ծայրի մոտ գմբեթածե, լայն ծայրի մոտ՝ շշածե։ Գմբեթածե գործարանը կատարում է ծաղկի առեջների գերը, շշածե՝ վարսանդի։ Յերբ հասունանում է գմբեթածե գործարանը, նրանից դուրս են գալիս առանձին մարմնիկներ, վորոնք նախածիլի ներքեմը պատռող ջրի կաթիլիկ-ների միջով լողալով՝ գնում են դեպի շշածե գործարանը։ Վերջինիս մեջ գտնվում է մի առանձին մեծ բջիջ, վոր կոչվում է ձվարջիք։ Յերբ հասունանում է այս բջիջը, շշածե գործարանի բերանը բացվում է և գմբեթածե գործարանից յեկող մարմնիկը մանելով նրա մեջ՝ միանում է ձվարջիջի հետ։ Կատարվում է, ուրեմն, միշտ նույն գործողությունը, ինչ վոր ծաղկի բեղմափորման ժամանակ։ Այդ միացումը կատարվելուց հետո, նախածիլը սկսում է առաջանալ իսկական պտերը։ Սկզբում իսկական պտերը սիվում է նախածիլի մեջ յեղած նյութերով, բայց հետո առաջ է բերում կոճղարմատ, արձակում է արմատիկներ, բացում է իր առաջին տերենիկը և սկսում է ապրել ինքնուրույն կերպով, իսկ նախածիլը, վոր արդեն իր գերը կատարել վերջացրել է, չորանում, մեռնում է։

Մեր անտառներում բանող պտերը փոքր բույս է, բայց տաք յերկրներում կան 5—6 սաժեն բարձրություն ունեցող պտերներ. սրանք թեպետ ծառի նմանություն ունեն, բայց չնայած դրան, բազմանում են դարձյալ սպորներով:

ՄԱՄՈՒՌ

Մամուռը շատ տարածված բույս է: Բանում ե դաշտերում, անտառներում, լեռների գագաթներին, ճահճներում, ծառերի կեղևների և թե հին տների պատերի ու տանիքների վրա: Նա հաջողությամբ զիմանում ե թե ամառվա յերկարատե յերաշներին և թե ձմեռվա սարսափելի ցրտերին: Այդ ե պատճառը, վոր ապրում ե թե տաք և թե ցուրտ յերկրներում: Հյուսիսային ցուրտ յերկրները մամուռի խական հայրենիքն են:

Մամուռի բազմաթիվ տեսակներից ամենատարածվածը ցանցամամուռն է:

Ցանցամամուռի ցողունն ու ՏԵՐՎԱԿԵՐԸ:—Ցողունն ունի 1—4 վերշոկ բարձրություն և ծածկված ե մուգ կանաչավուն նեղիկ տերեներով: Ներքեսում ցողունը շագանակագույն ե և զուրկ տերեներից. այդտեղ տերեները հետզհետե մեռնում, թափվում են, իսկ նրանց փոխարեն աճում են փոքրիկ բարակ թելիկներ, վորոնք ցանցամամուռի համար արմատի գեր են կատարում: Յեվայդ հասկանալի յե. ինչպես մյուս բոլոր մամուռներն, այնպես ել ցանցամամուռը զուրկ է խսկական արմատներից: Ցանցամամուռի ցողունը կերպից աճում է, ներքեց մեռնում:

Ցանցամամուռի տերենիկները խո-




Ցանցամամուռ.

նավ տեղերում սովորաբար ցողունից հեռացած են լինում, իսկ չոր տեղերում՝ խիտ կերպով նրա վրա նստած. վեցջին ձևով նրանք քիչ ջուր են գոլորշիացնում: Յերբ ընդհանուր թփից պոկում ենք մի հատիկ ցողուն, քիչ անցած նկատում ենք, վոր նրա տերեները նստում են ցողունի վրա, իսկ յերբ նրա ծայրը մտցնում ենք ջրի մեջ, տերեները կրկին իրենց տուածվա դիրքն են ընդունում: Ցանցամամուռը դիմանում է յերկարատե ու ուժեղ յերաշտների: Յերբեմն չորանում ե այսքան, վոր հեղտությամբ կարող ե փշրփել, փոշի դառնալ, բայց նույնիսկ այդ վիճակում, յերբ նրա վրա ջուր ենք սըսկում, նա կրկին կյանք ե ստանում: Զմեռը նրա տերեները չեն թափվում: Նա մշտականաչ բազմամյա բույս է:

Բազմացումը:—Ցանցամամուռը բազմանում է սոլորներով: Ամառվա կեսերին ցանցամամուռի վրա յերեսում են բարակ կարմրավուն թելիկներ, վորոնք վերջնում են փոքրիկ տուփերով՝ ծածկված դեղինմազմզուտ ծածկոցներով: Հեռացնելով այս ծածկ, ցները՝ տակը տեսնում ենք կափարիչներով ծածկված տուփեր՝ լցված մանրիկ սպորներով: Նշանակում ե, այդ տուփերը ցանցամամուռի սպորանոթներն են: Յերբ սպորները հասնում են, ընկնում են տուփերի ծածկոցները, ապա կափարիչները և սպորները քամու միջոցով տարվում են զանազան կողմեր. ընկնելով խօնավ հողի վրա՝ սպորները ծլում են և առաջբերում

1) Ցուփիկը ծածկոցով. 2) Ցուփիկը նման են կափիկը կափարիչով. 3) Ցուփիկը նաև թելերի և տարածվելով գետառանց կափարիչի. Սպորները ցրվում են: Նի վրա՝ մի տեսակ ցանց են կազմում, վորի համար ել մամուռի այդ տեսակը կոչվում է ցանցամամուռ: Թելիկների ներքենի յերեսից դուրս են



Ցուփիկը.

1) Ցուփիկը ծածկոցով. 2) Ցուփիկը նման են կափիկը կափարիչով. 3) Ցուփիկը նաև թելերի և տարածվելով գետառանց կափարիչի. Սպորները ցրվում են: Նի վրա՝ մի տեսակ ցանց են կազմում, վորի համար ել մամուռի այդ տեսակը կոչվում է ցանցամամուռ: Թելիկների ներքենի յերեսից դուրս են

գալիս փոքրիկ բարակ մազեր, վորոնցով նրանք ամրանում են հողում. իսկ վերևի յերեսի վրա տեղ-տեղ դուրս են գալիս բողբոջների նմանվող ուռուցյներ, վորոնք շուտով զարգանում են և առաջ բերում ցանցամամուռի ցողուններ:

Մամուռների նօանակությունը:—Մամուռը, ինչպես տեսանք, աճում է ամեն տեղ: Ճահճում ապրող մամուռի ցողունների ներքնի մասերը մեռնելով՝ կտրվում են և դընում դեպի ցած, ճահճի հատակը: Այդանող շերտերով դարսվում են նրանք իրար վրա, խառնվում տղմի հետ և առաջ բերում մի նյութ, վոր կոչվում է տորֆ: Վերջինիս մեջ յերբեմն պարզ կերպով յերեսում են մամուռի հետքերը: Տորֆը շատ լավ այրվում է, այդ պատճառով ել դործ և ածվում վորպես վառելանյութ:

Մամուռն աճում է նաև մերկ ժայռերի վրա. այդտեղ նա հաճախ ծածկում է ահագին տարածություններ:

Մեռնելով և փտելով այդ ժայռերի վրա՝ առաջ և բերում փափուկ հողի մի բարակ շերտ, վոր գնալով հետքհետե հաստանում է: Հողային շերտի հաստանալուն ոգնում է նաև այն հանգամանքը, վոր քամու բերած փոշու մասնիկներն ընկնելով մամուռի տերեփիկների արանքը՝ մնում են այդտեղ և այլ առաջանում են ցանցամամուռի ցողունները:

Ժայռերը ծածկվում են հողի մի այնպիսի շերտով, վորի վրա այնուհետե աճում են նաև այլ բույսեր: Կնշանակե, մամուռի շնորհիվ մերկ ժայռերը ծածկվում են բուսականությամբ:




Յանցամամուռի նախածիլը.

ա) Սպորը, գորից առաջացել և նոխածիլը. բ) և գ) Բողբոջները, վորոնցից առաջանում են ցանցամամուռի ցողունները:

ԶՐԻՄՈՒՌԵՐ

Կազմությունը:—Գետերում, ճահճներում, լճերում և ծովերում ապրում են կանաչ թելերի նմանող մի տե-



ԶՐԻՄՈՒՆ

Ա.) Ճրիմուռը, Բ) Նրա մի փոքրին մասը (մեծացրտծ): ա) Թշիշը, գ) Թշիշնառանձին. 1 և 2) Կորիզը. 3) Ոսլայի հատիկը. 4) Քլորոֆելի հատիկը. գ) Թշիշի կեսվելը. Ե) Սպորը:

ուակ բույսեր, վորոնք կամ ազատ կերպով լողում են ջրի մեջ և կամ իրենց մի ծայրով կպած են լինում վորհեամուր մարմնի՝ քարի, փայտի և այլն: Այդ բույսերը կոշ-

վում են ջրիմուռներ: Սրանք չափազանց նուրբ կազմություն ունեն: Զրից հանած ժամանակ նրանք իրենց դիրքը չեն կարողանում պահպանել, սակայն այդ նրանց համար վոչ մի նշանակություն չունի, վորովհետևնրանք ջրում են ապրում և ջուրը պահպանում են նրանց դիրքը: Դիտելով մանրադիտակով ջրիմուռը՝ նկատում ենք, վոր նա զուրկ է արմատից, ցողունից և տերեներից և բաղկացած են միայն իրար յետերից շարված բջիջներից: Կան ջրիմուռներ, վորոնց ամբողջ մարմինը բաղկացած են միայն մի հատիկ բջիջոց: Դրանք, ինարկե, չափազանց փոքր են լինում. բայց կան և այնպիսիներ, վորոնք բաղկացած են անթիվ բջիջներից և իրենց մեծությամբ յետ չեն մնում ցամաքային նույնիսկ ամենամեծ բույսերից: Այս վերջին տեսուկի ջրիմուռներն ապրում են մեծ ծովերում ու ովկիանոսներում:

Բազմացումը:— Ջրիմուռը բաղմանում ե սպորներով և կիսվելով: Սպորներն առաջանում են թելերի ծայրերին գտնվող բջիջներում: Նրանք ունեն յերկու հատ բարակ մտրակներ, վորոնց միջոցով շարժվում են ջրի մեջ և վորոշ ժամանակից հետո կանգ առնելով՝ առաջ են բերում առանձին-առանձին ջրիմուռներ: Ջրիմուռը բաղմանում ե կիսվելով. դրա համար բջիջի յերկու կողմերում առաջանում են ակոսներ, վորոնք հետզհետե խորանակվ՝ վերջը բջիջը բաժանում են յերկու մասի. սըրանցից յուրաքանչյուրն այսուհետե աճում, մեծանում ե և իր հերթին կրկին բաժանվում:

Զրիմուռների նշանակությունը, — Կենդանիներն իրենց գոյությունը պահպանում են կենդանական և բուսական նյութերով: Այն կենդանիները, վոր կեր են դառնում ուրիշ կենդանիների, սնվում են միայն բույսերով, ուրեմն վերջի վերջու բոլոր կենդանիներն իրենց կյանքը հիմնում են բույսերի վրա: Ջրիմուռները ջրային բույսերի մեջ առաջին տեղն են բռնում. կնշանակե, նըրանք ջրային կենդանիների կյանքի գլխավոր աղբյուրն են կազմում:

Յեթե ջրով լիքն ամանի մեջ գցենք միքանի ջրի-

մուռ և դնենք արկի տակ, կտեսնենք, վոր նրանցից բարձրանում են փոքրիկ պղպջակներ: Այս պղպջակներով հեռացող գազը յեթե հավաքենք և մեջը մտցնենք մի այրվող փայտիկ, վերջինս խկույն կբոցավառվի: Սա արդին նշան ե, վոր ջրիմուռներից բարձրացող գազը թըթվածին ե: Ուրեմն, ջրիմուռները տալիս են ջրային կենդանիներին թթվածին, վոր անհրաժեշտ են նրանց շնչառության համար:

Մի այլ փորձ կա: Յեթե այդ անոթի մեջ, վորտեղ դառնվում են ջրիմուռները, գցենք մի քիչ նեխվող կենդանական նյութ, վորոշ ժամանակից հետո կտեսնենք, վոր այդ նյութը անհետանում ե և ջրից այլևս հոտ չի գալիս: Պարզ ե, վոր ջրիմուռներն այդ նյութը գործադրում են իրենց համար իբրև սնունդ: Ջրում ամեն որ ահազին թփով կենդանիներ են մեռնում, և յեթե դրանց մարմինների նեխսումից ջրերը չեն ապականվում, պատճառը ջրիմուռներն են, վորոնք շարունակ մաքրում են ջուրը: Առանց ջրիմուռների՝ ծովերում ու ովկիանոսներում կենդանական կյանք չեր կարող լինել:


ՇԱՄՊԻՆՈՆ

Շամպինիոնը դուրս ե գալիս գետնից ամառը կամ աշնանը մարգագետիններում և դաշտերում գլխավորապես ճանապարհների մոտերքը: Նա նման է հովանոցի և բաղկացած ե կոթից ու գլխադրից: Գլխադրի ներքին յերեսի վրա կան բազմաթիվ թիթեղիկներ, վորոնք դուրս են գալիս կոթի մոտից և գնում են դեպի գլխադրի յեղրերը: Սրանք սկզբում վարդագույն են լինում, բայց հետո մղում են և վերջն ել սևանում: Այդ գույնով շամպինիոնը զանազանվում ե մյուս սունկերից:

Գետնից դուրս յեկող շամպինիոնը նման է լինում փոքրիկ գնդի, բայց հետո, յերբ մեծանում ե, նըրա վրա հետզհետե նկատելի յեն դառնում կոթին ու գլխադրիը: Թիթեղիկները գլխադրի տակ դեռ չեն յերեսում. նըրանք ծածկված են մի թաղանթով, վոր մի յեղով կպած ե

կոթին, մյուսով՝ գլխադրի ծայրին։ Այդ թաղանթի տակ թիթեղիկները պաշտպանվում են զանազան վտանգներից։ Յերբ շամպինիոնը հասնում է, թաղանթը պատռվում և և թիթեղները բացվում են։

Յեթե դիտենք մանրագիտակով թիթեղիկները, կը տեսնենք նրանց վրա բազմաթիվ թելիկներ, վորոնցից յուրաքանչյուրն ունի իր վրա յերկու հատ սպոր։ Յերբ հասնում են այդ սպորները, պոկվում են թելիկներից և քամու միջոցով տարվում զանազան կողմեր։ Քամին, ինարկե, շատ անգամ սպորներն ածում են այնպիսի տեղեր,



Շամպինիոնի զարգացումը.

Հողի մեջ գտնվում են բելեր, 1—5 (լիվ 7) Շամպինիոնը դրսից, 4—5 Շամպինիոնը յերկայնութամբ կտրված։

ուր նրանք յերբեք աճել չեն կարող։ Հենց այդ եւ պատճառը, վոր շամպինիոնը վերցնում է անթիվ անհամար թփով սպորներ։ Յեթե գլխադրի ներքեսը հարթ լիներ, այդքան շատ սպորներ եր վրա չեր կարող տեղափորել։ Վրա համար ել առաջացել են թի-


թեղիկները, վորոնք չափից դուրս մեծացնում են նրա մակերեսույթը։ Քամուց կարող են տարվել միայն չոր սպորները և այս եւ պատճառը, վոր նրանք դտնվում են գլխադրի ներքեսի յերեսի վրա, վորտեղ նրանք պաշտուակած են անձրևից։

Յեթե ըանդենք շամպինիոնի տակի հողը, կտեսնենք այստեղ սպիտակ թելեր, վորոնք այս ու այն կողմը տարածվելով՝ մի ամբողջ ցանց են կազմում։ Շամպինիոնը կպած է այդ թելերին։ Շամպինիոնն ու այդ թելերը նույն բույսի տարբեր մասերն են։ Յերբ հողի տակ գտնվող այդ թելերը հասնում են վորոշ մեծության, նըրանց վրա դուրս են գալիս ունկեր, վորոնք սպորներ տալով մեռնում են, բայց շուտով դուրս են գալիս նորերը և այդպես շարունակ։ Հողի տակ գտնված թելերն, ուրեմն, նման են պաղատու ծառերին, իսկ «սունկերը» նրանց պտուղներին, կնշանակե, իսկական բույսը հենց այդ թելերն են, իսկ այն, ինչ մենք սունկ ենք ասում, նրա սպորանոթն ե, վոր սպորները ցըելու համար դուրս դուրս ե գալիս գետնի յերեսը։

Շամպինիոնի թե թելերը և թե սպորանոթը գուրկ են քլորոֆիլի հատիկներից։ Վրա համար ել ողի և հողի մեջ դանված նյութերից նրանք ինքնուրբույն կերպով սընունդ չեն կարող պատրաստել նրանք մնվում են միայն պատրաստի նյութերով։ Այդ եւ պատճառը, վոր նրանք աճում են միայն այնպիսի տեղերում, ուր կան փառղ զանազան մարմիններ։ Շամպինիոնը մարդիկ գործ են ածում կերակը մեջ։ Գործածական են նաև մի շարք այլ սունկեր են։ Սակայն, կան բազմաթիվ թունավոր սունկեր, վորոնց գործածությունը կարող ե վոչ միայն ծանր հիվանդություններ, այլ և նույնիսկ մահ առաջ բերել։

Բորբոս։—Մութ, խոնավ, տաք և թաքմ ողէց զուրկ տեղում փափուկ հացը, քաղցրավինիքը և այլն ծածկվում են մի բարակ սպիտակ խավով կամ, ինչպես ասում են, բորբոսում են։ Բորբոսումն առաջանում է բուրս կոչվող բույսից։ Սա նույնպես սունկ եւ Մանրադիտակի տակ դիտելով բորբոսը՝ նկատում ենք, վոր նա ևս շամ-

պինիոնի նման ունի ճյուղավորված թելեր։ Այդ թելերի վրա տեղակաղ բարձրանում են զլխիկներով վերջացող ձողիկներ։ Դըլխիկները լցված են ձվածն սպորներով, ուրեմն, զըրանք բորբոսի սպորանոթներն են։ Յերբ վերջիններս հասունանում են, պատռվում են և ցրվում սպորները։ Սպորները փոքր են, թեթև և չոր, դրա համար ել քամուց տարվում են զանազան կողմեր։ Ողը լիքն ե այդպիսի սպորներով։ Այդպահոր սպաներով (մեծացած)։ Սպորներով։ Այդ ե պատճառը, վոր մութ ու խոնավ տեղում դրած մթերքները շուտով ծածկվում են բորբոսով։



Բ Ո Ր Բ Ո Ս.


1) Թիթիկների ցանցը յեկ սպորանօրներ։

2) Սպորանօրը սպաներով (մեծացած)։

Ք Ա Ր Ա Ք Ո Ս

Պատերի, ծառերի, քարերի և ժայռերի վրա հաճախ լինում են գեղնավուն, կանաչավուն, սպիտակավուն կամ գորշավուն թիթեղիկների ձևով մի տեսակ բույսեր, վորոնք կոչվում են քոսեր կամ քարաքոսեր։ Յեթե պոկենք նրանցից մի թիթեղիկ և դիտենք մանրագիտակով, կնկատենք, վոր սունկի ուես բազկացած ե նաև անդույն թելիկների մի հյուսվածքից, բայց պարունակում ե իր մեջ բազմաթիվ մանրիկ կանաչ մարմիկներ, վորոնք շատ նման են ջրիմուներին։ Այդ պատճառով ել դիտնականները սկզբում չելին իմանում՝ նրանք սունկեր են թե ջրիմուներ, Յեկիսկապես, ինչպիս կարող են նրանք սունկեր լինել, քանի վոր իրենց մեջ քլորոֆիլ են պարունակում, մինչդեռ սունկերը բոլորովին դուրկ են դրանից, և իրենց կերակուրը ստանում են ուրիշներից

պատրաստի դրության մեջ։ Կամ ինչպիս կարող են նրանք ջրիմուները լինել, քանի վոր ջրիմուները ջրառատ տեղերում են լինում,




Փարախոսի թիթեղիկի կտրվածքը.

1) Սունկի բելք, 2) Ջրիմունը (խիս մեծացած)։

սունկեր և ջրիմուներ։

միասին։ Ուրեմն, քարաքոսը մի բույս չե, այլ յերկուսը, վորոնք միացել են միմյանց հետ և այդ ահա թե ինչուտ ջրիմուները, իբրև քլորոֆիլ ունեցող բույսեր, կարողանում են պատրաստել իրենց համար անհրաժեշտ նյութեր, իսկ սունկերը, վորոնք ուրիշների պատրաստած նյութերից պիտի ոգավեն, ընկերուկցելով ջրիմուներին՝ ոգտված են հենց նրանց պատրաստի նյութերից։ Ուրեմն, սունկի համար ջրիմունի հետ ընկերանալը՝ շատ ձեռնատույի։ Յայց պակաս ձեռնատու չե և ջրիմունի համար սունկի ընկերակցությունը։ Սունկը առլիս ե նրան նախ՝ ջուր, ընկերակցությունը։



Քարախոսը ծառի նյուղի վրա.

վորի մեջ լուծված զանազան սննդարար աղեր են գտնվում, յերկորդ՝ պաշտպանում ե նրան չորանալուց և յերրորդ՝

Կպչելով ծառի կեղևի կամ կյանքի համար մի այլ հարմարավոր տեղի՝ իր մարմի մեջ ապաստան եւ տալիս նըրան։ Այսպիսով տեսնում ենք, վոր սունկն ու ջրիմուռը Երար փոխադարձ ոգտակար լինելով՝ կարողանում են պահպանել իրենց կյանքը։ Հակառակ զեպքում, կասկած չկա, վոր վոչ ջրիմուռը և վոչ ել սունկը կարսղ եր ապրել այնպիսի տեղերում, ուր այժմ աճում են այնքան հաջող կերպով քարաքոսները։

Քարաքոսների վրա հաճախ լինում են նարնջագույն բաժակիներ։ Այդ բաժակիների մեջ առաջանում են սունկի մանրիկ սպորները։ Այս սպորները հասունանալուց հետո՝ քամու միջոցով ցրվում են զանազան կողմեր և յերբ ջրիմուռ են գտնում՝ ծլում են և առաջ բերում քարաքոս։

ՔԱՐԱՔՈՍՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.— Մամուռների նըման, քարաքոսները նույնպես տանելով չորությունն ու յերաշտ յեղանակները, կարողանում են աճել մերկ ժայռերի և ավազոտ տարածությունների վրա և ժամանակի



Յեղանամուռ (բնական մեծությամբ)։

Ընթացքում իրենց մեռած մասերից և քամու բերած փոշիներից առաջ են բերում այդպիսի տարածությունների վրա պարարտ հողի մի շերտ, ուր այնուհետեւ շատ

հաջող կերպով աճում են նաև այլ ավելի բարձր կազմություն ունեցող բույսեր։ Այսպիսով նրանք մերկ տարածությունները հետզհետեւ փոխարկում են բույսերով հարուստ վայրերի։


ՅԵՂԱՄԱՄՈՒՐԻՑ.— Քարաքոսների մի տեսակը, վոր կոչվում է յեղնամամուռ, աճագին նշանակություն ունի հյուսիսային ցուրտ յերկրներում ապրող մարդկանց համար։ Նա սպիտակ-գորշավուն գույնի փոքրիկ, ճյուղավոր մի թփիկ եւ ծածկում է այդ յերկրներում հաճախ հըսկայական տարածություններ։ Յեղնամամուռը հյուսիսային յեղջերուի միակ կերակուրն է կազմում յերկարատեսական մանրադիտակով, այն ևս միքանի հարյուր, յերբեմն նույնիսկ միքանի հազար անդամ մեծացնելուց հետո։ Յեթե 50,000 հատ բակտերիաներ իրենց յերկայնությամբ շարենք մեկը մյուսի յետևից, հազիվ թե մի վերշոկ տեղ բռնեն։ Նրանք ունեն շատ հասարակ կազմություն։ Յուրաքանչյուր բակտերիա պրոտոսլազմայի մի փոքրիկ մասնիկ եւ՝ շրջապատված բարակ թաղանթով։ ուրեմն, բակտերիայի մարմինը բաղկացած է մի հատիկ բջնիւց։ Բակտերիաներն ունեն տարրեր ձևեր։ Նրանց մի մասն ունի գնդի ձև, մյուսը՝ ձողիկի, յերրորդն ել՝ վոլորուն թելիկի ձև և այլն։

Քազմացումը.— Բակտերիաները բազմանում են բաժանման միջոցով։ Յերբ հասնում են նրանք իրենց կատարյալ մեծության, մեջտեղից կիսվում են և դառնում յերկուսը։ Արանք մեծանալով, իրենց հերթին դարձյալ կիսվում են և այդպես շարունակ։ Նպաստավոր պայման-


ներում, այսինքն յերբ կա սնունդ, տաքություն և խո-
նավություն, բակտերիաները բազմանում են շատ արագ
կերպով։ Այդպիսի պայմաններում մի որդա մեջ մի հատ
բակտերիայից կարող են առաջանալ հաղարավորներ, իսկ
յերբ պայմաններն աննպաստ են, այսինքն յերբ վոչ
տաքություն կա, վոչ խոնավություն և վոչ ել սնունդ
նրանց համար, այն ժամանակ նրանք վոչ միայն այլևս
չեն բազմանում, այլ և ծածկվում են ամուր պատյանով
և, առանց վորեւել կյանքի նշան ցույց տալու, մնում են
ամբողջ տարիներ։ Այս վիճակի մեջ գտնվող բակտերիա-
ներն ընկնելով հարմար տեղեր՝ կրկին կյանք են ստանում
և սկսում բազմանալ:

Բակտերիաները զուրկ են քլորոֆիլից, դրա համար
ել սնվում են սունկերի նման պատրաստի մննդարար
նյութերով։

Նեխումն առաջ բերող բակտերիաներ,— Յոլոր գոր-
ծարանավոր մարմինների նեխումը կամ փառումն առաջ
են բերում բակտերիաները. սրանք մտնելով մեռած կեն-
գանիների և բույսերի մարմինների մեջ՝ արագ կերպով
բազմանում են և սնվելով նրանց մեջ գտնված նյութերով՝
քայլայում են այդ նյութերը և այդպիսով առաջ բերում
նեխումն։ Վոր նեխումն խկազես բակտերիաներն են ա-
ռաջնում, հաստատվում են ետևյալ փորձերով։ Վերցնենիք
յերկու անոթ, լըց-
նենք ջրով և յեր-
կուսի մեջ ել գը-
ցենք մաի կտոր-
ներ։ Այսուհետեւ
մեկը թողնենք այն-
պես, ինչպես յեղել
ե, մյուսը՝ լավ յեփ
տանք և իսկույն
բակտերիաներ։



1.



2.

Բակտերիաներ։
բերանը փակենք։ 1) Քացախի բակտերիաներ։
Միքանի որ անցած՝
կտեսնենք, վոր առաջինի մեջ ջուրը հոտել ե, իսկ մյուսի
մեջ մնացել ե նույնը, ինչպես փորձի սկզբում յեղել ե։

Լավ յեփ տալով և անոթների մեջ անմիջապես փակելով՝
փառող նյութերը կարելի յե պահել նույնիսկ տարիներ։
Պատճառը հասկանալի յե։ Յեփ տալով մենք ստանում ենք
նյութի մեջ յեղած բակտերիաները, իսկ փակելով՝ թույլ
չենք տալիս, վոր դրսից նորերը մտնեն ներս։ Բաց ա-
նոթի մեջ, սակայն, բակտերիաներն արագ կերպով բազ-
մանում են և առաջ բերում նեխումն։ Յեթե չլինելին
բակտերիաները, կնշանակե, բնության մեջ տեղի չեր
ունենա նեխումն։ Սրա հետևանքը կլիներ այն, վոր մե-
ռած կենդանիների ու բույսերի մարմինները կմնային
անվտանգ վիճակի մեջ և կարճ ժամանակի ընթացքում
աշխարհս կլցվեր կենդանիների և բույսերի դիակներով։
Շարժումն այդ ժամանակ աշխարհում անհնարին կդառ-
նար։ Բայց այդ դեռ բոլորը չեւ նեխելով մարմինները՝
նրանք քայլայում են նյութերը և փոխարկում ավելի
պարզ նյութերի, այն եւ ողի, ջրի և հողի, այսինքն այն-
պիսի նյութերի, վորոնցից հետո բույսերը կարող են
սնունդ ստանալ։ Ուրեմն, նեխման միջոցով բնության
մեջ կատարվում է նյութերի շրջանառություն, վորով և
պահպանվում եւ կյանքը։

Կատարենք և մի այլ փորձ։ Վերցնենք յերկու շիշ,
յերկուսն ել լցնենք գինով, մեկը թողնենք բաց, իսկ
մյուսն յեփ տանք և բերանը պինդ փակենք։ Վորոշ ժա-
մանակից հետո բաց շիշ գինին կսկսի թթվել, քացախել,
մինչեռ մյուսի մեջ՝ կմնա անփոփոխ նույնիսկ տարի-
ների ընթացքում։ Պատճառը դարձյալ բակտերիաներն են։
Բակտերիաների միջոցով են թթվում կաթը, վարունգը,
կաղամբը և այլն։ Կնշանակե, բակտերիաները վոչ միայն
նեխումն են առաջ բերում, այլ և թթվումն կամ խմորումն։

Մակարույծ բակտերիաներ։— Կան բակտերիաներ,
վոր ապրում են կյանք ունեցող մարմինների մեջ։ այդ-
պիսիները կոչվում են մակարույծ բակտերիաներ։ Սրանք
մտնելով կենդանիների կամ մարդու մարմինը՝ արագ
կերպով բազմանում են և առաջ բերում բազմազան հի-
վանդություններ։


Թոքախտը, վորից յուրաքանչյուր տարի ահագին թվով

մարդիկ են մեռնում, առաջանում են ձողիկի ձև ունեցող միտեսակ բակտերիայից. յերեխաների շրջանում առածված դիֆտերիտն ես բակտերիայի միտեսակի գործ ե, վոր նույնպիս ձողիկի ձև ունի, բայց յերկու անգամ ավելի հաստ ե, քան թոքախտինը. Բակտերիաներն են առաջ բերում մարդկային զոհեր են տառում. Կենդանիների մեջ տարածված վարակիչ հիվանդություններն ես բակտերիաներն են առաջ բերում:

Ի՞նչպես զեօք Եղիսակական ՎԱԿԱՏՐԻԱՆԵՐԻ ՎԱԿԱՏՐԻԱՆԵՐԻ ՄԱՐԴԿԱՅԻ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՏԻՄՈՒՄ:— Բակտերիաները տարածված են ամեն տեղ. Կը բանցից պաշտպանվելու համար պետք է աշխատել, ինչքան կարելի յե, մաքուր մնալ. Պետք է մաքուր պահել այն ամանները, վորոնց մեջ կերակուր ենք պատրաստում կամ կերակուր ենք պահում, պետք է մաքուր պահել և սենյակները, բակը, արտաքնոցը, խոհանոցը. Մեծ ուշադրություն պիտի դարձնել նաև հագուստի, սպիտակեղենի և մարմնի մաքրության վրա:



Խոլերայի բակտ.



Չումայի բակտ.

Դիֆտերիտի բակտերիա. Դիֆտերիան կարելի յե, մաքուր մնալ. Պետք է մաքուր պահել այն ամանները, վորոնց մեջ կերակուր ենք պատրաստում կամ կերակուր ենք պահում, պետք է մաքուր պահել և սենյակները, բակը, արտաքնոցը, խոհանոցը. Մեծ ուշադրություն պիտի դարձնել նաև հագուստի, սպիտակեղենի և մարմնի մաքրության վրա:

Բակտերիաները,

Նրանցից շատերը մեռնում են արդեն $60-90^{\circ}$ բարեխառնության մեջ: Այդ պատճառով ել յեթե միս, կաթ կամ միրգ ենք ուզում յերկար ժամանակ պահել, պետք ե յեփ տանք և ապա անմիջապես ամուր ծածկենք, վորպեսզի դրսից նոր բակտերիաներ չմտնեն մեջը:

Բակտերիաները առանց խոնավության չեն կարող ապրել, դրա համար ել լավ չորացրած ձուկը, միսը, միրզը չեն փչանում:

Բակտերիաների վրա սպանիչ ազդեցություն ունեն միքանի գեղեր, որինակ, կարբույան թթուն, սուլեման և այլն. Աղի թանձր լուծվածքը նույնպես նման ազդեցություն ունի: Մարդիկ այդ վաղուց են հասկացել և ձուկը, միսը վորոշ ժամանակ պահելու համար միշտ աղով են անում: Մուխը նույնպես վոչչացնում է բակտերիաներին:

Գիտնականները գտել են, վոր բակտերիաների վրա սպանիչ ազդեցություն ունեն նաև արեգակի ճառագայթները. Այդ պատճառով ել պետք ե աշխատել բնակվել այնպիսի տեղ, ուր սենյակների մեջ առատ ճառագայթներ են ներս մտնում, իսկ յեթե այդ հնարավոր չե, ապա պետք ե կարասիները, շորերը և անկողինները շուտ-շուտ արելի տակ հանել:



911

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՍՈՒՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Դասագրին

№ 3

Գինը

1. Սուրխաթյան—Գրական գոհարներ (քրիստոնմատիա) 3 ա. — 4.
2. Լ. Ն. Նիկոնով—Բույսի կյանքը (պարզ փորձերով և
12 նկարով), թարգմ. Ա. Տ.-Պ. 40 կ.
3. Աօխատանքի դպրոց (մայրենի լեզվի դասագիրք), Բ. տարի 60 կ.
4. Դեպի լույս (այբբենարան հասակավորների համար), կազմեց
Հովհաննես Տեր-Միրաքյան. — 20 կ.
5. Մ. Աբեղյան—Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության 8 կ.
6. Ինչպես կազմել հերթարիում—ըստ Նիկոնովի կազմեց
Ա. Մուշեղյանց. — 10 կ.
7. Ռ. Գաբրիելյան—Բնագիտական քարտեզներ, մասն Ա,
Անկենդան բնություն — 40 կ.
8. Նույնը—մասն Բ., Բույսի կյանքը — 40 կ.
9. Վ. Կեմպել—Զննական յերկրաչափություն. թարգմ.
Հ. Նավակատիկյան 2 ա. —
10. Դասընկեր (մայրենի լեզվի դասագիրք), Ա. տարի. 50 կ.
11. Գ. Ռուսնով—Մանկական ուսուցիչ, ասորեն դասագիրք.
Ա. տարի — 25 կ.
12. Նույնը—Բ. տարի — 40 կ.
13. Գ. Եղիլյան—Աշխատանքի դպրոցը (ձեռնարկ) — 50 կ.
14. Ռ. Մելիքյան—Դպրոցական յերգեր, Ա. մաս 1 ը. —
15. Նիկ. Սարգսյան—Դասագիրք աշխարհագիտության,
մասն Գ. Բուսաբանություն 75 կ.

Երազրաներ.

1. Որինակելի ծրագիր պատմության
2. Որինակելի ծրագիր արվեստի
3. Որինակելի ծրագիր մաթեմատիկայի
4. Որինակելի ծրագիր աշխարհագիտության
5. Որինակելի ծրագիր մայրենի լեզվի:

Գինը 75 կ.

Եռյու տեսած գրերը ծախվամ են Պետնաշտի գրախանութում,
Սբովյան փող, Յերեվան,

318

2013

